

ՀՅՈՒՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Յ ՈՒ Մ Ն Ս Ա Փ Ա Յ Լ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՐԵԳԻՐՔ 2017

ԵՐԵՎԱՆ

ՀՅՈՒՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2017

*Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի
գիտական խորհուրդը*

Գլխավոր խմբագիր՝ Ճուղուրյան Ա.Գ. (տնտ. գիտ. դոկ.)

Խմբագրական խորհուրդ

Մակիջյան Բ.Մ. (մանկ. գիտ. թեկ.), Ալավերդյան Ա.Ս. (բան. գիտ. թեկ.), Ասատրյան Գ.Ե.
(փիլ. գիտ. դոկ.), Ավետիսյան Ս.Ս. (տնտ. գիտ. դոկ.), Երիցյան Ս.Ս. (բան. գիտ. դոկ.),
Խեչոյան Ա.Ա. (իրավ. գիտ. թեկ.), Մարգարյան Յ.Ա. (տնտ. գիտ. դոկ.), Ներսիսյան Ա.Ա.
(պատմ. գիտ. դոկ.), Սարգսյան Ս.Թ. (պատմ. գիտ. դոկ.)

Հյուսիսսփայլ. գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ա.Գ. Ճուղուրյան և
նրիշ: Գլխ. խմբ՝ Ա.Գ. Ճուղուրյան,- Եր.: “Հյուսիսային համալսարան” հրատ., 2017, 120 էջ:

© ՏՀյուսիսային համալսարանի հրատարակչություն, 2017 թ.

СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ
NORTHERN UNIVERSITY

ЮСИСАПАЙЛ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ЕЖЕГОДНИК

2017

Главный редактор Джугурян А.Г. (доктор экон. наук)

Редакционная коллегия

Макичян Б.М. (канд. пед. наук), Аветисян С.С. (доктор экон. наук), Алавердян А.С. (канд. филол. наук), Асатрян Г.Е. (доктор филос. наук), Ерицян С. С. (доктор филол. наук), Марзпанян А.А. (доктор экон. наук), Нерсисян А.А. (доктор ист. наук), Саргсян С.Т. (доктор ист. наук), Хечоян А.А (канд. юр. наук)

HYUSISAPAYL

Collected Scientific Articles

YEARBOOK

2017

Editor-in-chief: Tshuguryan A.G. (doctor of econ. science)

Editorial Collegium

Makichyan B.M. (PhD in Pedagogical), Alaverdyan A.S. (PHD of Philology), Asatryan G.E. (Doctor of Science in Philosophy), Avetisyan S.S. (Doctor of Science in Economy), Eritsyan S.S. (Doctor of Science Philology), Khechoyan A.A. (PHD of Law), Nersisyan A.A. (Doctor of Science in History), Marzpanyan A.A. (Doctor of Science in Economy), Sargsyan S.T. (Doctor of Science in History)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	7
ՀԵՂԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ	7
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ	16
ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ	16
ՀԱՇՎԱՊԱՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	27
ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ	27

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

THE INDIVIDUAL WRITING STYLE OF VIRGINIA WOOLF'S FICTION	32
ANI GRIGORYAN	32
ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ՓՆՏՐՏՈՒՔԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԷՍՍԵՆԵՐՈՒՄ	41
ՎԱՐԴՈՒՀԻ ԴԱՎԹՅԱՆ	41
ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԻ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ	47
ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ	47
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՀՈՒՄԱՆԻՄՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	61
ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ	61

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	75
ԱՆԴՐԱՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ	75

THE BOLOGNA PROCESS SOCIO - ECONOMIC CONSEQUENCES	85
HAMED MIRZAEI.....	85
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ.....	95
ՆԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ.....	95
ՓՈԽԱՏՎԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ .	101
ԲԱԿՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	101
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ	
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՈՒԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	108
ՄԱՐԻԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆ	108
ՍՅՈՒՋԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	108
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՄԻՆ (ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՕՐԻՆԱԿՈՎ)	115
ՔՐԻՍՏԻՆԵ ՌՇՏՈՒՆԻ	115
«ԶԱՐԳԱՅՆՈՂ» ԵՎ «ԱՐԶՈՒՆԱՎԵՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԶՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ	122
ՆԱԻՐՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ.....	122
ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	129
ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ	129

ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԵՂԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ

Համալսարանական ինքնավարության ընդլայնումն ու ակադեմիական ազատությունները միշտ էլ եղել են հիմնախնդիր բոլոր ժամանակներում: Դեռևս 1988թ. սեպտեմբերի 18-ին Բոլոնիայում նշելով հնագույն համալսարանի 900-ամյակը՝ մի շարք երկրների համալսարանների ռեկտորների կողմից ստորագրվեց «Համալսարանական ազատությունների խարտիան»՝ կոչ անելով բոլոր պետություններին ու ազգերին ընդունել հիմնարար սկզբունքներ, որոնք պետք է աջակցեն համալսարանների կրթական գործունեությանը: Համալսարանական ազատությունների խարտիան նախանշեց հիմնարար սկզբունքներ, ըստ որոնց, համալսարանը հասարակության ոլորտում աշխարհագրորեն և պատմական տարբեր ժառանգությամբ ձևավորված ինքնավար հաստատություն է, որտեղ հասարակության կարիքների բավարարման համար իրականացվող գիտահետազոտական աշխատանքները և ուսուցումը պետք է անկախ լինեն քաղաքական և տնտեսական իշխանությունից:

Հայաստանի Հանրապետությունում նույնպես օրենսդրորեն ամրագրվեց համալսարանական համակարգում ակադեմիական ազատությունների անհրաժեշտությունը: Այսպես, օրենսդրորեն պահանջ դրվեց, որ «....պետության քաղաքականությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում բուհերի ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելն է:»¹

Ներկայումս բարձրագույն ուսումնական հաստատությունը մեր հանրապետությունում գործում է ինքնակառավարման և կոլեգիալության սկզբունքներով, ինքնուրույն է ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի ու պարբերականության ընտրության հարցերում, ինքնուրույն է որոշում աշխատողների հաստիքացուցակը, իրականացնում աշխատողների ընտրությունը, կատարում է գիտամանկավարժական համակազմի

¹ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք,

2004 թ., հոդված 4, կետ 7:

համալրում, սահմանում է պրոֆեսորադասախոսական կազմի գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը:

ՀՀ բուհերը իրավունք ունեն օրենքով և իրենց կանոնադրությամբ չարգելված այլ գործունեության: Բուհերի իրավասությունների մեջ է մտնում ղեկավար անձնակազմի և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգի մշակումը, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակումն ու հաստատումը, ուսումնական գրականության և ձեռնարկների հրատարակումը, տեղական և միջազգային գիտակրթական ծրագրերին մասնակցությունը, գիտական հետազոտությունների կատարումը, հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցության ապահովումը, վճարովի կրթական ծառայությունների իրականացումը: ՀՀ բուհերին օրենսդրությամբ հնարավորություն է տրված ինքնուրույն որոշելու իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները՝ ներառյալ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանել կրթաթոշակներ: Բուհերի իրավասությունների մեջ է մտնում նաև ֆինանսների կառավարումը, աշխատավարձի, կրթաթոշակի վճարումը, ուսման վարձի փոխհատուցումը, ուսանողական նպաստների տրամադրումը, բուհի զարգացմանը նպատակաուղղված ծախսերի կատարումը, հետուհական կրթության կազմակերպումը:

Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ բուհերը գործնականում չեն կարողանում լիարժեք իրացնել իրենց իրավասությունները մի շարք ուղղություններով:

Նախ, էական է բուհերի կախվածությունը ՀՀ կրթության և գիտության նախարարությունից: Ուսանողների միջբուհական տեղափոխումները, ակադեմիական երկարաժամկետ դադարից հետո բուհերում սովորողների վերականգնումները, ընդունելության տեղերի հաստատումները և նմանատիպ բազմաթիվ հարցեր ներկայումս լուծվում են բացառապես նախարարության թույլտվությամբ: Դեռևս առկա է խորհրդային ժամանակներից ժառանգած իներցիոն այն ուժը, որը կաշկանդում է համալսարաններին առանց ՀՀ կրթության և գիտության նախարարության միջամտության ամբողջ թափով իրացնել իրենց վերապահված իրավասությունները: Նույնիսկ կարևորագույն հարց հանդիսացող դիմորդների ընտրությունը վերապահված չէ բուհերին և շուրջ երկու տասնամյակ ընդունելության քննություններ են անցկացվում կենտրոնացված կարգով՝ առանց բուհերի ակտիվ մասնակցության: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ համալսարանները գործունե մասնակցություն ունեն իրենց դիմորդների ընտրության հարցում:

Երկրորդ, ՀՀ պետական բուհերը խոշոր հարկատուներ են: Ստեղծվել է մի իրավիճակ, որ անգամ պետական բուհերը տարեկան առավել հարկեր են մուծում պետական բյուջե, քան բյուջետային ֆինանսավորում են ստանում: Հետևաբար, պետությունը՝ բուհերին հնարավորություն տալով ինքնուրույն որոշելու տնօրինած ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, միաժամանակ հարկային բեռի հետևանքով թույլ չի տալիս լայն թափով զարգացնելու համալսարանական գործունեությունը: Ուստի ներկայումս հիմնախնդիր է հանդիսանում կառավարության կողմից համալսարանական համակարգում հարկային արտոնությունների սահմանումը, որն ի դեպ տասնյակ տարուց ավել գործում է ավելացված արժեքի հարկի գծով: Միայն այդ հար-կատեսակից բուհերին ազատելով՝ անմիջապես հնարավորություն ստեղծվեց էականորեն բարձրացնելու պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձը, ստեղծելու խրախուսման ֆոնդեր, համալսարաններում կատարել կապիտալ շինարարություն, ընդլայնել հրատարակչական գործը և այլն:

Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումը միտված է ոչ միայն ուսանողի, այլև գործատուի շահերին: Աշխատանքի շուկայի դինամիկ փոփոխությունները գործատուին կարող են ստիպել ակտիվ մասնակցություն հանդես բերելու ուսումնական պլանների հրատապ շտկման կամ բարելավման ուղղությամբ: Եվ դրանով իսկ բուհը նման իրավիճակներում չի կարող խստորեն պահպանել կրթական չափորոշիչների տառի պահանջները, հապաղել և օպերատիվ չարձագանքել աշխատանքի շուկայի հարափոփոխ պահանջներին: Հետևաբար, համալսարանական համակարգին տրամադրվում է կրթական ծրագրերի բովանդակության փոփոխման ակադեմիական ազատությունների շրջանակ, որպեսզի հաշվի առնելով գործատուի պահանջները՝ բարեփոխումներ կատարվեն ուսումնական պլաններում, մինչև պետության կողմից նոր սերնդի պետական չափորոշիչների հաստատումը:

Կրթական շուկայում մրցակցային դիրքեր ապահովելիս համալսարանները ձգտում են հնարավորինս հաշվի առնել նաև ուսանողության շահերը և փոփոխվող պահանջները ուսուցման բովանդակության ձևավորման պարագայում: Մասնավորապես, ելնելով ուսանողության նախասիրություններից՝ օրախնդիր է դառնում վերանայելու ընտրովի դասընթացների կազմը, անդրադառնալու ատեստավորման և գիտելիքների գնահատման ձևերի հրատապ փոփոխություններին, որոնք չպետք է լինեն ժամանակավրեպ: Ուստի համալսարաններին ազատության որոշ չափաբաժին է տրվում շեղվել կրթական չափ-

րոշիչների պահանջներից՝ ապահովելով ուսանողության շրջանում կրթության գրավչությունը:

Ի դեպ, գործնականում հնարավոր է դառնում նաև հիմնական մասնագիտական կրթության ծրագրի յուրացման ընթացքում ուսուցման զանազան ձևերի զուգորդումը: Այսպես, առկա ուսուցման պարագայում արդյունավետ է դառնում ուսանողներին տրամադրել որոշ մոդուլների գծով հեռաուսուցում, որը մի կողմից տնտեսում է համալսարանի կրթական ծառայությունների մատուցման ծախսերը, մյուս կողմից բարելավում է նաև ուսանողների ժամային ծանրաբեռնվածության կառուցվածքը: Հետևաբար, առանց վնասելու կրթական ծառայությունների մատուցման որակը, բուհերին որոշ չափով տրամադրվում են ազատություններ՝ զուգորդելու առկա և հեռաուսուցման տեխնոլոգիաները և չափի սահմաններում «շեղվելու» կրթական չափորոշիչներով նախօրոք սահմանված ուսումնառության բովանդակությունից:

Փորձը ցույց է տալիս, որ եվրոպական ուսումնական հաստատությանն իրավունք է վերապահվում՝

- մինչև 5%-ի չափով փոփոխել առարկայախմբերի ժամաքանակը,
- փոփոխել առանձին առարկաների ծրագրային նյութերի բովանդակությունը 15%-ի սահմաններում,
- սահմանել միջանկյալ ատեստավորման անցկացման ձևերը,
- սահմանել ուսումնական բեռնվածության (լսարանային և արտալսարանային) ընդհանուր ծավալը յուրաքանչյուր առարկայից,
- մասնագիտական առարկայախումբը և մասնագիտացումներն ընտրելու հարցում հաշվի առնել գործատուների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- ընտրովի առարկաները սահմանել այնպես, որ դրանք նախատեսեն շրջանավարտի մրցունակության ապահովումը առնվազն տարածաշրջանային աշխատաշուկայում,

- կամընտրական (ֆակուլտատիվ) առարկաների ցանկը և դրանց բովանդակությունը ձևավորել ուսանողների նախասիրություններին համապատասխան,
- սահմանել ուսումնական ծանրաբեռնվածության (լսարանային և արտալսարանային) ընդհանուր ծավալը յուրաքանչյուր բաժնից՝ հաշվի առնելով առարկաների առանձնահատկությունները,
- մասնագետների պատրաստման գործում հաշվի առնել տարածաշրջանային առանձնահատկությունները և դրանք արտացոլել (ինչպես պետական պահանջներով, այնպես էլ ինքնուրույնաբար սահմանած) առարկաների աշխատանքային ծրագրերում,
- կազմակերպել ուսանողների բացակայությունների հաշվառումը՝ համաձայն սահմանված կարգի,
- հիմնական մասնագիտական կրթության ծրագրի յուրացման ընթացքում զուգորդել տարբեր տեսակի ուսուցման ձևերը,
- գործատուների համագործակցությամբ մեկ կամ մի քանի մասնագիտական կրթական ծրագրերի գծով ուսանողներին շնորհել որակավորման կարգեր,
- արտադրության մեջ աշխատող մասնագետների համար կազմակերպել կարճաժամկետ ուսուցում, վերաորակավորման դասընթացներ:

Կրթական գործընթացը ավանդաբար ընդգծվել է իր պահպանողականությամբ և ուսուցչակենտրոն հատակ դրսևորումներով: Սովորողների իրավունքները կրթական գործընթացում միշտ էլ ցայտուն չեն դրսևորվել և առավելապես առնչվել են ակադեմիական պարտականությունների իրացման հետ (ինտենսիվ դասահաճախումներ, ուսումնառության վարքագծի ճկունության և խոսքի իրավունքի խիստ սահմանափակումներ): Մեր ժամանակներում պահպանելով ակադեմիական պարտականությունները՝ հատկապես բուհերի ուսանողությանը տրամադրվում են հնարավորինս լայն ակադեմիական ազատություններ, որոնք ունեն իրենց պատճառները:

Նախ, տեղեկատվական հասարակության դարաշրջանում ուսանողը ոչ միայն քաջատեղյակ պետք է լինի իր ուսումնառության կազմակերպման «խոհանոցին», այլև որպես պատվիրատու, պետք է ի վիճակի լինի իր չափաբաժնով մասնակցություն բերելու կրթական ծառայությունների մատուցման բարեփոխումներին: Անհատի ձևավորման արդյունքը

գիտելիքահենք տնտեսությունում ոչ միայն մասնագետ դառնալն է, այլև սեփական նախա-
ձեռնությամբ որոշումներ կայացնող, գործնական իրավիճակներում ճկուն կողմնորոշվող,
որոշումների կայացման հմտություններով մարդ-քաղաքացու դաստիարակումն է:

Հետևաբար, որակյալ կրթական ծառայությունների մատուցման արդյունքում բուհի
ուսանողի մասնագիտական գիտելիքների յուրացմանը զուգահեռ ներկայումս արևմտյան
համալսարաններում հետզհետե առավելապես ցայտուն է ընդգծվում ակադեմիական
ինքնակառավարման հմտությունների ուսուցանումը և այդ ոլորտում սեփական նախա-
ձեռնությամբ՝ ուսանողների որոշումներ կայացնելը: Մասնավորապես, միտում է նկատվում
ուսանողի լսարանային ժամերի կրճատման, անհատական աշխատանքի շրջանակների
ընդլայնման, ակադեմիական աշխատաժամանակի կառավարման ինքնավարության
աստիճանի բարձրացման ոլորտում: Սովորողին տալով ակադեմիական աշխատաժա-
մանակի ազատություններ՝ բուհը «գրավիչ» է դառնում ուսանողի համար, հնարավորություն
տալով վերջինիս սեփական նախաձեռնությամբ տնօրինելու իր աշխատաժամանակը և,
ինչու չէ, նաև ժամանակ գտնելու աշխատել՝ կրթավճար հայթայթելու նպատակով: Մյուս
կողմից, բուհի կողմից ուսանողին դրանով իսկ անուղղակիորեն ուսուցանվում են սեփական
ժամանակի տնօրինման և կառավարման հմտություններ, որոնք նույնպես անհատի
կյանքում կարևորվում են, ինչպես խորը մասնագիտական ունակությունները:

Ակադեմիական ազատությունները հաճախ շաղկապվում են ուսանողի
ակադեմիական ինքնավարության հետ: Բուհի ուսանողին՝ որպես կրթական ծառայություն-
ների մատուցման պատվիրատուի, որոշակի սահմաններում հնարավորություն է տրվում
սեփական նախաձեռնությամբ ընտրելու իր ուսումնառության տարիները, կրեդիտների
կուտակման ծանրաբեռնվածությունը՝ դրանով իսկ առավել ճկուն դարձնելով
ուսումնառությունը: Ուսումնառությունը առավել գրավիչ է դառնում նաև այն պարագայում,
երբ ուսանողությունը ակտիվ մասնակցություն է բերում իր իսկ ուսումնական պլանի
կառուցման ճարտարապետությանը, սեփական նախասիրություններով ընտրելով
մոդուլներ, անգամ՝ դասախոսներ: Իր ուսումնառության տարիներին դառնալով շարժունակ՝
ուսանողները կարող են նույնիսկ իրենց ակադեմիական ակտիվում կրեդիտներ կուտակել
այլ բուհերից:

Եվ վերջապես, հանդիսանալով կրթական գործընթացի առանցքային սուբյեկտ՝
ուսանողությունը պարտադրված է մասնակցելու բուհի կառավարմանը, իր

ներկայացուցչությունը ունենալով գիտական և ֆակուլտետային խորհուրդներում, պաշտպանելու սովորողների շահերը, կայացնելու կրթական բարեփոխումներին առնչվող կառավարչական որոշումներ: Այդ է պատճառը, որ ՀՀ-ում պետական բուհերի կառավարման խորհրդում ներկայումս պարտադիր ընդգրկվում են ուսա-նողության ներկայացուցիչներ:

Այսպիսով, համալսարանական համակարգում արդիական է համարվում «ուսանողակենտրոն» կրթական մշակույթի ձևավորումը հետևյալ հիմնական բաղադրիչներով.

- պասիվ ուսումնառության փոխարինում ակտիվ կրթությամբ, ուսումնառության ծանրության կենտրոնի տեղափոխում տեսական ոլորտից դեպի կիրառական ոլորտ,
- ուսանողի՝ հաշվետու լինելու ունակությունների զարգացում և պատասխանատվության բարձրացում,
- ուսանողի՝ ինքնուրույն գործելու հմտությունների զարգացում,
- դասախոս-ուսանող հարաբերությունների նոր որակ՝ հիմնված անհատական աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցում դրսևորելու վրա,
- դասախոսների և ուսանողների կողմից երկուստեք վերլուծական մոտեցում դասավանդման և ուսումնառության գործընթացներին:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կրթական չափորոշիչներում ընդգրկված ոչ պարտադիր (ընտրովի) մոդուլների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 30%: Ուստի ուսանողը, իր նախասիրություններից ելնելով, ընտրում է ոչ միայն կրթական մոդուլ, այլև նույնիսկ դասավանդողին: Ակադեմիական նման ազատությունը էապես նպաստում է կրթական ծառայությունների պատվիրատուի (ուսանողի) ուսումնառության նախասիրությունների բավարարմանը, սակայն զուգահեռաբար մեծացնում նաև ուսանողի պատասխանատվության աստիճանը իր իսկ կառուցած ուսումնառության բովանդակության որակն ապահովելիս:

Ուսանողի աշխատաժամանակի ծանրաբեռնվածության ազատություններն ընդլայնվում են նաև համալսարանի կողմից գիտելիքների բազմագործոնային գնահատման համակարգ կիրառելիս, երբ միջանկյալ և ամփոփիչ քննություններից բացի, մոդուլի յուրացումը գնահատվում է անհատական աշխատանքով, դասերին հաճախումների

աստիճանով, գործնական աշխատանքների ակտիվությամբ: Հետևաբար, ուսանողը ինքն է որոշում իր գնահատականի ձևավորման վերը թվարկած «որոշիչ ուղղությունները»: Ակադեմիական ազատությունների ընդլայնման պարագայում, որպես կանոն, ուսումնառության զգալի մասը կատարվում է լսարանից դուրս և արդյունքում ուսանողները ակտիվ ներգրավվում են իրենց իսկ ուսումնառության պլանավորման և կազմակերպման գործում:² Կրթական ծառայությունների մատուցման նման իրավիճակում ուսանողները կարող են ընտրել ոչ միայն, թե ի՞նչ կարող են սովորել, այլև պատկերացնել, թե ինչո՞ւ և ինչպե՞ս սովորել:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ակադեմիական ազատությունների ընդլայնմամբ մեծանում է ուսանողի պատասխանատվությունը գիտելիքների յուրացման խնդրում, քանի որ զուգահեռաբար փոքրանում է դասախոսությունների ծավալը: Միաժամանակ ձևավորվում է ուսումնառության հարաբերությունների նոր որակ՝ հիմնված անհատական աշխատանքի ստեղծագործական կազմակերպման և դասախոս-ուսանող ինտենսիվ հարաբերությունների վրա: Նման պարագայում մեծանում է ակադեմիական ազատությունների շրջանակը, քանի որ կոնտակտային ժամերի ծանրության կենտրոնը ուսանողական հոսքերից տեղափոխելիս անհատ-ուսանողին, ուսանողներն ու դասախոսները հետզհետե հրաժարվում են կարծրատիպ ուսուցման ավանդական եղանակներից և կրթական ծառայություններ մատուցելիս յուրաքանչյուր պարագայում հանդես են բերում երկուստեք վերլուծական մոտեցում:

Հիմնաբաներ. համալսարանական ինքնավարություն, ուսանողի անհատական աշխատանք, դասավանդման ճկունություն, ուսանողակենտրոն ուսուցում:

² Burnard, P. (1999). Carl Rogers and postmodernism: Challenged in nursing and health sciences. *Nursing and Health Sciences* 1, 244.

STUDENT CENTERD TRAINING ISSUES

HEGHINE BISHARYAN

The expansion of academic freedoms increases the student's responsibility for mastering the knowledge as the volume of lectures decreases simultaneously. At the same time, a new quality of learning relations is based on the creative work of individual work and intensive student-teacher relationships. In articles is analyzing advantages' of student oriented education, organizing in Armenian universities.

Keywords: university autonomy, individual student work, flexibility in teaching, student-centered learning.

ПРОБЛЕМЫ СТУДЕНТО-ОРИЕНТИРОВАННОГО ОБУЧЕНИЯ

ЕГИНЕ БИШАРЯН

Расширением академических свобод в университетах повышается ответственность студента в овладении знаниями, поскольку одновременно уменьшается объем лекций. В то же время, образуется новое качество отношений в процессе обучения, основанное на творческой работе индивидуального труда и интенсивных отношениях между студентами и преподавателями. В статье анализируются преимущества студенто-ориентированного обучения в армянских университетах.

Ключевые слова: университетская автономия, индивидуальная студенческая работа, гибкость в обучении, студенто-ориентированное обучение.

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման գործընթացի միջազգային և հայրենական փորձը վկայում է, որ արդեն առաջնահերթ է համարվում ոչ թե վերահսկողության, և նույնիսկ որակի կառավարման հիմնախնդիրը, այլև կրթական ծառայությունների մատուցման շուրջ որակի մշակույթի ձևավորումը:

Բազմաթիվ վերլուծություններ վկայում են, որ մասնագիտական կրթության որակի ապահովումը չի կարող արդյունավետ իրականացվել փակ համակարգի պայմաններում՝ ներգրավելով միայն բուհական անձնակազմի ներուժը: Բարձրագույն կրթության որակի ապահովմամբ շահագրգիռ են ոչ միայն կրթական ծառայություններ մատուցողները (համալսարանները), այլև այդ ծառայություններից օգտվողները՝ ուսանողները, գործատուները, ինչպես նաև պետությունը: Հետևաբար, որակի ապահովումը վերահսկողական, կառավարման գործառնություններից աստիճանաբար վերադասվում և մտնում է կրթական ծառայությունների որակի մշակույթի հարթություն:³


Կրթական ծառայությունների որակի ապահովման մշակույթը ձևավորվում է հետևյալ ազդակներով և ուղղություններով.

- որակի ապահովման «վերնից» ներազդեցություն, երբ կրթական ծառայությունների որակը վերահսկվում և գնահատվում է պետության լիազորված մարմինների կողմից,
- որակի ապահովման «ներքնից» ներազդեցություն, երբ կրթական ծառայությունների որակը կառավարվում է ներբուհական ուժերով՝ ներգրավելով ուսանողներին, դասախոսներին, վարչակազմին,
- որակի ապահովման «հարակից» ներազդեցություն, երբ կրթական ծառայությունների որակով շահագրգռված՝ մատուցվող կրթական ծառայությունների արդյունքները վերլուծում են գործատուները, հասարակական կազմակերպությունները և նույնիսկ գործընկեր

³ Երիցյան Ս., Ճուղուրան Ա., Մխիթարյան Ա., Դոկտորանտուրա. Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կազմակերպման հիմունքներ, «Էդիթ Պրինթ», Եր., 2017 թ. էջ 181:

բուհերը:

Գծապատկեր 1-ում ներկայացված է կրթության որակի մշակույթի ձևավորման միջավայրը (շրջանագծի մակերեսը), որին նպաստում են տարբեր ուղղություններից եկող ազդակներ:



Գծապատկեր 1 Կրթության որակի մշակույթի ձևավորման համակարգային մեխանիզմը

Որակի ապահովման «վերնից» ներազդեցությունը իրականացնում է պետության կողմից լիազորված ազգային գործակալությունը, որը սահմանված գործառնություններով գնահատում է համալսարանական գործունեության ներուժը անհրաժեշտ որակ ապահովելու գործում (շենքային պայմաններ, գրադարաններ, լաբորատորիաներ, կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի առկայություն և այլն): Պետությունը շահագրգիռ է կրթական ծառայությունների մատուցման պատշաճ որակի ապահովմամբ, քանի որ այն նպաստում է մարդկային կապիտալի ձևավորմանը, հասարակության սոցիալ-տնտեսական մակարդակի աճին: Ուստի պետության կողմից իրա-

կանացվում է անգամ հավատարմագրված բուհերում մասնագիտությունների պատրաստման որակի պարբերաբար վերանայում:

Սակայն կրթության որակի մշակույթն իր լիրաժեք դրսևորումը չի ստանա, եթե միայն կիրառվեն որակի վերահսկողության և կառավարման պետական միջոցներ: Բոլոնիայի գործընթացի՝ վերջին տարիներին ընդունած մի շարք փաստաթղթերում բազմիցս ընդգծվել է կրթության որակի ապահովման «ներքնից» ներազդեցության առաջնայնությունը, երբ բուհերը սեփական նախաձեռնությամբ լուրջ ուշադրություն են դարձնում մատուցվող կրթական ծառայությունների որակի ինքնավերլուծությանը՝ ընդգրկելով ուսանողության, ամբիոնների, վարչական ներուժը: Կրթության որակի ներքին ապահովման նպատակով գործողության մեջ են դրվել հատուկ չափորոշիչներ, որոնք հանրնդիսանուր են Բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքում:

Եվ, վերջապես, կրթական ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացմանը լրջագույնս նպաստում է որակի ապահովման «հարակից» ներազդեցությունը, որը որակի մշակույթի ձևավորման անուղղակի տարրերից է:

Բուհերի գործունեության նկատմամբ հարակից ազդակներ են ստացվում գործատուներից, որոնք «անորակ» շրջանավարտ մասնագետների պարագայում հսկայական միջոցներ են տրամադրում երիտասարդ մասնագետ կադրերի վերապատրաստման, աշխատանքային փորձաշրջանի և մասնագիտական վարժեցման՝ թրեյնինգների կազմակերպման համար: Ուստի միջազգային պրակտիկայում միտում է նկատվում գործատուների կողմից բուհերում ավարտական քննությունների հանձնաժողովներում մասնակցության, ուսումնական պլանների վերանայման, կրթական չափորոշիչների վերլուծության ակտիվության առումով: Դրանով իսկ գործատուներն անուղղակի մասնակցություն են ունենում համալսարաններում կրթության որակի ապահովման գործընթացին:

Կրթության որակով շահագրգռված են նաև համալսարանների գործընկեր բուհերը: Ուսանողների և դասախոսների շարժունության ակտիվացումը, ակադեմիական կրեդիտների փոխանցումը, կրթական միասնական ծրագրերի և համատեղ ավարտական դիպլոմների տրամադրումը չեն կարող անտարբեր թողնել հարակից բուհերին կոնկրետ

մասնագիտության պատրաստման որակի նկատմամբ: Եվ պատահական չէ, որ հատկապես Արևմտյան Եվրոպայում լայն զարգացում է ապրում տարբեր տարածաշրջաններից համալսարանական ցանցերի ձևավորումը, որի նպատակը հիմնականում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումն է, սակայն որը չի կարող իրականացվել առանց կրթության որակի նկատմամբ փոխվստահության առկայության:

Հետևաբար, կրթական միասնական տարածքում գործող բուհերում որակի չափանիշների նկատմամբ միասնական մոտեցման դրսևորման և, ինչու չէ, միմյանց հանդեպ տարբեր համալսարանների կողմից պատրաստվող միևնույն մասնագիտության մոնիտորինգի իրականացման անհրաժեշտություն է ծագում: Նման պայմաններում մի կողմից բարձրանում է որակի նկատմամբ փոխվստահությունը, մյուս կողմից ամրապնդվում է համալսարանի որակի ապահովման «դրսից ներմուծվող» մշակույթը:

Կրթական ծառայությունների որակի մշակույթի ձևավորման վրա ոչ պակաս ազդեցություն են գործում հասարակական կազմակերպությունները, երիտասարդական ընկերակցությունները, շրջանավարտների միությունները և այլն, որոնք, հետադարձ կապ ապահովելով բուհերի հետ, կարծես «տեղեկատվական կամուրջ» են դառնում «բուհ-շրջանավարտներ-աշխատանքի շուկա-հասարակություն» շղթայում՝ դրանով իսկ քննարկման հարց դարձնելով կրթական ծառայությունների որակի բարձրացման հիմնախնդիրները:

Մասնագիտական կրթության որակի կառավարման առանցքային դերակատարներից է «Որակի ապահովման ազգային կենտրոն» գործակալությունը, որն անկախ է ՀՀ կառավարությունից և մասնագիտական ուսումնական հաստատություններից:⁴ Այն իրականացնում է իր առաքելությունը՝

- բավարարելով շահակիցների պահանջները ենթակառուցվածքային փորձաքննության և ծրագրային հավատարմագրման միջոցով,

⁴ Հիմնադրվել է կառավարության 2008թ. նոյեմբերի 7-ի թիվ 1486-Ն որոշմամբ:

- համաձայնեցնելով որակի ապահովման իր չափանիշները և չափորոշիչները ընդունված միջազգային չափանիշների և չափորոշիչների հետ,
- երաշխավորելով միջազգային ճանաչելիությունը, ինչը կնպաստի Եվրոպայում ՀՀ մասնագիտական կրթության ամուր դիրքեր հաստատելուն,
- արժևորելով շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման համակարգի զարգացման գործում:

ՈԱԱԿ-ի ռազմավարական խնդիրները հետևյալն են.

- հավաստել ՄՈՒՀ-երի գործունեության և նրանց կողմից շնորհվող որակավորումների համապատասխանությունը մասնագիտական կրթության կրթական չափորոշիչներին, աջակցել մասնագիտական կրթության ծառայությունների որակի շարունակական բարելավմանը՝ համագործակցելով մասնագիտական կրթության շահակիցների հետ,
- խթանել ՄՈՒՀ-երի նվիրվածությունը որակի ապահովման գործընթացին,
- երաշխավորել ՄՈՒՀ-երի՝ որակի վերաբերյալ թափանցիկ և ճշգրիտ տեղեկատվության հասանելիությունը հանրությանը,
- կիրառել ազգային և միջազգային լավագույն փորձը ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների գնահատման ընթացքում:

Որակի ապահովման գործընթացն ունի երեք հիմնական նպատակ.

Հաշվետվողականություն և թափանցիկություն. որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ հասարակության շահերը պաշտպանված են բարձրագույն կրթության որակի և չափորոշիչների պահպանման դեպքում, նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային համատեքստում:

Վերահսկում. կրթական ծառայություն մատուցող հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլ նաև ցույց է տալիս, որ առկա ռեսուրսներով հասնում է հնարավորինս բարձր որակի:

Որակի բարելավում. հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի տարածման և շարունակական զարգացման նպատակով:

ՈԱԱԿ-ը առաջարկում է հետադարձ կապի վրա հիմնված կառավարման գնահատման մոդել, որը կնպաստի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

«Ներդրումներ» դաշտը հիմնականում շեշտադրում է կրթական գործընթացի կազմակերպումը, քաղաքականությունը, ընթացակարգերը, ռազմավարական պլանում դրված խնդիրներին հասնելու համար ռեսուրսները և անձնակազմի ներուժը, ինչպես նաև գործընթացի արդյունավետ կառավարումը երաշխավորող որակի ապահովման մեխանիզմները:

«Գործընթացներ» դաշտը շեշտադրում է կրթական գործընթացները, մասնավորապես այն գործողությունները, որոնք ուղղված են ռազմավարության, պլանավորման և ուղղորդող ընթացակարգերի իրականացմանը: Հատկապես կարևոր է նախանշված խնդիրների իրականացման գործում ներգրավված անձնակազմի ներուժը: Այս հատվածում ինքնագնահատման համար պատասխանատու որակի ապահովման անձնակազմը պետք է վերլուծի այն քայլերը, որոնք ձեռնարկված են նպատակներին հասնելու համար:

«Արդյունքներ» դաշտը նախանշում է այն քանակական և որակական ցուցիչները, որոնք սահմանում են, թե իրագործված են արդյոք մասնագիտության կրթական ծրագրի/հաստատության նպատակները:

«Բարելավում» դաշտում կատարվում են պլանների վերանայում, շտկումներ և/կամ վերամշակում: Եթե ՄՈՒՀ-ը չի հասել իր սահմանած նպատակներին, ապա այս փուլում այն պետք է ձեռնարկի բարելավմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, որոնք պետք է ներառվեն բարելավման ծրագրերում:

Կրթության որակի արտաքին գնահատումն իրականացվում է երկու հաջորդական գործընթացներով. ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն և կրթական ծրագրերի պետական հավատարմագրում (տե՛ս գծապատկեր 2.): Ինստիտուցիոնալ փորձաքննությունը պարբերաբար կրկնվող (շրջափուլային) պարտադիր գործընթաց է

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց գերատեսչական ենթակա-յությունից և կազմակերպարավական ձևից: Հավատարմագրումն իրականացվում է կամավորության սկզբունքով՝ միայն ինստիտուցիոնալ փորձաքննության դրական արդյունքի դեպքում:

Ինստիտուցիոնալ փորձաքննության գործընթացն իրականացվում է 3 հաջորդական փուլերով:

Առաջին փուլ՝ ինստիտուցիոնալ կարողությունների ներքին գնահատում (ինքնավերլուծություն) ուսումնական հաստատության կողմից՝ ըստ ՈԱԱԿ-ի սահմանած համապատասխան ձևաչափի:


Երկրորդ փուլ՝ ուսումնական հաստատության կրթական և որակի ապահովման գործընթացների իրականացման արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և ՀՀ կառավարության հաստատած որակի չափանիշներին համապատասխան:

Երրորդ փուլ՝ ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքների հիման վրա ՈԱԱԿ-ի հավատարմագրման խորհրդի համապատասխան որոշման կայացում:

Ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննության դրական արդյունքն ուժի մեջ է 6 տարվա ընթացքում: Ինստիտուցիոնալ փորձաքննության բացասական եզրակացության դեպքում արդյունքները ներկայացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմին (նախարարություն): Ուսումնական հաստատությունը կարող է 2 տարի հետո նորից անցնել ինստիտուցիոնալ փորձաքննություն՝ սահմանված ընթացակարգով:

Հավատարմագրման գործընթացը նույնպես իրականացվում է 3 հաջորդական փուլերով՝

Առաջին փուլ. մասնագիտության կրթական ծրագրի, ուսումնական գործունեության ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից՝ ինքնավերլուծություն, ըստ ՈԱԱԿ-ի մշակած համապատասխան ձևաչափի:




Գծապատկեր 2. Որակի արտաքին ապահովման շրջանակը ՀՀ-ում

Երկրորդ փուլ՝ ուսումնական հաստատության ինքնավերլուծության, ուսումնական գործունեության արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և ՀՀ կառավարության հաստատած որակի չափանիշներին համապատասխան:

Երրորդ փուլ՝ ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքների հիման վրա ՈԱԱԿ-ի հավատարմագրման խորհրդի համապատասխան որոշման կայացում:

Այսպիսով, եթե արտաքին ապահովման մեխանիզմի հիմքում գործում է կրթական ծառայությունների մատուցման որակի պարտադիր նվազագույն պայմանների գնահատումը, որով երաշխավորվում է ՄՈՒՀ-ի գործունեությունը, ապա վերլուծության հաջորդ փուլում հավաստվում է որակի մրցունակությունը կրթական շուկայում (տե՛ս գծապատկեր 3): Հավատարմագրումը ճանաչման գործընթաց է, որը հավաստում է մասնագիտության

կրթական ծրագրի կամ ՄՈՒՀ-ի համապատասխանությունը նախանշված չափորոշիչներին: Այն հավաստում է նաև, որ իր շրջանավարտները կարող են ընդունվել այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ կամ ծավալել համապատասխան մասնագիտական գործունեություն:



Գծապատկեր 3. Որակի արտաքին ապահովման արդյունքների սպառման ոլորտները

Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրումը կամավոր գործընթաց է բոլոր ՄՈՒՀ-երի համար: Կրթական ծրագրի հավատարմագրման նպատակն է հաշվետվողականության ապահովումը, ճանաչումը և որակի բարելավումը, իսկ հավատարմագրման թիրախը առանձին մասնագիտության կրթական ծրագիրն է: Ծրագրային հավատարմագրման հետևանքներն են.

- **պետական ֆինանսավորման հատկացումը.** կառավարությունը ֆինանսական միջոցներ կհատկացնի միայն ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրված և պետական գրանցամատյանում գրանցված մասնագիտության կրթական ծրագրերին,
- **որակավորումների և կրեդիտների ճանաչում ազգային և միջազգային մակարդակներում.** միայն հավատարմագրված հաստատություններում ձեռք բերված կրեդիտներն են ճանաչվելու և նպաստելու շարժունությանը,

- **աշխատաշուկայի ազդակներ.** հավատարմագրված որակավորումներն առավելություն են ունենալու աշխատաշուկայում, ինչպես նաև ապահովելու են ոչ պետական ՄՈՒՀ-երի շուկայի թափանցիկությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բարձրագույն կրթության ոլորտում որակի մշակույթի ձևավորումը, որն այդքան արդիական է համարվում Բոլոնիայի գործընթացում և ծառայում է կրթական ծառայություններին առնչվող շահառուների նպատակների բավարարմանը, լուծում է մի շարք կարևորագույն խնդիրներ:

Նախ, կրթության որակի ապահովման մշակույթի առկայության պարագայում միավորվում են մատուցվող կրթական ծառայություններին առնչվող թե՛ անմիջական (ուսանողներ, գործատուներ, բուհեր) և թե՛ անուղղակի շահառուները՝ դրանով իսկ ուժեղացնելով կրթական որակի վերահսկողությունը և ժամանակին ու տեղին պահանջներ ներկայացնելով համալսարանական գործունեությանը:

Բացի այդ, պայմաններ են ստեղծվում կրթական միասնական տարածքի ընդլայնման և այդ ուղղությամբ խորքային գործընթացների զարգացման համար, քանի որ որակի մշակույթի առկայության պայմաններում բարձրանում է համալսարանական պարտավորվածությունը ոչ միայն պետական վերահսկող լիազորված մարմինների նկատմամբ, այլև ակադեմիական փոխճանաչման գործընթացում ընդգրկված գործընկեր բուհերի, հասարակական կազմակերպությունների, միջազգային կրթական կառույցների հանդեպ:

Եվ, վերջապես, կրթության որակի մշակույթի առկայության պայմաններում հնարավորինս ապահովվում են փոխվստահության, հրապարակայնության, տեղեկատվության թափանցիկության բոլորնյան սկզբունքները, որոնք, վերջին հաշվով, բացահայտում են մատուցվող կրթական ծառայությունների թերությունները, և դրանով իսկ նպաստում որակի ապահովմանը:

Հիմնաբառեր. որակի ներքին ապահովում, ինքնավերլուծություն, հաշվետվողականություն, ակադեմիական կրեդիտների փոխճանաչում:

QUALITY CULTURE ASSURANCE AT UNIVERSITIES

NONNA KHACHATRYAN

The article analyzes the lack of the creation education quality assurance system and on this basis presents the motivates students, teachers, employers to ensure the quality of educational services in universities. In this connection, it is proposed to form a culture of quality assurance, which will provide an opportunity to strengthen the mutual trust of internal and external consumers of educational services.

Key words: internal quality assurance, self-analysis, accountability, mutual recognition of academic credits.

КУЛЬТУРА ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА В УНИВЕРСИТЕТАХ

НОННА ХАЧАТРЯН

В статье анализируется необходимость создания системы качества образования и на этой основе приводится мотивация студентов, преподавателей, работодателей по обеспечению качества образовательных услуг в университетах. В этой связи, предлагается формирование культуры обеспечения качества, что укрепит взаимодоверие внутренних и внешних потребителей образовательных услуг.

Ключевые слова: обеспечение качества изнутри, самоанализ, отчетность, взаимное признание академических кредитов.

ՀԱՇՎԱՊԱՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

Կրթության բոլոր աստիճաններում բուհերում հիմնախնդիր է հանդիսանում շրջանավարտին մասնագիտական այնպիսի ունակությունների տրամադրումը, որով վերջինս մրցունակ կլինի աշխատաշուկայում և արդյունավետ կհամարի համալսարանում ծախսած թե՛ իր ուսումնառության տարիները, և թե՛ ֆինանսական միջոցները (եթե իհարկե սովորել է վճարովի հիմունքներով): Մասնագիտական ունակությունները ոչ միայն տարբեր շրջանակներ են ընդգրկում տարբեր մասնագիտացումների գծով, այլև գրականությունում տարբեր մեկնաբանությունների առիթ են տալիս, շատ դեպքերում խառնաշփոթ առաջացնելով “ունակություն”, “հմտություն”, “կարողություն” կատեգորիաների միջև: Այս առումով տեղին է հստակեցնել վերոնշյալ կատեգորիաները դոկտորանտուրայում և ներկայացնել յուրաքանչյուրի դերակատարումը հետազոտող շրջանավարտի որակական հատկանիշները ձևավորելիս:

Այսպես, ներկայիս աշխատաշուկայի պահանջները շրջանավարտի որակական հատկանիշների նկատմամբ այնքան ղինամիկ են փոփոխվում, որ միմյան “հարուստ գիտելիքների պաշարով” զինված բուհի շրջանավարտը բնավ մրվունակ չի համարվում: Վաղուց անցել են այն ժամանակները, երբ գործատուների կողմից հիմնականում գնահատվում էր համալսարանի խելացի շրջանավարտը: Դրան զուգահեռ, հիմա կարևորվում է նաև մասնագիտական հմտություններին ու կարողություններին տիրապետող շրջանավարտը, որը կարող է արհեստավարժ կերպով իրականացնել գործատուի կողմից առաջ քաշվող առաջադրանքները և համարվել ունակ մասնագետ:

Այստեղից հարց է առաջանում, թե որո՞նք են համալսարանի շրջանավարտի այն որակական հատկանիշները, որոնք սինթեզվելով, ձևավորում են գործատուի համար ընդունելի ունակ մասնագետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ գիտելիքների հարուստ պաշար ունեցող ուսանողը և գերազանցության դիպլոմով շրջանավարտը չի կարողանում հմտորեն իրագործել գործատուի պահանջները, կամ հակառակը, գործնականում քիչ չեն դեպքերը, երբ գործատուն վերապատրաստումներ է իրականացնում աշխատակիցների շրջանում, նրանց նոր գիտելիքներ հաղորդելու նպատակով: Պատահում է նաև այնպես, որ աշխատանքի անցնելով, շրջանավարտները հասկանում են, որ իրենց

ուսումնական պլաններում ունեցել են Տավեղորդ առարկաների բալաստ՝ ուսումնառության ընթացքում չեն սովորել առավել արդիական առարկաներ և մասնագիտական հմտություններ:

Հենց այստեղ է, որ բուհը ձկունություն պետք է ցուցաբերի՝ ուսումնառության ընթացքում ձևավորելու շրջանավարտի օպտիմալ չափաբաժնով գիտելիքներով, հմտություններով և կարողություններով աշխատանքային ունակություններ: Ընդ որում, մասնագիտական ունակությունները ձևավորվում են կրթության ընթացքում ուսանողի կողմից ձեռքբերված գիտելիքների, հմտությունների և կարողությունների շրջանակների ընդհանուր հատկություն:

Գիտելիքը, մասնագիտության առնչվող իմացության համախումբն է, բաղկացած տեսական և էմպիրիկ տեղեկատվական հոսքերից: Ընդ որում, գիտելիքի իմացությունը պարտադիր չէ, որ ուղղակիորեն թիրախավորված լինի մասնագիտությանը: Այն կարող է անհատի մոտ առավել ընդարձակ շրջանակով ձևավորվել, որի մի մասը հնարավոր կլինի անմիջականորեն վերագրել մասնագիտությանը: Այդ է պատճառը, որ մասնագիտական կրթություն ստանալիս, ուսանողին թվում է, թե երբեմն առարկաներով գերծանրաբեռնված ուսումնական պլանով է սովորում և անցնում է առարկաներ, որոնք կարծես “ավելորդ” են համարվում: Մակայն իրականում այդպես չէ, քանի որ ոչ բոլոր դեպքերում է գիտելիքի իմացությունը անմիջականորեն թիրախավորվում մասնագիտական ունակությունների ձևավորմանը:

Կրթական ծառայությունների ընթացքում ուսանողի մոտ կուտակվող գիտելիքը կարող է անուղղակիորեն և անմիջականորեն չառնչվել մասնագիտությանը, և հետևաբար, նրա ընդարձակ մասից միայն մեկ հատվածը, որը ուղղակիորեն թիրախավորված կլինի շրջանավարտի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, կընդրկվի մասնագիտական ունակությունների հատկությամբ: Օրինակ, տնտեսագիտական մասնագիտություններով ուսուցանվող դոկտորանտները ուսումնասիրելով բնապահպանության ժամանակակից հիմունքներ, ստացված գիտելիքների այն մասը կուղղորդեն իրենց մասնագիտական ունակությունների զարգացմանը, որոնք առնչվում է գործարարության արդյունքում շրջակա միջավայրի աղտոտման սոցիալ-տնտեսական վնասների կանխարգելմանը:

Մասնագիտական հմտությունը շրջանավարտի ձեռք բերած գործիքակազմն է, որի օգնությամբ ստացված գիտելիքները կյանքի են կոչվում պրոֆեսիոնալ գործունեության

ընթացքում: Ընդ որում, որքան մեծանում է մասնագետի փորձառության աստիճանը, այնքան խորանում և կատարելագործվում են նրա հմտությունները:

Հարկ է նշել նաև, որ համալսարանում սովորելու տարիներին ուսանողի ձեռքբերվող հմտությունների շրջանակը շատ ավելի ընդարձակ է, ուստի և դրանց մի որոշ չափաբաժին, որը ուղղակիորեն թիրախավորված կլինի շրջանավարտի մասնագիտական կարողությունների ձևավորմանը, կընդրկվի շրջանագծերի հատույթում:

Մասնագիտական գրականության մեջ բուհի շրջանավարտի հմտությունները ներկայացվում են հետ-յալ կետերով.

Ներանձնային հմտություններ.

- վերլուծելու – սինթեզելու հմտություն,
- կազմակերպելու – պլանավորելու հմտություն,
- տեղեկատվության կառավարման հմտություններ,
- որոշումների կայացում:

Միջանձնային հմտություններ

- թիմային աշխատանք,
- միջանձնային հմտություններ,
- միջառարկայական թիմի կազմում աշխատելու հմտություններ,
- բազմամշակութային միջավայրում կողմնորոշում,
- բարոյական պատասխանատվություն:

Ֆամակարգային հմտություններ

- առաջնորդելու հմտություններ,
- նախաձեռնություն – ձեռնարկատիրական ոգի,
- շահագրգռվածություն որակի մեջ,

- հաջողության հասնելու կամք:⁵

Մասնագիտական կարողությունները անձի աշխատանքային գործունեության վերջնարդյունքներն են, որոնք չէին կարող ձևավորել առանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների: Հետևաբար, հենց կարողություններն են վերջին հաշվով բնութագրում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած մասնագետի որակական հատկանիշները: Ընդ որում, որքան մեծ է մասնագետի կարողությունների շրջանակը, այնքան բարձր է նրա որակական հատկանիշների աստիճանը:

Այսպես, հաշվապահական հաշվառման մասնագետներ են պատրաստվում թե ուսումնարաններում, քոլեջներում, բարձրագույն մասնագիտական կրթության առաջին, երկրորդ և երրորդ աստիճաններում: Բնանականաբար, որքան բարձրանում է կրթական ցնցը, այնքան ընդլայնվում է մասնագիտության կարողությունների շրջանակը (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության շրջանավարտի կարողությունների շրջանակը .

Մասնագիտական կարողությունների շրջանակ	ուսում- նարան	քոլեջ	բարձրագույն կրթության աստիճաններ		
			բակալավր	մագիստրոս	դոկտոր
Հաշվետարարության վարում	V	V	V	V	V
Ֆինանսական և հարկային հաշվետվությունների պատրաստում		V	V	V	V

⁵ Խաչատրյան Ն, Կրթության ֆինանսական կառավարում, «Էդիթ Պրինտ», Եր., 2013թ., էջ 64:

Միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվությունների պատրաստում			V	V	V
Հաշվետվությունների աուդիտ և որոշումների կայացում				V	V
Հաշվային մրցունակ քաղաքականության մշակում					V

Այսպիսով, մասնագիտական ունակությունների շրջանակը դոկտորանտուրայում կարելի է ներկայացնել հետևյալ ընդհանրական բանաձևով.

Մասնագիտական ունակություններ = գիտելիք + հմտություններ + կարողություններ

ԱՄՓՈՓՈՒՄ

Համալսարանների համար չափազանց կարևորվում է մասնագիտական ունակությունների ձևավորման բաղադրիչների այնպիսի չափաբաժնի սահմանումը, որը կհանգեցնի մրցունակ շրջանավարտի ձևավորմանը: Այսօր արդեն գործատուն գնահատում է ոչ այնքան գիտելիքը, որքան հաշվապահ շրջանավարտի հմտություններն ու կարողությունները:

Հիմնաբառեր. գիտելիք, հմտություններ, գործատու, կարողություններ, աշխատուժի շուկա:

PROFESSIONAL SKILLS OF GRADUATES ACCOUNTANTS

ARMEN JUGHURYAN

Key words: knowledge, skills, employer, abilities, labor market

Currently professional training discussed the most in terms of competitiveness in the labor market. Employers are more interested about professional skills of university graduates than for obtained scope of knowledge. The article deals with the problems of curriculum development of graduates accountants.

ПРОФЕССИОНАЛЬНЫЕ СПОСОБНОСТИ ВЫПУСКНИКОВ БУХГАЛТЕРОВ

АРМЕН ДЖУГУРЯН

Ключевые слова: знания, навыки, работодатель, способности, рынок труда.

В наши дни профессиональная обучения обсуждается больше всего с точки зрения конкурентоспособности в рынке труда. Работодатели ныне более заинтересованы в профессиональных навыках выпускников вузов, чем приобретенных знаниях. В статье рассматриваются проблемы составления учебных программ выпускников бухгалтеров.

THE INDIVIDUAL WRITING STYLE OF VIRGINIA WOOLF'S FICTION

ANI GRIGORYAN

The individual style is a unique combination of language media, stylistic devices and expressive means, which come to expose writer's literary and aesthetic personality - based upon the formal and ideological peculiarities of this or that historical period and national culture. In order to understand how the literary work is built it is important to get to know the life of the epoch: history, political movements, cultural and traditional peculiarities of that time. Every writer has his/her individual

manner of using language means in order to achieve the effect he desires, which is marked by his/her uniqueness.

In the history of literature women have been relatively silent and other forms of writing as one - keeping diaries, journals, taking notes were actual and those experiences of silence and being silenced during some period of time transformed into a written language called women's style. It has suddenly appeared in the 20th century, in a time when women in a significant numbers have at last gained some degree of access to the benefits of mass media distribution. Women's style emerged as a recognizable style when Gertrude Stein, Susan Griffin and Virginia Woolf began to publish and gain recognition as “literary” writers. And nowadays this style continues to involve mirroring the consciousness of a woman of a new generation.

The purpose of this article is to study V. Woolf's unusual manner of writing, that holds a unique place in the 20th century literature. Virginia Woolf (in full Adeline Virginia Woolf original surname Stephen) was born on 25 January 1881 in London. Her father, Leslie Stephen (1832-1904), was a man of letters (and first editor of the Dictionary of National Biography) who came from a family distinguished for public service (part of the “intellectual aristocracy” of Victorian England). Her mother was Julia, from whom Virginia inherited her looks. Both parents had been married before: her father to the daughter of the novelist Thackeray (had a daughter Laura who was intellectually backward) and her mother to a barrister, by whom she had three children: George, Stella and Gerald.



Julia and Leslie Stephen had four children: Vanessa, Thoby, Virginia and Adrian. All eight children lived with the parents and a number of servants at 22 Hyde Gate, Kensington.

She moved throughout an exciting childhood, her father's library was her only university and she made the fullest use of it: she was educated at home by her father. She grew up to take culture for granted. But what refers to V. Woolf's youth it was shadowed by series of emotional shocks. In 1895 her mother died unexpectedly, and Virginia suffered her first mental breakdown. Her half-sister Stella took over the running

of the household as well as coping with Leslie's demands for sympathy and emotional support. Stella married in 1897 but she too died suddenly on her return from her honeymoon. Virginia Woolf was sexually abused as a child. Woolf told her family about it, she wrote her family about it in letters, diaries and memories, and her sisters also abused, confirmed it. The details of the abuse are difficult to determine. V. Woolf had sexual relations with her brothers, which had undeniable effects on V. Woolf's adult feelings and writing. Woolf's sexual feelings were affected for the rest of her life -

though she was a woman she has intense with women. V. Woolf and awkward. Socially talkative, witty and woman, but when away life she was often silent. father suffered a slow



married relations was a shy she was a humorous from social Soon, their death from

cancer and he died in 1904 Virginia had her third breakdown. With her sister Vanessa and two brothers Woolf moved from 22 Hyde Park Gate to 46 Gordon Square Bloomsbury⁶. Later it became central to activities of the Bloomsbury group⁷. It originally started off with 10 members and later expanded: Virginia Woolf, E.M. Forster (writer), Lytton Strachey (writer), Leonard Woolf (writer), Roger Fry (artist), Vanessa Bell (artist), Clive Bell (art critic), John Maynard Keynes (economist), Duncan Grant (artist), Desmond McCarthy (journalist). The “Bloomsburies” as they were called, were mostly privileged and well-educated members of the upper middle class. Yet, what separates them from other intellectual groups at the time was that they were the only group to support gay rights, women in arts, pacifism, open marriages, uninhibited sexuality and any other unconventional ideas⁸.

Virginia Woolf's fiction has been approached in many ways: stylistically, especially as an example of modernism, ideologically, as a feminist claiming for the needs and strengths of women, culturally

⁶ Moments of Being, ed.by Jeanne Schilkind, 1976, <file:///A:A%20ShortBiographyofVirginiaWoolf.html>

⁷ The Bloomsbury Group: A Collection of Memoirs and Commentary, edited by Stanford Patrick Rosenbaum, University of Toronto Press, 1995, p.1

⁸ virginiawoolfblog.com

and psychologically investigating real life. In order to understand the mode of V. Woolf's writing style, one should read between the lines of her fiction otherwise stated one should read it in.

The writer was a workaholic and as her husband Leonard said she was working fifteen hours in a day. At an early age she began to write essays, novels. About 1908 Virginia wrote her first novel "The Voyage Out", which was published in 1915. Then she began writing her second novel "Night and Day" and this one was published in 1919. In 1920 Virginia wrote, printed and published a couple of experimental short stories "The Mark on the Wall" and "Kew Gardens". Then followed *Jackob's Room* in 1922, *Mrs Dalloway* in 1925, *The Waves*, *Orlando* and so on. And no one can read her works without becoming aware of her strong views about the position of her own sex. Thus, a very peculiar side of V. Woolf is her feminism: "What a strange delusion it all is! Our point of view they ignore entirely. We are left out. But I am sure that a mind that is purely masculine cannot create, any more than a mind that is purely feminine..."⁹. She believed firmly that women were intellectually the complete equals of men and that they should have the same political, social, educational and cultural rights as they did. In her writings she mainly pointed the limitations and restrictions imposed on her sex. "... her pages are full of that curious sexual quality that comes only when sex is unconscious of itself."¹⁰ Whether unconscious or not, a highly sensitive, "curious sexual quality" is present everywhere in Mrs. Woolf's novels. Her concern with feminist thematics is dominant in "A Room of One's Own" and in it she made her famous statement: "A woman must have money and room of her own if she is to write fiction". There are spots of feminism all over her works as it was constantly in Woolf's mind.

Another characteristic of Virginia Woolf's writing style is the technique of "stream-of-consciousness"¹¹, which reveals the inner world of Woolf's characters. Virginia Woolf is called either a stream-of-consciousness writer or a writer of interior monologue. It is when the author stands between the character and the reader and describes consciousness in the third person. Thus, the reader is never invited to leave the presence of the narrator, who speaks throughout the novels, takes control and shows us what is going on rather than telling us about it. Woolf is eager to give the

⁹ V. Woolf, *Books and Portraits*, London: Hogarth Press, 1977, by Mary Lyon

¹⁰ Virginia Woolf, *A Room of One's Own*, London: Hogarth Press, 1967, pp. 139-40

¹¹ William James, *Principles of Psychology*, New York, 1890

moment in a whole, whatever it includes. She catches the thoughts and the feelings of the characters. While reading V. Woolf's fiction we either stand still in time and in space or we move up and down with the characters' consciousness and while we are doing it the author constantly reminds us that this journey is taking place within an individual's mind – by regular repetition of such phrases as “so it seemed to her”, “she could remember”, “she thought walking” and so on. For example: “How fresh, how calm, stiller than this of course, the air was in the early morning; like the flap of a wave; the kiss of a wave; chill and sharp and yet (for a girl of eighteen as she than was) solemn, feeling as she did, standing there at the open window, that something awful was about to happen; looking at the flowers, at the trees with the smoke winding off them and the rooks rising, falling, standing and looking until Peter Walsh...”¹². Here the language conveys a special sort of mood, a kind of hypnosis, which illustrates the relationship between the reality and un-reality, between the exterior world and the inner world. Another example: “For Heaven only knows why one loves it so, how one sees it so, making it up, building it round one, tumbling it, creating it every moment afresh; but the veriest frumps, the most dejected of miseries sitting on doorsteps (drink their downfall) do the same; can't be dealt with, she felt positive, by Acts of Parliament for that very reason: they love life”¹³. In the above example of stream of consciousness from V. Woolf's *Mrs. Dalloway*, the character of Clarissa is walking to a flower shop. She is noticing beauty around her and feeling happy to be alive. In her happiness she thinks of how a homeless person might be able to see the same things and feel the same happiness. Woolf uses stream of consciousness here as a bit of foreshadowing; Clarissa's husband will later see a homeless woman on the street and have a different impression than Clarissa does here. By introducing the reader to Clarissa's thoughts here on this matter, the reader later is able to understand more of the significance of her husband's different views¹⁴.

One of the chief devices for bringing the gap between the writer's vision and the reader's is the symbol, commonly defined as something that stands for something else: a flower, for example, may be seen as a symbol of particular state. Symbols are generally figurative; that is, they compare or put together two unlike things. Literary symbols are what they symbolize and therefore cannot be

¹² V. Woolf, *Mrs. Dalloway*, London, 2003, p.34

¹³ Woolf, *Mrs. Dalloway*

¹⁴ <http://www.literarydevices.com/stream-of-consciousness/>

abstracted or fully explained. A single item becomes a symbol only when its potentially symbolic meaning is confirmed by something else in the story, just as a point needs a second point to define a line. Potential symbols, direct and indirect hints; these are among the ways in which details may be identified as symbols. Symbols do not exist solely for the transmission of a meaning we can paraphrase: they do not disappear from the story, our memory, or our response once their “meaning” has been sucked out of them. Few symbols can be exhausted or neatly translated into an abstract phrase or equivalent. A symbol can be as brief and local as a metaphor or as extended as an allegory. Though some allegories can be complex, with paraphrasable equivalences, allegories usually imply one-to-one relationships and literary symbols usually have highly complex or even inexpressible equivalences. The ultimate unparaphrasable nature of most symbolic images or stories are not vagueness but richness, not disorder but complexity.

One of her novels “To the Lighthouse” achieved greatest success is a vivid example of symbolic richness. A number of symbolic situations which widen the implications of the book as it proceeds and prevents the reader from identifying its meaning with any single “word”. The lighthouse itself, standing lonely in the midst of the sea, is at once a unique being and the part of the flux history. To reach the lighthouse is, in a sense, to make contact with a truth outside oneself, to surrender the uniqueness of one’s ego to an impersonal reality. Mr. Ramsay who is an egoist constantly seeking applause and encouragement from others, resents his young son’s enthusiasm for visiting the lighthouse, and only years later, when his wife has died and his own life is almost worn out, does he win this freedom from self – and it is significant that Virginia Woolf makes Mr. Ramsay escape from his egoistic preoccupations for the first time just before the boat finally reaches the lighthouse. Here, Mr. Ramsay symbolizes V. Woolf’s father. To his wife’s “delicious fecundity” given in symbols from nature as a “rain of energy” or “rosy-flowered fruit tree laid with leaves and dancing boughts”. Mr. Ramsay opposes a “beak of brass”, the arid scimitar of the male, which smote mercilessly, again and again, demanding sympathy. The violence of these images is obvious, but the archaic, alternative and repetitive phrasing carries an ironic rhetorical comment on its futility. Mr. Ramsay’s ferocity is a conceit, and so is his wife’s grace. These images of beauty and carnage come cheek by jowl with those of Mrs. Ramsay knitting: “Flashing her needles, confident, upright...”. This icon of domesticity is in turn transformed into a figure of power. For example: “Wherever she happened to be, painting, here, in the country or in London, the vision would come to her, and her eyes, half closing, sought something to base her vision on. She looked down the railway carriage, the omnibus; took a line

from shoulder or cheek; looked at the windows opposite; at Picadilly, lamp-strung in the evening. All had been part of the fields of death. But always something- it might be a face, a voice, a paper boy crying standard, News-thrust through, snubbed her, waked her, required and got in the end an effort of attention, so that the vision must be perpetually remade. Now again, moved as she was by some instinctive need of distance and **blue**, she looked at the bay beneath her, making hillocks of the **blue** bars of the waves, and stony fields of the **purpler** spaces, again she was roused as usual by something incongruous. There was a **brown** spot in the middle of the bay. It was a boat. Yes, she realized that after a second. But whose boat? Mr. Ramsay's boat, she replied, Mr. Ramsay; the man who had marched past her, with his hand raised, aloof, at the head of a procession, in his beautiful boots, asking her for sympathy, which she had refused. The boat was now half way across the bay"¹⁵.

Here is another example of a colour symbolism: when Lily Briscoe is wrestling unsuccessfully with her painting, in the first part of the book, she sees the colours as "**bright violet and staring white**", but just as she achieves her final vision at the book's conclusion, and is thus able to complete her picture, she notices that the lighthouse "**had melted away into a blue haze**"; and though she sees the canvas clearly for a second before drawing the final line, the implication remains that this blurring of colours is bound up with her vision. Mr. Ramsay, who visualizes the last, unattainable, step in his philosophy as glimmering red in the distance, is contrasted with the less egotistical Lily, who works with **blues** and **greens**, and with Mr. Ramsay who is indicated on Lily's canvas as "**a triangular purple shape**". **Red and brown** appear to be the colours of individuality and egoism, while **blue and green** are the colours of impersonality. Mr. Ramsay, until the very end of the book, is represented as an egoism, and his colour is **red or brown**; Lily is the impersonal artist, and her colour is **blue**; Mrs. Ramsay stands somewhere between, and her colour is **purple**. **Brown** is the personal colour, the egoistic colour and **blue** belongs to impersonality: the journey to the lighthouse is the journey from the egoism to impersonality.

The stream of consciousness of one character enables us to see individual actions of other characters in their proper symbolic meaning. It is a subtle and effective device.

It would take too much space to discuss the minor devices employed by Virginia Woolf in order to help to expand the meaning into something yet vaguer than any specific thesis. The main theme

¹⁵ Virginia Woolf, *To the Lighthouse*, Wordsworth Classics, 1994, p. 270

concerns the relation of personality; death, and time to each other; the relation of the individual to the sum of experience in general. Many devices are used to suggest this problem – presented less as a problem than as a situation, a quality in life on which the significance of living depends. Minor points such as the characteristic gesture (raising his hand as if to avert something) of Mr. Ramsay, symbolic images (the hand of cleaving the blue sea), specific ideas suggested in the thought process of one or another of the characters – all help to enrich the implications of the story. Here, for example, is Lily Briscoe, symbol of the artist and his relation to experience: “She wanted to go straight up to him and say, “Mr. Carmichael!” Then he would look up benevolently as always, from his smoky vague green eyes. But one only woke people if one knew what to say to them. And she wanted to say not one thing but everything. Little words that broke up the thought and dismembered it said nothing. “About life, about death; about Mrs. Ramsay” – no, she thought, one could say nothing to nobody. The urgency of the moment always missed its mark. Words fluttered sideways and struck the object inches too low. Then one Gave it up; then the idea sunk Back again; the one become like most middle-aged people, cautions, furtive, with wrinkles between the eyes and a look of perpetual apprehension. For how could one express these emotions of the body? Express that emptiness there? (She was looking at the drawing-room steps; they looked extraordinarily empty.) It was one’s body feeling, not one’s mind. The physical sensations that Went with the bare look of the steps had become suddenly extremely unpleasant... Oh, Mrs. Ramsay! she called out silently, to that essence which sat by the boat, that abstract one made of her, that woman in gray, as if to abuse her for having gone, and then having gone, come back again. It had seemed so safe, thinking of her. Ghost, air, nothingness, a thing You could play with easily and safely at any time of day or night, she had been that, and safely at any time of day or night, she had been that, and then suddenly she put her hand out and wung the heart thus... “What does it mean? How do you explain it all?” She wanted to say, turning to Mr. Carmichael again. For the whole world early morning hour into a pool of thought, a deep basin of reality, and one could almost fancy that had Mr. Carmichael spoken, for instance, a little tear would have rent the surface pool. And then? Something would emerge. A hand would be showed up, a blade would be flashed. It was nonsense of course.”¹⁶

¹⁶ Woolf, *To the Lighthouse*, p. 132-133

Over seventy years after her death the writings of Virginia Woolf are a source of continuing power and ever-increasing influence. V. Woolf has been recognized as one of the outstanding feminist writers of the 20th century whose works are dynamically engaged with the political, philosophical, historical and materialist issues of her time. Despite the ever-growing catalogue of writers in the large corpus of the English literature, Virginia Woolf remains a highly original and gifted writer and her writings continue to provide a vibrant meeting place for scholars, creative writers and readers around the world¹⁷.

SUMMARY

This paper aims at revealing a highly original and gifted fiction writer Virginia Woolf's peculiarities as the greatest woman novelist of her time, who changed the form of novel to create a new consciousness for her culture and fractured the stereotypes by expressing emotions through symbolic masks and her famous stream-of-consciousness method. V. Woolf's rich imagination and interests were metaphysical: in her life and in her art, she sought to push beyond existing boundaries in search of a deeper truth that lay beneath the surface. Through V. Woolf's works, the chief problem for her and for her characters is to overcome the space between things, to attain an absolute unity with the world. As a vivid feminist demanding her own intellectual freedom, Virginia Woolf opened the door for the other gifted female writers.

Keywords: Virginia Woolf, feminism, stream of consciousness, symbolic images, individual style, novel, psychiatric disorder

ՎԻՐՋԻՆԻԱ ՎՈՒԼՖԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՃԸ ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հոդվածում ներկայացված են XX դարի ականավոր գրող Վիրջինիա Վուլֆի ստեղծագործական ոճի առանձնահատկությունները: Կոտրելով բոլոր կարծրատիպերը, կիրառելով խորհրդապաշտական ոճ և իր հայտնի «գիտակցության հոսք» տեխնիկան՝

¹⁷ <http://sites.utoronto.ca/IVWS/>

Վուլֆը նոր ձևաչափ հաղորդեց նորավեպին: Թե՛ կյանքում, թե՛ ստեղծագործելիս նա ձգտում էր քանդել առկա պատկերները՝ վերհանելով առերևույթ իրականության շղարշի տակ գտնվող ավելի խորքային խնդիրներ: Վուլֆն իր ստեղծագործություններում կերպարի միջոցով ձգտում էր հասնել ներդաշնակության՝ ժամանակի և տարածության մեջ: Լինելով ակնառու ֆեմինիստ՝ նա մեծ ներդրում ունեցավ հասարակության մեջ կնոջ դերի բարձրացման հարցում:

Հիմնարարներ. Վիրջինիա Վուլֆ, ֆեմինիզմ, «գիտակցության հոսք», խորհրդանշական պատկերներ, անհատական ոճ, նորավեպ, հոգեկան խանգարվածություն:

ИНДИВИДУАЛЬНАЯ МАНЕРА ПИСЬМА ВИРДЖИНИИ ВУЛФ

АНИ ГРИГОРЯН

В статье рассматриваются особенности индивидуальной манеры письма известной писательницы XX века Вирджинии Вулф. Разрушая стереотипы и используя символический стиль, а также известную теорию «потока сознания», писательница придала новый формат новелле. И в жизни, и в своих произведениях она стремилась разрушать препятствия, выявляя глубинные проблемы, скрытые от реальной действительности. С помощью своих персонажей Вулф желала достичь совершенства во времени и пространстве. Будучи яркой феминисткой, она внесла большой вклад в проблему повышения роли женщины в обществе.

Ключевые слова: Вирджиния Вулф, феминизм, «поток сознания», символические представления, индивидуальный стиль, новелла, психическое расстройство.

ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ՓՆՏՐՏՈՒՔԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԷՍՍԵՆԵՐՈՒՄ

ՎԱՐԴՈՒՀԻ ԴԱՎԹՅԱՆ

Կոստան Զարյանը հայ գրականության այն բացառիկ հեղինակներից է, ով, թեև Հայաստանը չտեսած, եվրոպական տարբեր երկրներում հասունացած, այնուամենայնիվ ներթափույց թելերով կապված է ազգային արմատներին, հեռահար ու հեռագնաց, մտովի ու

սրտայի խոսում է նախնիների հետ, խաչուղում հայ ժողովրդի անցյալն ու ներկան, ապագան ու պատմության գնահատականները:

Թեև օտար հրապույրները գերիվեր էին նրա հոգում, սակայն ազգային ոգին աստիճանաբար դառնում է տիրապետող: Իտալական մշակույթի և գրականության զգլխիչ հմայքը զգացող, Դանթեի, Ջոտտոյի ամենատեսությունն ու ամենազգացությունը քննող Կ. Ջարյանը որոշում է գալ հայ գրականության արևմտյան մայրաքաղաքը՝ Կ. Պոլիս: Սա մի յուրատեսակ քայլ էր դեպի հայությունը, թեև հասկանում էր, որ Կ. Պոլիսը իր երազած մշակութային օրրանը չէ: Երկրորդ անգամ Կ. Պոլիս վերադարձն արդեն 1921 թվականին Հայ արվեստի նոր տաճար ու տուն հիմնելու սրբազան գաղափարն էր հետապնդում, սակայն այս անգամ էլ տաճարի միայն ուրվագծերն են արվում: Կ. Պոլսից Երևան մեկնելով՝ Կ. Ջարյանը ցանկանում է հաստատվել այնտեղ, բացահայտել Հայաստանի բեթոնվեյան էությունը՝ բարդ ու ճակատագրապաշտական:

Նույն այդ շրջանում կարդալով նրա էսսեները՝ հասկանում ենք, որ Կ. Ջարյանը ցնցված է Հայաստանով: Այն անձնավորված է գրողի համար. Հայաստանը ոգու և էության մի ներդաշնություն է, որի խորհրդանշանները պետք է հասկանալ և մեկնել: Սակայն նրան պարտադրում են լքել Հայաստանը, հեռանալ՝ իր մեջ կրելով այն, ինչպես տիեզերք, ինչպես մի ճակատագիր՝ նմանվելով դանթեական այն նավին, որը չունի ոչ առագաստ, ու ոչ դեկ և չոր քամուց քշվում է տարբեր կողմեր:

Աստիճանաբար ավելի են թանձրանում գրողի մտորումների ու խոհերի գունդանգները, քննական հայացքը՝ ներազգային հարցերի ու հարցականների հետ կապված:

Կ. Ջարյանի համար ծանր ու դժնդակ է անգիտակցորեն առաջ քաշվող ազգի ճակատագիրը՝ աներազ ու լքավեր: Ըստ նրա, այն ազգը, ով՝ օտարածին ու օտարամոլ, կույր է նոր բացվող արշալույսների նկատմամբ, ազգի ամոթն է: Նրանք ճգարդարված ու սնգուրված դրամի էակներ են՝ անտարբեր ձևերով, կուշտ ու մի քիչ շնացած¹⁸: ՏՊուք,- դիմում է Կ. Ջարյանը,- որ հայ բառը իսկ օտար հնչումով էք արտասանում, Դուք՝ մի կտոր մարդ, մի պատառ հոգի և մի պուտ սնգուրելու ներկ, փայլուն կոշիկների արարած¹⁹:

¹⁸ Կոստան Ջարյան, Դեպի Արարատ, Եր., 2001, էջ 269:

¹⁹ Կ. Ջարյան, Դեպի Արարատ, էջ, 269:

Ազգային անտարբերությունը, կույր ու գուլ լինելու Ֆապահով՝ պահվածքը մերժելի են Կ. Զարյանի կողմից: Ցավոք, Ֆադբատիկ ու հերձոտ՝ հոգիների թիվը քիչ չէ: Նրանք հեռու են պատրանքներից, իսկ երազ ունենալը կարևոր է, նրա թևերով թևելը՝ նույնպես, որպեսզի ստեղծվի մեծ դաշնություն պատրալի հոգու և տիեզերքի միջև:

Հարուստ և պերճ է եղել մեր գրականությունն ու մշակույթը, զերծ Ֆայլախառնված՝ շեշտերից, սակայն, ցավոք, մենք, որ ժամանակին խրոխտ ու ողբերգու թագավորներ ենք տված ու վիրխարի ասպետներ, այսօր վաշխառուներ ու երգիծաբաններ ենք տալիս²⁰, իրատես ու մերկապարանոց հայտարարում է Կ. Զարյանը:

Արտասահմանում ապրող հայ մտավորականները միշտ ցանկացել են հայ գրականությունն ու արվեստը մատուցել օտարի քիմքին, սակայն միաժամանակ պետք էր զգուշանալ դրանց ողբ ու կական խառնելուց: Տոտորածների շուրջ ստեղծված լակկան ճառերը՝ սին և կեղծավոր,- գրում է Կ. Զարյանը,- միայն նսեմացրել են մեզ՝ անտաղանդ և անգոր ոչխարների համբավ ստեղծելով հայ ժողովրդական մասսաների համար!²¹ Այս գնահատականները մեզ հիշեցնում են անգլիագիր գրող Մայքլ Առլենի՝ իրական ենթախորքով այն հաճումները, թե՛ ստույգ է, հայության մեջ շատ թշվառություն կա, սակայն աշխարհը շատ զբաղված է՝ լսելու համար հայոց թշվառությունը, պետք է Տգործ արտադրել: Երկու հեղինակների՝ ներքին հուզումով լեցուն խոսքերը չպետք է թողնեն սխալաշատ տպավորություն: Նրանք ազգային հպարտության գիտակցությամբ են ծառանում հայի խեղճության բարդույթի դեմ:

Գեղագիտական և փիլիսոփայական խորհրդածությունների միջով անցկացնելով հայ ժողովրդի հավաքական գիտակցությունը և հայի ոգու բարձրագույն դրսևորումների նկատմամբ ունեցած հայացքները՝ Կ. Զարյանը դառնում է ավելի ու ավելի պահանջկոտ ու անգիշում: ՏՄեր ամենամեծ թշնամիները,- գրում է Կ. Զարյանը իր մտածումներում,- իմաստակներն են եղած: Գեշ պարտիզպանները: Նրանք, որ ուրիշների աչքերն են փոխ առած, որովհետև չունին սեփական աչք, ուրիշի սիրտը, որովհետև չունին սեփական սիրտ, ուրիշի խելքը, որովհետև չունին սեփական խելք!²²:

²⁰ Նույն տեղում, էջ 280:

²¹ Կոստան Զարյան, Դեպի Արարատ, <<Վարդաատան>>, էջ 281:

²² Նույն տեղում, էջ 298:

Ինքնությունը չկորցնելու, կեցության խաչուղիներում ազգային դիմագիծը չաղճատելու, սեփական գլխով սեփական քայլերը գնահատելու անհրաժեշտության անգիտությունից է, որ Տանցնում ենք կյանքի մոտով: Կիսաքանդ եկեղեցիների շուրջը մատաղ ենք բերում և մատաղ ենք դառնում!²³:

Դարեր ի վեր գրականության և պատմության էջերից անպակաս են եղել պանդուխտն ու գաղթականը: Սոցիալական այս աղետի քնարական ու էպիկական հերոսը հովնաթանյան, քուչակյան տաղերգության ու հայրենեգության մեջ միջնադարյան շնչով ողբացել է իր Տավադիկի-ը: Ապա նոր ժամանակներում Գ. Զոհրապն ու Դ. Վարուժանը, Ավ. Իսահակյանն ու սփյուռքահայ մի ամբողջ գրականություն պատմեցին մեր ժողովրդին պատուհասած սոցիալական չարիքի մասին: Կ. Զարյանն ամենատեսորեն կամեցավ զանազանել գաղթականն ու տարագիրը՝ որպես երկու իրարամերժ վիճակներ: Տգաղթականը, անողորմ պարագաներից մղված, տեղափոխվում է մի որևէ օտար երկիր և ճիգ է անում զետեղվելու ուրիշների կյանքում: Տնտեսական հրամայականի տակ՝ նա պարտադրված է հարմարվելու, նորաձևվելու, կապիկանալու, թութականալու: Լինելու ոչ թե ինքը, այլ ուրիշ:

Նա ստվեր է, որ որոնում է նոր բարոյական մարմին, նոր լեզու, գոյանալու և ապրելու նոր կերպ ու ձև:

Երբ նա գտնում է այդ նոր մարմինը, անհետանում է!²⁴: Ու շարունակվում է սփյուռքահայ խոշոր գրող Շահան Շահնուրի ձևակերպմամբ՝ նահանջը առանց երգի:

ՏՈւրիշ է տարագիրը:

Նա ժամանակավոր այցելու է, անցորդ, որի անհատականությունը հավիտենապես խարսխված է իր իսկության մեջ, իր դարավոր հավաքական ուրույն կազմում, իր ցեղային ենթագիտակցությունում...!²⁵:

Ինքը՝ Կ. Զարյանն էլ ողջ կյանքում քայլեց որպես տարագիր՝ մշտնջենական որոնող հոգով, բաղձող ու չգտնող, լինելով հոգու ծարավով և անոթությամբ տառապողը, շղթայված իր հայրենիքում, կաշկանդված մտքով ու թոփշքով այնպես, ինչպես Դանթեն, Շելլին, Բայրոնը, Ալիշանը: Բայց կարևորը Տհոգևոր գաղթական չլինելն է:

²³ Նույն տեղում, էջ 298:

²⁴ Նույն տեղում, էջ 303:

²⁵ Նույն տեղում:

Ցավոք, երբ շղթայակապ ու անթոփշ է մտավորականը, հայտնվում են տիրացուն և խանութպանը՝ շնացած, վտանգավոր, քանդիչ: Նրանք միշտ են եղել՝ Խորենացիների ու Փարպեցիների, Աբովյանների ու Չարենցների կողքին: Տիրացուն՝ Տտափակոտն, նեղ ճակատ, շրթները չոր և գամված, նախանձից և ռիսից դեղնած այն էակն է, որ իր մտքի փոքրությունը և սրտի խեղճությունը սողալով ի սպաս է դնում ուժեղի և իշխանավորի առջև: Նա տառ ուտող է, ընդհանուր տեղերի խոտը կրծող, ստոր և վրիժառու... Մեջքի վրա պառկած, տոտիկները վեր, արևը վայելող շնիկի նման նա իրեն զգում է աշխարհի կենտրոնում...²⁶:

Եվ ահա խանութպանը՝ ազգի ոգին փողի, հաշիվի պես բոփ մեջ պահած, դրամով որոշող, ամեն ինչ վաճառքի հանած: Իսկական մտավորականները միշտ էլ պայքարել են նրանց դեմ, զսպել նրանց՝ հանճարը հոշոտող ախորժակը, բամբասանքն ու զրպարտությունը:

Ազգային ոգուն ամուր կառչած գրողին գորեղացնում է մշակութային դաշտը, իսկ մշակույթը զարգանում է այնտեղ, ուր տիրապետում է ազնվականությունը և գործում է որակային ընտրության սկզբունքը:

Հայ ազգը հաճախ է նմանվում Տփոթորկալից ծովն ընկած նավարկողի՝ բայց դարեր ի վեր կյանքի պարբերական անշղթայվածությունը զսպվել է ազգի հավաքական ենթագիտակցությամբ: Եվ իրոք, §...հայ ոգին և Հայաստանը ներկա են այնտեղ, ուր ներկա է հայ հավաքական գիտակցության փրկարար հրամայականը²⁷: Հայը, որ ամենաքիչը ուզում է մեկ այլ հայի հանդիպել, դառնում է արժանապատվությամբ լի, հոգատար և ուշադիր, եթե անհրաժեշտ է միասնական փրկություն:

Նյութական աշխարհը միշտ էլ թելադրում է իր օրենքները, բայց գորեղ է այն ազգը, որը չի ընթանում տնտեսական ազդակների հրամայականով, հակառակ դեպքում կտիրապետի <Տկենդանաբանական ժամանակը>:

Ըստ Կ. Զարյանի, որքան էլ §...անակոա առյուծները խոպոտ ձայնով ոռնան և բռնանան ու չարչարեն, Ոգին չեն կարող մարել²⁸:

²⁶ Նույն տեղում, էջ 307:

²⁷ Նույն տեղում, էջ 302:

²⁸ Նույն տեղում, էջ 308:

1920 թվականին Կ. Պոլսի Տոստան՝ հանդեսում Կ. Զարյանը տպագրեց մի սքանչելի էսսե՝ Տեղի Արարատ՝ խորագրով: Չմոռանանք, որ նույն վերնագրով Մայքլ Առլեն Կրտսերը գրեց Տեղարձ դեպի Արարատ՝ ուղեգրությունը:

Երկուսի համար էլ Տեղի Արարատ՝ վերադարձը հայի ոգուն, ազգային արմատներին ու ինքնությանը ընդառաջ գնալու խորհրդանշական իմաստն ունի՝ հետևյալ մասնավորմամբ՝ Կ. Զարյանը իտալական պերճաշուք իրականությունից վերադառնում է տուն, հայրենիք, նախնիների երկիր, իսկ Մայքլ Առլեն Կրտսերը, որ մանկուց հորից լսել էր հորդորները, թե հայերը լավ մարդիկ են, բայց չի կարելի նրանց մոտ թողնել, գալիս է դեպի հայկական ավազան՝ կարծեք քավելու հոր այն խռովահույզ ու պոռթկուն խոստովանություն-մեղքը, թե իր հայ լինելը անեծք է..., բայց ինչ արած, հայ ես ծնվել:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կ. Զարյանը վերադարձավ դեպի սրբազնագույն Արարատը ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև հոգեպես, վերադարձավ դեպի ազգային գաղափարն ու ազգը ճիշտ այնպես, ինչպես Խաչատուր Աբովյանը, որի համար ևս ազգային գոյության և լինելիության անխտոր ուղին գնաց Տեղի լյառը Մասիս՝, դեպի հավերժության, վեհության խորհրդանշիշը:

Հիմնաբառեր. Կոստան Զարյան, ազգային արմատներ, էսսեններ, հայի ոգի, ազգային ոգի, Դեպի Արարատ, Նավատոմար, Հայաստան:

THE SEARCH OF NATIONAL SPIRIT IN ESSAYS BY

KOSTAN ZARYAN

VARDUHI DAVTYAN

Key words: Kostan Zaryan, national roots, essays, armenian spirit, national spirit, to Ararat, Navatomar, Armenia.

Kostan Zaryan is one of the unique authors in Armenian Literature, who in spite of not having seen Armenia and being upbrought in different European countries is closely related with nationale stems.

In his articles and essays he touches upon the theme of our national indifference, the greatest manifestations of armenian spirit, the laws of material world and Armenian power.

His essays entitled „To Ararat, , „Navatomar,, inspire with their content and deepness. K. Zaryan has returned to Armenia for several times, he had to leave his motherland in a deceitful way but never in hatred.

ПОИСК НАЦИОНАЛЬНОЙ ДУШИ В ЭССЕ КОСТАНА ЗАРЯНА

ВАРДУИ ДАВТЯН

Ключевые слова: Костан Зарян, национальные, корни, эссе, армянская душа, национальная душа, к Арарату, Наватомар, Армения.

Костан Зарян в армянской литературе является эксклюзивным автором, который не видел и не жил в Армении, выросли во многих странах Европы, но все-таки был крепко связанны с национальными корнями.

В его эссе и статьях показаны национальное безразличия, законы материального мира и сила армянского народа.

В его произведения «К Арарату», «Наватомар», удивляют остротой и глубиной критики. Костан Зарян несколько раз приезжал в Армению, но его заставляли покинуть родину с обидой, горечью, но не с ненавистью.

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԻ ԿԱՊՈՒՏԻՎՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՒԹՅԱՆ

Համաշխարհային մտքի պատմության մեջ առանձնահատուկ նշանակություն է տրվել մտավորականության դերին: Զարմանալի չէ, որ այն դարձել է գրականության, փիլիսոփայության և հասարակագիտության հիմնախնդիրներից մեկը:

«Մտավորականություն» հասկացության ըմբռնումը գալիս է դարերի խորքից: Հարցի ուսումնասիրողները առաջինը վկայակոչում են խոշոր մտածողներ Հերակլիտին, Սոկրատեսին, Պլատոնին, Մովսես Մարգարեին, Հիսուս Քրիստոսին. «Շատ ավելի մոտ և անմիջական կապեր եմ տեսնում Քրիստոսի իսկական կյանքի և արվեստագետի իսկական կյանքի միջև», և «Պլատոնի կամ Քրիստոսի ասածներից չկա ոչ մի բան, որը հնարավոր չլինի անմիջականորեն տեղափոխել Արվեստի ոլորտը... Քրիստոսի տեղն, իրավ, բանաստեղծների կողքին է»²⁹, - համոզված էր Օսկար Ուայլդը:

Առանձին հետազոտողներ մտավորականության ժամանակակից ըմբռնումները կապում են XIX դարի կեսերի հետ՝ համարելով, որ «մտավորականություն» հասկացությունը քաղաքացիություն է ստացել Ռուսաստանում և լայնորեն տարածվել եվրոպական երկրներում³⁰: «Ո՞վ է մտավորականը և հասարակությունն ի՞նչ է սպասում նրանից» հարցը տարբեր դարաշրջաններում տարամերժ, ոչ միանշանակ պատասխաններ է ստացել: Մտավորականության դերն ու նշանակությունը մեծապես կարևորվել է նաև հայոց մտավոր (հասարակական, քաղաքական) կյանքում: Ուշագրավ են Վ. Տերյանի, Հ. Թումանյանի, Պ. Սևակի, Գ. Նժդեհի, Ա. Ահարոնյանի, Վ. Դավթյանի, Ն. Ադալյանի և այլոց հոդվածներում ու հրապարակումներում արտահայտված տեսակետները մտավորականության մասին:

Գ. Նժդեհը համոզված է, որ հայ մտավորականությունը, որին անվանում է «ազգի հոգևոր ընտրանի»³¹, մեծ առաքելություն ունի, սակայն, դժբախտաբար, հայը սխալ է գործածում մտավորական բառը, սխալ է հասկանում նրա իմաստը: Նա աղետալի թյուրիմացություն է համարում այն, որ մեզանում մտավորական է համարվում «ամեն ուսյալ մարդ»: Նժդեհի համոզմամբ՝ մտավորականը, բացի բարձր բարոյական նկարագրից, բարձր գաղափարներից, նոր իդեալներ, արժեքներ ստեղծելուց, առաջին հերթին պետք է ժողովրդին իր ամբողջության մեջ սիրելու և նրա համար տառապելու կարողություն ունենա:

²⁹ Ուայլդ Օսկար, De profundis // Աստղիկ, 1991, էջ 129:

³⁰ Տես Հովականյան Յու., **Հայ մտավորականությունը և ազգային գաղափարախոսությունը**, Երևան, 2005, էջ 18:

³¹ **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 1, Երևան, 2001, էջ 432:

Պ. Սևակի համոզմամբ՝ «ամեն ճշմարիտ մտավորական իր ժողովրդի անձնագիրն է կամ իր ժողովրդի «դատական գործը»³² :

Վազգեն Շուշանյանի համոզմամբ՝ ազգի հարատևությունը պայմանավորված է իր մտավորականության պահվածքով ու կենսակերպով. «Եթե ազգ մը կուզե ապրիլ ու պեղել իր հոգին՝ ի հայտ բերելու համար հոն թաղված առավելագույն ուժն ու գեղեցկությունը, ան պարտավոր է ունենալ իր մտավորականությունն ու ղեկավարությունը: Ու պարտավոր է նաև իր հանրային գործիչը չվերածել ծապվարյան մուրիկի մը, որ ափը պարզած պաղատի. – Մտավորականներու պնանկն է, անտես մի առեք...»³³:

Վ. Դավթյանի ձևակերպումը ավելի շատ բանաստեղծական-խոհական է: Ըստ այդմ՝ մտավորական է ազգի նվիրյալ յուրաքանչյուր մարդ, ով սիրում է իր հայրենիքը, հողը, սեփական քրտինքով շենացնում իր երկիրը: Այլ կերպ ասած՝ բանաստեղծի համոզմամբ մտավորական է նույնիսկ հողագործ գյուղացին, որը մեծագույն նվիրումով ծաղկեցնում է իր հողը³⁴: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ «Մտավորականությունը ...հասարակության կենդանի հիշողությունն է, նրա ոգին, նրա շարժիչ ուժը, միաժամանակ հասարակության ուսուցիչն է ու դաստիարակը, և վստահորեն կարող ենք ասել, որ վաղը մենք կունենանք այնպիսի հասարակություն, ինչպիսի մտավորականություն ունենք այսօր»³⁵: Եվ որքան էլ տարբեր լինեն տեսակետները և մտավորականությանը տրվող գնահատականները, միանշանակ ընդունվում է, որ հասարակությունը հնարավոր չէ պատկերացնել առանց մտավորականության, որը ոչ միայն հոգևոր արժեքների, հատկապես՝ գիտության և մշակույթի ստեղծողն է, այլև հոգևոր և բարոյական արժեքների կրողն ու վերարժեքավորողը, հասարակությունն առաջ մղող գաղափարական առաջնորդը, ինչպես նաև գաղափարները, գիտելիքները, արժեքներն ու ավանդույթները հաջորդ սերունդներին փոխանցողը, և այս առումով նաև սերունդների միջև կապող օղակը, անցյալի ու ներկայի միջև կամուրջը:

³² Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974, էջ 299:

³³ Շուշանյան Վ., Շքաղբամին մեկ երեսը // Գրական թերթ, 1997, 17 հունիսի, թիվ 23:

³⁴ Դավթյան Վ., Ի սկզբանե էր բանն..., Երևան, 1989, էջ 276:

³⁵ Հովականյան Յու., **նշվ. աշխ.**, 2005, էջ 11:

Հետխորհրդային շրջանում Ն. Ադալյանը հնչեցրեց «Ի՞նչ ազգության է հայ մտավորականը»³⁶ հարցադրումը: Ընդունելով, որ մտավորականությունը ազգի դեմքն է, սիրտն ու ոգին, նրա արմատներից դեպի ճյուղերը տարածվող կենսաբար արյունը, Ն. Ադալյանն, առավել կարևորում է հատկապես փոքր ազգերի մտավորականության դերը՝ որպես ժողովրդի հոգևոր, բարոյական ու մտավոր գործողություններին ուղղություն տվողի³⁷: Ընդունելով հանդերձ, որ ժողովուրդն արժանի է իր մտավորականությանը, Ադալյանը, սակայն, համոզված է, որ մտավորականությունը կարող է, բայց իրավունք չունի իր հարազատ ժողովրդից ցածր լինել թեկուզ և մեկ աստիճան, քանի որ «այդ տխուր վիճակը» ազգի մտավորականությանը կդատապարտի «արհեստական արբանյակի պես պտտվել Երկրի շուրջը՝ մի օր անհիշատակ այրվելու համար»:

Միլվա Կապուտիկյանը այն գրողներից է, որոնց համար մտավորականության հիմնախնդիրը զուտ դրվագային խնդիր չի եղել: Նա ոչ միայն կարևորել է գրողի, մտավորականի դերը հասարակության մեջ, այլև իր ողջ կյանքով, հասարակական-քաղաքական գործունեությամբ դարձել է ճշմարիտ մտավորականի օրինակ:

Դեռ 1953 թվականին Հայաստանի գրողների միության կուսակցական ժողովում Կապուտիկյանը, նշում է, որ ժողովուրդն իրենց է վստահել իր հոգևոր աշխարհը, իր սիրտն ու հոգին, և անընդունելի է համարում մի շարք արատավոր երևույթների գոյությունը մտավորական միջավայրում՝ պաշտոնամոլությունը, գրական և այլ կարգի ղեկավարներին հաճոյանալու միտումը և այլն: Նույն թվականին ունեցած մեկ այլ ելույթում Կապուտիկյանը խոսում է մտավորականության (մասնավորապես՝ գրողների) և կյանքի միջև եղած անջրպետի մասին և այն պատճառաբանում ոչ միայն գրողների ու գրական ղեկավարության՝ երևույթների նկատմամբ սխալ մոտեցմամբ, այլ Կենտկոմի համապատասխան մարմինների՝ գրականության հանդեպ ունեցած անտարբեր վերաբերմունքով:

Կապուտիկյանը մշտապես ընդվզել է հայ մտավորականությանը «նացիոնալիստի» պիտակ կպցնելու դեմ: 1961թ. գրողների կուսկազմակերպության հաշվետու-վերընտրական

³⁶ Ադալյան Ն., Մենախոսություն ժամանակի հետ, Երևան 2006, էջ 55:

³⁷ Նույն տեղում, էջ 55:

ժողովում հնչեցրած ելույթում³⁸ Կապուտիկյանը քննադատում է խորհրդահայ գրողներին մշտապես ազգայնամոլության մեջ մեղադրելու «վերսների» սովորությունը՝ որակելով այն որպես անխիղճ զրպարտություն, քանի որ մեզանում ավելի հաճախ նշվում են այլ ազգերի հիշարժան տոները՝ հոբելաններ, ծննդյան օրեր, քան սեփական ժողովրդի նշանավոր անձանց տարեդարձերը: Որպես ասվածի վկայություն՝ հրապարակախոսը նշում է Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը անտեսելու մեր գրական և կուսակցական ղեկավարության դիրքորոշումը:

Առհասարակ, իր գրական-հասարակական գործունեության ողջ ընթացքում Կապուտիկյանն ընդլայնել-ընդարձակել է գրող-մտավորականի գործունեության և ազդեցության ոլորտները և իր բազմաթիվ հոդվածներում, հրապարակումներում ու ելույթներում մշտապես ուշադրության կենտրոնում պահելով նրան առնչվող հիմնախնդիրները, կարևորել է մտավորականության դերը՝ դրանք վերհանելու, մատնացույց անելու, լուծումներ տալու առումով:

Խորհրդային մտավորականի կյանքն ու գործունեությունը, գրողի համոզմամբ, անցել է մակընթացությունների ու տեղատվությունների տվող հասարակության մեջ, որի ամեն մի ելևէջն իր մաշկի վրա է զգացել յուրաքանչյուր ստեղծագործող անհատականություն: Այդ պայմաններում ինչպիսի՞ կեցվածք պիտի ընդուներ մտավորականը: Կապուտիկյանի կարծիքով, կար երկու ճանապարհ՝ բացահայտորեն ընդդիմանալու և իրականության վերափոխման ծանրագույն խնդրին լծվելու:

Կապուտիկյանն ասվածն ավելի պատկերավոր դարձնելու համար բերում է 20-րդ դարի երկու ռուս մեծ մտավորականներ Ալեքսանդր Սոլժենիցինի և Ալեքսանդր Տվարդովսկու օրինակները: Սոլժենիցինը, ըստ Կապուտիկյանի, երջանկություն ուներ չհավատալու ոչ կոմունիզմին, ոչ խորհրդային կարգերին, ուստի նրա համար ոչինչ չարժեր միանգամից խզել իր բոլոր հարաբերությունները շրջակա իրականության հետ, ապրել ներքնապես ազատ, ամենքից անկախ: Այլ էր Տվարդովսկու պարագան: Նա «տիրող ընդհանուր ոգևորության, նորը կառուցելու ընդհանուր հիպնոսի ազդեցությամբ, հազար ու մի թվերով կապված էր իր ժամանակի հետ, հավատում էր պաշտոնական գաղափարախոսությանն ու կարգերին, և որովհետև խելացի էր, արդարամիտ ու արդարատես՝ զգում էր ու տեսնում այդ

³⁸ Նույն տեղում, էջ 47:

Կապուտիկյանը որպես հասարակական կյանքում մտավորականության կեցվածքի վճռորոշ նշանակության օրինակ նշում է 1965 թ. ապրիլի 24-ի իրադարձությունները: Առաջին անգամ հնարավորություն ունենալով նշելու Մեծ եղեռնի օրը՝ երթի մասնակիցների

⁴¹ Կապուտիկյան Ս., Էջեր փակ գրոցներից, էջ 182:

հուզական լարվածությունն այն աստիճանի է հասնում, որ օպերայում կայացած սգո հանդիսության ժամանակ 1500 հոգու փոխարեն դահլիճ է խուժում մարդկանց հսկայական բազմություն, ինչն էլ, բնականաբար, առաջացնում է անկարգություններ: Ամբողջ գիշերներքին գործերի պատժիչ խմբերը հետապնդում ու ձերբակալում են մասնակիցներին, իսկ հաջորդ օրը մի շարք հիմնարկներում ու կուսկազմակերպություններում կայացած ժողովներում դատապարտում են միջադեպը և պահանջում խստորեն պատժել «խառնակիչներին»: Կապուտիկյանը ցավով փաստում է, որ դատապարտողների թվում եղել է նաև կոմպոզիտորների միությունը: «Ես անչափ անհանգիստ էի, - հիշում է գրողը,- ինձ զգում էի ամեն ինչի համար պատասխանատու. և՛ ցույցերի համար, և՛ օպերայի առջև տեղի ունեցած անկարգությունների համար, և՛, մանավանդ, գիշերը բանտարկված երիտասարդների բախտի համար»⁴²:

Ապրիլի 27-ին գրողների միության կուսակցական կազմակերպության ժողովում Միլվա Կապուտիկյանն իր ելույթում հարցը քննում է Խորհրդային Միության ազգային քաղաքականության դիրքերից՝ ասելով, որ Եղեռնի սգատոնը հայրենիքում չնշելը զենք կդառնար գաղութարարների ձեռքին՝ ուղղված Միության ազգային քաղաքականության դեմ⁴³: Ցեղասպանության տարելիցը պետական մակարդակով նշելը մեկ անգամ ևս կապացուցի աշխարհին «կոմունիստական գաղափարների ճշմարտացիության» մասին. չէ՞ որ «սրահարված» հայ ժողովուրդը միայն խորհրդային կարգերի օրոք սկսեց կառուցել իր հայրենիքը: Հետագայում Կապուտիկյանը այդ մասին գրելիս դիմում է իր ընթերցողներին՝ «Ինչպես տեսնում եք, ասածներիս մեջ բավականին դեմագոգիա կա»: Գրողը հրաշալիորեն գիտակցում էր, որ միայն գաղափարական հարցադրումներով կարող է խոսքը տեղ հասցնել: Արդյունքում, նրա և նրանից հետո ելույթ ունեցած մի քանի գրողների պաշտպանական խոսքը ևս նպաստում է այն բանին, որ Հայաստանի կուսակցական ղեկավարությունը դրական վերաբերմունք դրսևորի ձերբակալվածների նկատմամբ և ազատ արձակի նրանց:

Առհասարակ, ինչպես նշում է Կապուտիկյանը «Էջեր փակ գորոցներից» գրքում, խորհրդային ղեկավարությունը զգուշանում էր հասարակության մեջ ստեղծագործական միությունների ունեցած հեղինակությունից: Ուստի նրանց համախմբվածության ու

⁴² Նույն տեղում, էջ 62:

⁴³ Նույն տեղում, էջ 64:

կազմակերպվածության մեջ մեծ վտանգ զգալով՝ տարբեր ձևերով ու մեթոդներով փորձում էր թուլացնել դրանք: Կապուտիկյանը լավ էր հասկանում, որ դրանով մտավորականները ենթարկվում էին իրենց կարծիքն ու հեղինակությունը միայն կուսակցության նշագծած շրջանակների մեջ օգտագործելու պարտադրանքին: Այսինքն՝ զրկվում էին իրենց բուն կոչմանը ծառայելու հնարավորությունից: Հրապարակախոսը ամեն պատեհ առիթով դժգոհել է այդ վերաբերմունքից ու գործելաճից:

1971թ. խորհրդահայ գրողների 6-րդ համագումարում ունեցած ելույթում Կապուտիկյանը հայտարարում է, որ մտավորականը պատասխանատու է ժողովրդի և՛ լավի, և՛ վատի համար, հետևաբար պետք է կարևորվի նրա դերը պետության մեջ⁴⁴: Ելույթն ամփոփում էր խորհրդահայ կյանքի գրեթե բոլոր հիմնահարցերը՝ անխնա քննադատության ենթարկելով արատավոր երևույթները: «Կապուտիկյանի ելույթը պայթեց ռումբի պես, - վերհիշում է գրող Ա. Սահինյանը, - դեկավարություն կոչվածը սոսկահար, հագիվ նիստն ավարտած, ետևի դռնից չքվեց, խուսափելով բազմության աչքին երևալուց, Կապուտիկյանի ուղղությամբ ֆշշացող հայացքներ նետելով»⁴⁵: Այս ելույթը լայն արձագանք է գտնում նաև ռուս այլախոհ մտավորականության շրջանում՝ բազմացվելով ու ձեռքից ձեռք անցնելով: «...Այլախոհների մեջ իմ «իմիջը» բավական բարձրացավ: Կարդացողները ողջունում էին ելույթի ընդդիմախոսական պաթոսը, ինձ համարյա «իրենցն» էին համարում: Ես մի կողմից ուրախ էի դրա համար, մյուս կողմից՝ սրտումս մշտապես ներկա էր իմ՝ «homo Sovietikus»-ի բնագղական վախը...»⁴⁶: Ի դեպ, հրապարակախոսը անկեղծորեն խոստովանում է, որ իր համարձակությունը ոչ միշտ է հերիքել լինելու սկզբունքային ու աննահանջ: Սա, թերևս, խորհրդային մի ողջ սերնդի խոստովանություն է: Նրա համոզմամբ՝ պատերազմում չվախեցողներ չկան, կան վախը հաղթահարողներ: Գուցե տարօրինակ թվա տվյալ ժամանակաշրջանը իբրև «պատերազմական» բնորոշելը, սակայն դա իսկապես պատերազմ էր ընդդեմ մարդու ինքնությունը ոչնչացնող, խիղճն ու հոգին վաճառելու մղող, մարդկային բարձր որակները տրորող ռեժիմի լարած մեքենայի: Կապուտիկյանը նշում է, որ խորհրդային կյանքի ոլորաններով անցած յուրաքանչյուր մարդու, հատկապես

⁴⁴ Նույն տեղում, էջ 81:

⁴⁵ Սահինյան Ա., Միլվա Կապուտիկյանն այլևս լեզենդ է // Գրական թերթ, 2006, 22 սեպտեմբերի, թիվ 32:

⁴⁶ Կապուտիկյան Ս., Էջեր փակ գլոբոսներից, էջ 99:

մտավորականի մեջ, որը բոլոր իրադարձությունների կիզակետում է, միշտ էլ ներկա է եղել վախի զգացումը, և ինքը բացառություն չի կազմել: Միայն թե իրեն ընդհանուր առմամբ հաջողվել է այն հաղթահարել:

Մտավորականներին, մասնավորապես հայ գրողներին իրենց կոչումը հիշեցնելու հերթական հնարավորությունը հրապարակախոսին ընձեռվում է 1975թ. գրողների միության կուսկազմակերպության ժողովում⁴⁷: Այդ ժամանակ դժվար թե հրապարակախոսը պատկերացներ, որ մի քանի տասնամյակ անց կրկին ստիպված է լինելու անդրադառնալ նույն խնդիրներին, միայն թե քննադատությունը լինելու է ավելի անողորմ ու անզիջում:

Հետագա տարիներին՝ մինչև դարաբաշխի շարժման նախընթաց շրջանը, Կապուտիկյանն իր հրապարակախոսական հոդվածներում թեպետ հատուկ նպատակադրմամբ չի անդրադառնում մտավորականության դերին ու կատարելիք խնդիրներին, սակայն իր գործունեությամբ իսկ մատնանշում է ճշմարիտ մտավորականի պահվածքի ու գործունեության կերպը՝ պահպանելով խոսքի ու գործի զարմանալի ներդաշնակությունը: Շարժման շրջանում մտավորականության նկատմամբ հնչող մեղադրանքներից բաժին է հասնում նաև Կապուտիկյանին: Այդ քննադատական, ժխտողական տրամադրությունների «ամփոփումն» ու գագաթն էր «Պատվերը կատարված է, սպասեք շքանշաններին» հոդվածը⁴⁸, որը հնչեց իբրև խորհրդահայ մտավորականության յուրօրինակ դատավճիռ: Հոդվածագիրը քննադատում է «հայ նոմենկլատուրային մտավորականներին», մեղադրում ստրկամտության, խորհրդրդային վարչակարգին հլու-հնազանդ ծառայելու, իսկ ներկայումս էլ՝ ազգային շահերը դավաճանելու մեջ: «Բոլոր ժամանակներում իշխանությունները կարիք են ունեցել արքունի ներքողագիրների՝ կոչված հլու հնազանդ ծառայելու այդ իշխանություններին, ամրապնդելու նրանց դիրքերը: Մեր օրերում արքունի ներքողագիրների դերը կատարում է նոմենկլատուրային մտավորականությունը,- պնդում է հոդվածագիրը և հավելում.- Քաղաքական նման գործողություններ ձեռնարկելու փոխարեն երկու տարի շարունակ մեր անվանի մտավորականները զբաղված էին այդ գործողությունները տապալելով, ժողովներ,

⁴⁷ Նույն տեղում, էջ 144:

⁴⁸ Տեր-Պետրոսյան Լ., Պատվերը կատարված է, սպասեք շքանշաններին// Հայք, 1990, 6 մայիսի, թիվ 13:

համագումարներ հրավիրելով, ...ազգային ծրագրեր մշակելով...»⁴⁹: Կապուտիկյանը պատասխան հողվածում խոսում է բացառապես փաստերի լեզվով՝ նորօրյա ղեկավարներին հիշեցնելով ոչ միայն իր, այլև խորհրդահայ մտավորականների հայրենանվեր գործունեության մասին: «Ղարաբաղյան նյութերով լցված բազմաթիվ ստվարաթղթե տուփե՞րս դատարան բերեմ, դեռ 60 թվից սկսած աղբբեջանական ակադեմիային, Ալիսին, Բրեժնևին ուղղված նամակ-բողոքնե՞րս մեջտեղ հանեմ, Ղարաբաղին նվիրված բանաստեղծություննե՞րս կարդամ...» դառնամ փառաբանեմ նույնպես Մոսկվա հղած իմ նամակները, հեռագրերը.. »⁵⁰, - վրդովված հարցնում է Կապուտիկյանը: Հետագա տարիներին սահմանափակվում են նրա և մյուս մտավորականների գործունեության սահմանները, մամուլն ու հեռուստատեսությունը խուսափում են նրանց լայն լսարան տրամադրել, Կապուտիկյանն, այդուհանդերձ, օգտագործում է բոլոր հնարավորությունները՝ իր նպաստը հասարակական-քաղաքական կյանքին բերելու համար:

Այս շրջանում Կապուտիկյանի անմիջական մասնակցությամբ հայ գրողների համաժողովի կողմից նամակ է ուղղվում Համայն աշխարհի գրողներին, մշակույթի գործիչներին⁵¹, Մեծ Բրիտանիայի վարչապետ, տիկին Մարգարետ Թետչերին⁵², Բաց նամակ՝ սփյուռքահայությանը⁵³, ընդունվում են հայ մտավորականների հայտարարությունը, Հայաստանի ստեղծագործական միությունների դիմումը ռուս հասարակայնությանը և այլն: Նամակ-դիմումների հիմնական թեման Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակն է, նաև ներքաղաքական մի շարք հարցերի լուսաբանումը, միջազգային հանրության ուշադրությունը մեր հարցի վրա սևեռելն ու լուծման եղանակներ գտնելը: Այս բոլոր նամակներն իրար շաղկապված են ներքին մի բովանդակությամբ, գրված են այն հաստատ համոզմամբ, որ մտավորականության ձայնը չի անտեսվի, բախտորոշ կլինի, որ

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Կապուտիկյան Ս., Էջեր փակ գրողներից, էջ 506:

⁵¹ Նույն տեղում, էջ 490:

⁵¹ Նույն տեղում, էջ 514:

⁵² Նույն տեղում, էջ 514:

⁵² Նժդեհ Գ., Հատընտիր, Երևան, 2006, էջ 208:

«վտանգված ազգի փրկության համար մեծ բանաստեղծն ավելի կարևոր է, քան մեծ գորավարը»:⁵⁴ Վերջին շրջանի իր հրապարակախոսության մեջ գրողը հաճախ է անդրադառնում ժողովրդի և մտավորականության՝ հետխորհրդային տարիներին ձևավորված փոխհարաբերությանը: Նա անընդունելի է համարում այն, որ երկրի համար բախտորոշ ժամանակաշրջանում միավորվելու, համախմբվելու փոխարեն հայ մտավորականությունը դուրս մնաց դեպքերի հորդահոս ընթացքից, դարձավ ոչ միայն անմիաբան, այլև չեզոք ու անտարբեր: 1994 թ. Հայաստանի գրողների համագումարում նա ահազանգում է, որ մեզանում գոյություն ունի մտավորականության բևեռացում. նրա մի մասը վերածվել է իշխանությանն սպասարկող մարմնի, որոշ մասն էլ դժվարությամբ հոգում է իր սոցիալական խնդիրները (ավելի ուշ նա մտավորականությանն անվանում է կառավարության «դամ պահող» դուդուկահար): Նույն համագումարում Կապուտիկյանը նշում է, որ նույնիսկ խորհրդային բռնապետության տարիներին բազմաթիվ արգելքների ու ճնշումների ընդդիմանալով՝ հայ մտավորականությունը ծառայեց համազգային շահերին. «Մեր ոգին, թեև երբեմն ընկրկեց, տեղի տվեց, անցավ ընդհատակ, սակայն, ամբողջության մեջ, մնաց անշիջանելի»⁵⁵: Այդ «անշիջանելի» ոգին էր, գրողի համոզմամբ, որ բռնկվեց արցախյան շարժման սկզբում՝ ոտքի հանելով հայ ժողովրդին: 1996 թ. մի ելույթում հրապարակախոսը քննադատում է երկու ժամանոց մի հեռուստահաղորդման ժամանակ մեր մտավորականների ամոթալի պահվածքը, նրանց դրվատող ելույթներն ու գովեստները «հաղթող նախագահի» հասցեին: Հաղորդմանն, ի դեպ, մասնակցում էր նաև Համո Սահյանը: Ահա թե ինչ է պատմում գրականագետ Շ. Դավթյանն այդ մասին. «...Բոլորս էլ գիտեինք, որ նրան մի կերպ համոզել-տարել էին, հանձնարարել էին, թե ինչ պիտի ասի: Բայց տեղ հասնելով զգացել էր, որ նախագահի թեկնածուի մասին՝ որպես քաղաքական գործչի ասելիք չունի, որոշել էր գիտական վաստակից խոսել: Սակայն դրանից էլ անտեղյակ էր, ուստի պիտի այնպիսի բան ասեր, որին ոչ ինքը հավատար, ոչ էլ լսողները»⁵⁶: Գրականագետի վկայությամբ՝ Հ. Սահյանը հետագայում զղջաց, ինքն իրեն չներեց այդ քայլը: Ժամանակին նրան չներեցին նաև մտերիմներն ու գրչընկերներից շատերը, այդ թվում նաև Ս. Կապուտիկյանը:

⁵⁵ Կապուտիկյան Ս., Չեմ կարող լռել, էջ 85:

⁵⁶ Դավթյան Շ., Համո Սահյան. Բանաստեղծի հավատամքը, Երևան, 2004, էջ 200-201:

Հրապարակախոսը մարգարեական է համարում «Պատվերը կատարված է, սպասեք շքանշաններին» հոդվածի այս տողերը. «Բոլոր ժամանակներում իշխանությունները կարիք են ունեցել արքունի ներքողագիրների՝ կոչված հլու-հնազանդ ծառայելու այդ իշխանություններին, ամրապնդելու նրանց դիրքերը»⁵⁷: Կապուտիկյանն ինքը, սակայն, երբեք չվերածվեց արքունի ներքողագրի: «Ըմբոստ ու ազատ մարդ էր, ոչ մի թելադրանք ու պարտադրանք չհանդուրժող, միայն իր սկզբունքներին ու իդեալներին հետևող: Ոչ մի իշխանություն չկարողացավ ստիպել նրան ծառայելու իրեն. ծառայեց միայն ժողովրդին, մարդկանց»⁵⁸: Ըմբոստության դրսևորում էր Կապուտիկյանի ելույթը 1996թ. Ազատության հրապարակում: Նա դեմ է արտահայտվում նախագահի թեկնածուին՝ իր ընդդիմությունը բացատրելով նաև նրանով, որ վերջին տարիներին ոչնչացվում է ազգի հոգևոր ներուժը, տեղի է ունենում «ուղեղների արտահոսք»: Այդ շրջանում հրապարակախոսին մտահոգել են նաև ստեղծագործական խնդիրները, գրական նոր սերնդի դավանած սկզբունքները, գրականություն-ժողովուրդ կապի թուլացումը և այլն: Ապագայությունը, ըստ Կապուտիկյանի, գրական ժամանակակից սերնդի «կրեդոն» է: Հայրենասիրական պոեզիան մերժելու այդ սերնդի միտումը հրապարակախոսը համարում է անչափ վտանգավոր, իսկ նրանց ստեղծածը՝ կյանքից ու իրականությունից կտրված, արևմտյան մշակույթի նորամուծություններն արհեստականորեն կրկնող գրականություն: Մտավորականության գերակշիռ մասի սոցիալական թշվառ վիճակը նա համարում է համազգային ողբերգություն: Կապուտիկյանի համոզմամբ՝ ժողովուրդը հոգեկան լիցքերի կարոտ ունի, և միայն «հաց ու աշխատանք» ապահովելը քիչ է հոգեղենությամբ ապրող հայի համար. «Այն ժամանակ, երբ դեռ շարունակվում են դարաբաղյան հակամարտություններն ու գնալով ադրբեջանական քարոզչությունը դառնում է ավելի լկտի ու հարձակողական,... որքա՞ն բարոյական կլինի, եթե հայ գրողն ու արվեստագետը, բերանը ջուր առած՝ քաշվի մի կողմ»⁵⁹, - հարցնում է նա: Նրա համոզմամբ՝ գրողն ի սկզբանե կոչված է ժողովրդի մասը կազմել, պաշտպանել նրա կարիքները, լինել հասարակության խիղճը: Իսկ քանի որ անարդարություններն ու ժողովրդի կարիքները շատ են, ինքը ստիպված է եղել հաճախ խոսել: Այսպես է մեկնաբանում իր

⁵⁷ Տեր-Պետրոսյան Լ., նշված հոդվածը:

⁵⁸ Եղիազարյան Ա., Կապուտիկյանն ուրիշ ժամանակների աստղ էր// Գրական թերթ, 2006, 1 սեպտեմբերի, թիվ 29:

⁵⁹ Կապուտիկյան Ս., **Վերջին գանգ**, էջ 302:

«անհաշտության» պատճառը գրողը: Կապուտիկյանը նաև մի հետաքրքիր դիտարկում է անում: Նա հիշում է, որ խորհրդային տարիներին, երբ մտավորականությունը տագնապ էր հնչեցնում որևէ խնդրի նկատմամբ՝ պետական դեմքերը դա պարզապես զգացմունքային պոռթկում էին համարում: Բայց հետո, երբ «ջրերը գուլավում էին, միշտ պարզվում էր, որ միայն զգացմունքներով առաջնորդվող մարդիկ ներքին բնագործ, արվեստագետին բնորոշ կռահման ուժով մատը ճշգրտորեն վերքի վրա են դրել»⁶⁰:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ս. Կապուտիկյանի հրապարակախոսության մեջ առաջնային նշանակություն է տրվում մտավորականության հասարակական դերին: Հրապարակախոսը չի բացարձակացնում հայ մտավորականության գործունեությունը: Հասարակական կյանքում բազմաթիվ հիմնախնդիրների առկայությունը նա համարում է նաև մտավորականության անկազմակերպվածության, հարմարվողականության և անտարբերության հետևանք: Այս առումով նա ընդունում է, որ ինքն էլ առանձին դեպքերում ունի մեղքի իր բաժինը, սակայն, այդուհանդերձ, Ս. Կապուտիկյանի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իր ապրած կյանքով, իր տաղանդը անմնացորդ կերպով ժողովրդին ծառայեցնելով, ճշմարիտ մտավորականի օրինակ է:

Հիմնաբառեր. մտավորականության ժամանակակից ըմբռնումները, ազգի հոգևոր ընտրանի, ազգի հարատևություն, հոգևոր և բարոյական արժեքների կրող, նորը կառուցելու ընդհանուր հիպնոս, համաշխարհային քաղաքակրթություն, ելույթի ընդդիմախոսական պաթոս:

SYLVIA KAPUTIKIAN'S PERCEPTION OF THE SOCIAL ROLE OF INTELLIGENTSIA

GAYANE HAKOBIAN

Keywords: modern perception of intelligentsia, spiritual nation, nation's eternity, carrier of moral and spiritual values, global civilization, opponent pathos of speech, true intellectual.

⁶⁰Կապուտիկյան Ս., Չեմ կարող լռել, էջ 359:

The social role of intelligentsia is primary in Sylvia Kaputikian's work. According to Kaputikian, only a nation that has strong intellectual potential can have its place in global civilization. She considers the intelligentsia as enlighteners and leaders. However, the writer does not absolutize the activity of the Armenian intelligentsia. She believes the presence of multiple problems in social life is a result of intelligentsia's lack of organization, its adaptation, and indifference. Kaputikian accepts that in some cases she also has her share of fault. Nevertheless, the studies on her activity show that Kaputikian is an exemplary intellectual who dedicated her life and talent to the people of Armenia.

КАПУТИКЯНСКОЕ ПОНИМАНИЕ ОБЩЕСТВЕННОЙ РОЛИ ИНТЕЛЛИГЕНЦИИ

ГАЯНЕ АКОПЯН

Ключевые слова: Современные концепции интеллигенции, духовный отбор нации, долговечность страны, носитель духовных и моральных ценностей, мировая цивилизация, пафос оппонентской речи, истинный интеллигент.

В публицистике С. Капутикян передовое значение уделяется общественной роли интеллигенции. Согласно Капутикян, только страна с высоким интеллектуальным потенциалом может занимать место на арене мировой цивилизации. Не зря же она приписывает интеллигенции миссию факельщика, директива. Однако публицист не абсолютизирует деятельность армянской интеллигенции. Не случайно, что наличие многих проблем в общественной жизни она считает следствием неорганизованности, приспособления и безразличия интеллигенции. В этом плане она принимает, что она сама тоже в отдельных случаях имеет свою долю вины, но тем не менее изучение деятельности Капутикян показывает, что своей прожитой жизнью, преданно обслуживая своим талантом народу, она является примером истинного интеллектуала.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՐՆԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Մարդկային կապիտալն արդի տնտեսագիտության մեջ, ինչպես նաև տնտեսական պրակտիկայում ինտենսիվորեն արմատավորվող կարևոր հասկացություններից է, որը զուտ տնտեսագիտական բովանդակությունից զատ մեր օրերում ձեռք է բերում տեսական-փիլիսոփայական ու ընդհանուր սոցիոլոգիական երանգ: Հատուկ կարևորություն ու հրատապություն է ստանում, մասնավորապես, հումանիզմի հետ մարդկային կապիտալի առնչության, հումանիստական աշխարհընկալման դիրքերից նրա քննական վերլուծության, այդ հասկացության հումանիստական չափման պարզաբանման հարցը:⁶¹

⁶¹ Մարդկային կապիտալ տնտեսագիտական կատեգորիան անցել է պատմական էվոլյուցիայի երկարատև ուղի և ձևավորվել է աստիճանաբար: Նրա տարրերը սկիզբ են առել վաղնջական ժամանակներից, երբ երևան են եկել առաջին գիտելիքները և կրթական համակարգը: Սկզբնական շրջանում նրանում ներառվում էին կրթությունը, դաստիարակությունը, գիտելիքները և առողջությունը, որոնք բարձրացնում են մարդու՝ աշխատելու ընդունակությունը: Տևական ժամանակ մարդկային կապիտալը համարվում էր միայն զարգացման սոցիալական գործոն, այսինքն տնտեսագիտության տեսանկյունից՝ ծախսային բաղադրիչ: Ընդունված էր, որ կրթության մեջ կատարվող ներդրումները անարտադրողական են, իրենց բնույթով՝ զուտ ծախսային բեռ՝ տնտեսության համար: Անտեսվում էր, որ իրականում հենց կրթության և գիտության մեջ կատարված ներդրումներն անցյալում ապահովեցին Արևմտյան քաղաքակրթության առաջնացիկ զարգացումը Չինաստանի, Հնդկաստանի և մյուս երկրների համեմատությամբ: Քաղաքակրթությունների ու երկրների զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ մարդկային կապիտալը հնում էլ եղել է զարգացման հիմնական գործոններից մեկը՝ կանխորոշելով որոշ երկրների հաջողությունը և մյուսների ձախողումը: Արևմտյան քաղաքակրթությունն իր զարգացման որոշակի փուլում շահեց ավելի հին քաղաքակրթությունների դեմ պատմական գլոբալ մրցությունը՝ հենց մարդկային կապիտալի, ներառյալ կրթության ավելի արագ աճի շնորհիվ: 18-րդ դարի վերջին արդեն Արևմտյան Եվրոպան մեկուկես անգամ առաջ էր անցել Չինաստանից և Հնդկաստանից բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի ցուցանիշով և երկու անգամ՝ բնակչության գրագիտության մակարդակով: Այս հանգամանքը՝ տնտեսական ազատության հետ մեկտեղ դարձան այն հիմնական գործոնները, որոնք ապահովեցին եվրոպական ազգերի, ԱՄՆ-ի ու անգլոսաքսական մյուս երկրների տնտեսական հաջողությունները: Այս առումով հատկանշական է Ճապոնիայի օրինակը: Թեև երկիրը դարեր շարունակ վարել է ինքնամեկուսացման քաղաքականություն, սակայն ստեղծել է իր ուրույն ու ինքնատիպ քաղաքակրթությունը, որտեղ միշտ բարձր է եղել մարդկային կապիտալի մակարդակը, ներառյալ կրթության ու կյանքի տևողության ցուցանիշը: 1913-ին Ճապոնիայում չափահաս բնակչության ուսման միջին տևողությունը եղել է 5,4 տարի, Իտալիայում՝ 4,8 տարի, իսկ կյանքի միջին տևողությունը կազմել է 51 տարի՝ գրեթե նույնքան, որքան Եվրոպայում և ԱՄՆ-ում: Ռուսաստանում այդ ցուցանիշները հավասար են եղել համապատասխանաբար 1-1,2 և 33-35 տարիների: Դա է հիմնական պատճառներից մեկը, որ մարդկային կապիտալի մեկնարկային մակարդակով Ճապոնիան 20-րդ դարում կատարեց տեխնոլոգիական թռիչք և դուրս եկավ աշխարհի առաջավոր երկրների շարքը (տե՛ս Мельянцев В. Счастье от ума // Известия, 2000, 17 мая. Корчагин Ю.А. Современная экономика России, Ростов-на-Дону, Феникс, 2008): Այնուհետև կրթության և գիտության՝ որպես տնտեսության և հասարակության զարգացման

Մարդկային կապիտալ հասկացությունն արդի պայմաններում ձեռք է բերում հասարակական արտադրության առաջընթացի վճռորոշ բաղադրիչի, հետինդուստրիալ հասարակության զարգացման հիմնարար գործոնի, նրա շարժիչ ուժի նշանակություն: Թեև գիտական գրականության մեջ շրջանառվում են «մարդկային կապիտալ» հասկացության մի շարք բնորոշումներ, սակայն դրանք իմաստային որոշ նրբերանգներով հանդերձ՝ իրենց բովանդակությամբ ընդհանուր առմամբ համընկնում են: Իր դասական բնորոշմամբ մարդկային կապիտալն այն գիտելիքների, հմտությունների, կարողությունների ու վարպետության ամբողջությունն է, որով օժտված է աշխատողը և որոնք նա ձեռք է բերում

գործոնի կարևորության ըմբռնումը փոխվեց: Ե՛վ կրթությունը, և՛ գիտությունը, իբրև մարդկային կապիտալի բաղադրիչներ, և՛ ինքը մարդկային կապիտալն իր ամբողջության մեջ սկսեցին դիտվել որպես ժամանակակից տնտեսության աճի ու զարգացման, հասարակական առաջադիմության և կյանքի որակի բարձրացման գլխավոր գործոն: 20-րդ դարասկզբին մարդկային կապիտալի հասկացությունն էականորեն ընդարձակվեց՝ այդ հարյուրամյակի երկրորդ կեսին հանգեցնելով դրա նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխության (տե՛ս Корчагин Ю.А. Российский человеческий капитал: фактор развития или деградации? Воронеж, ЦИРЭ, 2005): 1960-ականներից մարդկային կապիտալ հասկացությունը մուտք է գործում գիտական գրականության մեջ և լայն լուսաբանում գտնում ամերիկյան հայտնի տնտեսագետներ Թեոդոր Վիլիամ Շուլցի և Գարի Ստեյնլի Բեկկերի աշխատություններում, հեղինակներ, ովքեր մարդկային կապիտալի տեսության ստեղծման համար արժանացան Էկոնոմիկայի ասպարեզում Նոբելյան մրցանակների՝ Շուլցը 1979-ին, Բեկկերը՝ 1992-ին: Մարդկային կապիտալի տեսության մշակման մեջ ծանրակշիռ է հատկապես Շուլցի վաստակը, ով առաջինն է ձևավորել ու շրջանառության մեջ դրել այդ հասկացությունը՝ այն դիտելով որպես կարևոր արտադրողական գործոն, ինդուստրիալ և հետինդուստրիալ տնտեսությունների գլխավոր շարժիչ ուժ: Տնտեսագիտական վերլուծության ենթակելով թույլ զարգացած երկրների վիճակը, Շուլցը հանգում է այն եզրակացության, որ բնակչության աղքատ խավերի բարեկեցության աճը կախված է ոչ այնքան հողից, տեխնիկայից կամ նրանց անձնական ջանքերից, որքան նրանց գիտելիքների պաշարից: Տնտեսության այդ որակական ասպեկտն էլ նա անվանել է «մարդկային կապիտալ»: Մարդկային բոլոր ունակությունները, ըստ Շուլցի, կամ բնածին են, կամ ձեռքբերովի: Յուրաքանչյուր մարդ ծնվում է գեների անհատական կոմպլեքսով, որոնք և որոշում են նրա բնածին ունակությունները: Իսկ մարդու կողմից ձեռքբերված արժեքավոր հատկանիշները, որոնք կարող են ուժեղացվել համապատասխան ներդրումներով, նա անվանում է մարդկային կապիտալ: Մարդու մեջ կատարվող ներդրումների հիմնական արդյունքը Շուլցը համարում էր մարդկանց՝ աշխատելու ունակությունների կուտակումը, հասարակության մեջ նրանց արդյունավետ ստեղծարար գործունեությունը, առողջության պահպանումը և այլն: Նրա կարծիքով՝ մարդկային կապիտալն օժտված է արտադրողական բնույթի անհրաժեշտ հատկանիշներով: Մարդկային կապիտալը, ըստ նրա, ունակ է կուտակման ու վերարտադրման: Նրա գնահատմամբ՝ հասարակության մեջ արտադրվող համախառն արդյունքից մարդկային կապիտալի կուտակման համար օգտագործվում է արդեն ոչ թե 1/4-ը, ինչպես դա ընդունված էր XX դարի վերարտադրության տեսությունների մեջ, այլ այդ համախառն արդյունքի ընդհանուր մեծության 3/4-ը: Բեկկերն առաջինը «մարդկային կապիտալ» հասկացությունը փոխադրեց միկրոմակարդակ՝ ձեռնարկության մարդկային կապիտալը բնորոշելով որպես մարդու հմտությունների, գիտելիքների ու կարողությունների ամբողջություն և նրանցում կատարվող ներդրումները հանգեցնելով հիմնականում կրթության և ուսուցման ծախսերին:

ընդհանուր ու մասնագիտական կրթության, պրոֆեսիոնալ պատրաստվածության, արտադրողական փորձի շնորհիվ:⁶²

Մարդկային կապիտալը հանդես է գալիս որպես տնտեսական աճի, հասարակության և ընտանիքի զարգացման կարևոր ու ինտենսիվ արտադրողական գործոն, ինովացիոն տնտեսության և գիտելիքների տնտեսության՝ որպես զարգացման հաջորդ՝ բարձր փուլի ձևավորման ու զարգացման գլխավոր շարժիչ ուժ: Այն ներթափանցում է ամբողջ տնտեսական ու հասարակական օրգանիզմի մեջ և ապահովում դրանց բնականոն կենսագործունեությունն ու զարգացումը: Մարդկային կապիտալը նպաստում է տնտեսության զարգացմանն ու աճին՝ տնտեսական ու արտադրական գործունեության բոլոր ոլորտներում, խթանում աշխատանքի որակի ու արդյունավետության բարձրացումը հասարակության կենսագործունեության ու կենսաապահովման բոլոր ոլորտներում:

Համաշխարհային գիտատեխնիկական ու սոցիալ-տնտեսական առաջընթացի արդի փուլի համար բնորոշ է մարդկային գործոնի դերի ու նշանակության աննախադեպ աճը տնտեսության մեջ և հասարակական կյանքում: Մարդկային կապիտալը դառնում է տնտեսական աճի, արդի էկոնոմիկայի՝ գիտելիքների էկոնոմիկայի զարգացման ինտենսիվ բաղադրիչ, բացառիկ կարևոր ու վճռորոշ գործոն: Որոշ գնահատումների համաձայն՝ զարգացած երկրներում ուսման տևողության մեկ տարվա ավելացումը, որպես կանոն, բերում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 5-15% աճի: Դա է պատճառը, որ մեր ժամանակների համար բնորոշ է դարձել մարդկային կապիտալի ու հատկապես կրթության մեջ կատարվող ներդրումների և՛ ծավալների, և՛ տեսակարար կշռի անընդհատ աճը: Աշխարհի զարգացած երկրներում արդեն 1990-ականներին մարդկային կապիտալի մեջ էր ներդրվում բոլոր միջոցների 70%-ը, իսկ ֆիզիկական կապիտալի մեջ՝ միայն 30%-ը:⁶³

⁶² Լայն իմաստով մարդկային կապիտալը տնտեսական զարգացման, հասարակության և ընտանիքի զարգացման ինտենսիվ արտադրական գործոն է, որն իր մեջ ներառում է աշխատանքային ռեսուրսների կրթված մասը, գիտելիքները, մտավոր ու կառավարչական աշխատանքի գործիքակազմը, ապրելու և աշխատանքային գործունեության միջավայրը, որոնք ապահովում են մարդկային կապիտալի՝ որպես զարգացման արտադրողական գործոնի արդյունավետ ու ռացիոնալ գործունեությունը: Համառոտ՝ մարդկային կապիտալը դա ինտելեկտն է, առողջությունը, գիտելիքները, որակյալ ու արտադրողական աշխատանքը և կյանքի որակը (Տե՛ս Корчагин Ю.А. Широко понятие человеческого капитала. Воронеж, ЦИРЭ, 2009):

⁶³ Այդ թվականներին ԱՄՆ-ում, օրինակ, կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության վրա կատարվող ընդհանուր ծախսերը ավելի քան 3 անգամ գերազանցում էին արտադրական կապիտալի ներդրումները:

Զարգացման այդ միտումների արդյունքում մարդկային կապիտալն արդի տնտեսության մեջ դարձել է ինչպես երկրների ազգային հարստության, այնպես էլ տարածաշրջանների, տեղական կազմավորումների ու կազմակերպությունների հարստության տիրապետող ձև: Զարգացած երկրների ազգային հարստության մեջ մարդկային կապիտալի բաժինը ներկայումս կազմում է 70-80%:

Զգտումը դեպի կրթությունը, գիտելիքը թելադրվում է տնտեսական կյանքի ամբողջ ընթացքով:⁶⁴ Որակյալ ու ինտելեկտուալ աշխատանքի բարձր վարձատրությունն էլ հենց այն գլխավոր գործոնն է, որը զարգացած երկրներում մարդկանց մղում է դեպի կրթությունն ու գիտելիքը: Իր հերթին՝ մտավոր աշխատանքի բարձր հեղինակությունը, գիտելիքների տնտեսության համար նրա արտակարգ նշանակությունը ծնում է ինչպես ամբողջությամբ վերցրած երկրի, այնպես էլ արտադրության ճյուղերի և ձեռնակությունների հավաքական ինտելեկտի ուժեղացման հզոր սիներգետիկ ազդակներ և վերջին հաշվով բարձրացնում երկրի մարդկային կապիտալի ստեղծարար ներուժը:

Զարգացման այդ միտումների ուժով է նաև, որ թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրների, այդ թվում նախկին խորհրդային հանրապետությունների համախառն ներքին արդյունքի մեջ ոչ որակյալ աշխատանքի բաժինը գնալով նվազում է, իսկ տեխնոլոգիապես առաջատար երկրներում այն արդեն աննշան չափեր է կազմում:

Նկատենք մեկ ուրիշ օրինաչափություն ևս: Մարդկային կապիտալի ցածր մակարդակի ու որակի պայմաններում բարձր տեխնոլոգիական ճյուղերում կատարված ներդրումներն անհրաժեշտ արդյունք չեն տալիս:

Մարդկային կապիտալ հասկացության հետ սերտորեն առնչվում է ազգային մարդկային կապիտալ հասկացությունը, որը հանդես է գալիս որպես մարդկային կապիտալի հավաքական, ընդհանրացնող ցուցանիշ:

Ազգային մարդկային կապիտալը տվյալ երկրի մարդկային կապիտալն է, որն այդ երկրի ազգային հարստության կարևոր բաղկացուցիչ մասն է: Այն ընդգրկում է սոցիալական,

⁶⁴ 1990-ին ԱՄՆ-ում տարրական կրթությամբ աշխատողի՝ ամբողջ կյանքի ընթացքում ստացած համախառն եկամուտը կազմել է միջին հաշվով 756 հազար դոլար, բարձրագույն կրթությամբ աշխատողինը՝ 1720 հազար դոլար, այսինքն՝ շուրջ 2,3 անգամ ավել:

քաղաքական կապիտալը, ազգային ինտելեկտուալ գերակայությունները, մրցութային առավելությունները և ազգի բնական պոտենցիալը:

Ազգային մարդկային կապիտալը կազմում է աշխարհի զարգացող երկրների ազգային հարստության ավելի քան կեսը, զարգացած երկրների ազգային հարստության՝ 70-80%-ից ավելին:⁶⁵ Ազգային մարդկային կապիտալի առանձնահատկությունները յուրաքանչյուր տվյալ երկրում պատմականորեն պայմանավորված են եղել տվյալ երկրի քաղաքակրթական զարգացմամբ: Այն 20-րդ դարում եղել և այժմ էլ մնում է տնտեսության ու հասարակության զարգացման գլխավոր ինտենսիվ գործոնը:

Համաշխարհային մարդկային կապիտալի հիմնական մասը կենտրոնացած է աշխարհի զարգացած երկրներում: Դրա հիմնական պատճառն այն է, որ այդ երկրներում, հատկապես վերջին 50 տարիներին, մարդկային կապիտալի մեջ կատարվող ներդրումները զգալիորեն գերազանցում են ֆիզիկական կապիտալի մեջ կատարվող ներդրումներին: Շրջանառության մեջ է մտել այսպես կոչված մարդկային գիտելիքի լներեջ հասկացությունը, որն իրենից ներկայացնում է ձեռնարկության մարդկային կապիտալի արժեքի հարաբերությունը նրա սեփական միջոցների նկատմամբ և որը կենսունակ տնտեսություն ունեցող երկրներում դրսևորում է աճի միտում:⁶⁶

Համաշխարհային մարդկային կապիտալի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 365 տրիլիոն դոլար կամ համաշխարհային հարստության 66%-ը⁶⁷:

⁶⁵ Ст'ю Экономическая теория. Трансформирующая экономика (под редакцией Николаевой И.П.), М., Юнити, 2004:

⁶⁶ ԱՄՆ-ում եթե մարդու մեջ կատարվող ներդրումների և արտադրական ներդրումների հարաբերակցությունը (կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության ծախսերի հարաբերությունը արտադրական ներդրումների նկատմամբ) 1970-ին եղել է 194%, ապա այդ նույն ցուցանիշը 1990-ին կազմել է 318 %: Марцинкевич В., Соболева И. Экономика человека, М., Аспект пресс, 1995, стр. 47.

⁶⁷ ԱՄՆ-ում 20-րդ դարի վերջին մարդկային կապիտալի արժեքը կազմել է 90 տրիլիոն դոլար կամ երկրի ազգային հարստության 77, իսկ աշխարհի մարդկային կապիտալի ընդհանուր արժեքի շուրջ 26%-ը: Չինաստանի մարդկային կապիտալի ընդհանուր ծավալը կազմում է 25 տրիլիոն դոլար կամ երկրի ամբողջ ազգային հարստության 77%-ը: Դա կազմում է համաշխարհային մարդկային կապիտալի 7%-ը կամ ԱՄՆ-ի այդ ցուցանիշի 26%-ը: Բրազիլիայում այդ թվերը կազմում են համապատասխանաբար՝ 9 տրիլիոն դոլար, 74%, 2% և 9%, Հնդկաստանում՝ 7 տրիլիոն, 58%, 2% և 7%, Ռուսաստանում՝ 30 տրիլիոն դոլար, 50%, 8% և 32%: «Յոթնյակի» և Եվրամիության երկրների բաժինը կազմել է համաշխարհային մարդկային կապիտալի 59%-ը, որը նրանց ազգային հարստության 78%-ն է:

Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գնահատմամբ ներկա համաշխարհային տնտեսությունում հարստության ընդհանուր ծավալի 16%-ը ձևավորում է ֆիզիկական կապիտալը, 20%-ը՝ բնական կապիտալը, իսկ մնացած 64%-ը ձեռք է բերվում մարդկային կապիտալի միջոցով: Հատկանշական է նաև այն, որ եթե, օրինակ, 1880 թվականին զարգացած երկրների համախառն կապիտալի մեջ ֆիզիկական կապիտալի բաժինը կազմել է 80, իսկ մարդկային կապիտալինը 20%, ապա 21-րդ դարի սկզբին այդ ցուցանիշները փոխել են իրենց տեղերը, այդ երկրների համախառն կապիտալի մեջ մարդկային կապիտալի բաժինը կազմել է 80%:

Մարդկային կապիտալի միջուկը եղել և մնում է մարդը, սակայն ներկա պայմաններում՝ արդեն բարձր պրոֆեսիոնալիզմով օժտված կրթված, արարող ու նախաձեռնող մարդը: Մեր օրերում տնտեսության ու կառավարման բոլոր օղակներում հենց կրթված պրոֆեսիոնալներն են մեծապես որոշում աշխատանքի արտադրողականությունն ու արդյունավետությունը:

Մարդիկ արտադրության այն եզակի տարրերն են, որոնք ընդունակ են արժեք արտադրելու, բարիք ստեղծելու: Մյուս բոլոր փոփոխականները՝ փողը, հումքը, նյութերը, մեքենաներն ու սարքավորումները, էներգիան ու մյուս գումարեկները՝ որքան էլ անհրաժեշտ ու կարևոր, սակայն արտադրության լոկ պասսիվ բաղադրիչներ են, պոտենցիալ հնարավորություններ: Իրենց այդ բնույթի բերումով նրանք ինքնին ոչինչ չեն կարող ստեղծել և չեն ստեղծում: Նույնիսկ համակարգիչներն ու ծրագրերը, որքան էլ դրանք հզոր ու խորապես մշակված լինեն, ոչ մի արժեք չեն կարող արարել, քանի դեռ մասնագետի հմուտ ձեռքերը չեն դիպել դրանց ստեղնաշարին, շարժման մեջ չեն դրել և չեն իրացրել այն պոտենցիալը, որ ներդրված է դրանց ծրագրային ապահովման մեջ:

Գիտության զարգացումը, տեղեկատվական հասարակության ձևավորումը որպես զարգացման բարդ ու ինտենսիվ գործոնի՝ մարդկային կապիտալի բաղադրամաս է առաջադրում բնակչության ու հատկապես առաջատար մասնագետների գիտելիքները, կրթությունը, առողջությունը, կյանքի որակը, որոնք որոշում են ազգային տնտեսությունների կրեատիվությունը և ինովացիոնությունը: Դա առանձնահատուկ ձևով է դրսևորվում հատկապես համաշխարհային տնտեսության գլոբալացման, տարածաշրջանից՝

տարածաշրջան, երկրից՝ երկիր, քաղաքից՝ քաղաք կապիտալների, այդ թվում մարդկային կապիտալի ազատ հոսքի, միջազգային սուր մրցակցության, բարձր տեխնոլոգիաների արագընթաց զարգացման պայմաններում:

Մարդկային կապիտալի զարգացման մի շարք ցուցանիշներով (չափահաս բնակչության գրագիտություն, կրթության միջին տևողություն և որակ, անվճար բուժօգնություն և այլն) Հայաստանը, ինչպես նաև հետխորհրդային մյուս երկրները մինչև 1990-ականները գտնվում էին բարձր մակարդակ ունեցող երկրների շարքում: Սակայն այսպես կոչված բարեփոխումների անհաջող ընթացքը հատկապես սոցիալական ոլորտում, երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ռազմավարության և հեռանկարային ու արդյունավետ սոցիալական քաղաքականության բացակայությունը հանգեցրին նրան, որ մարդկային կապիտալի զարգացման հիմնական ցուցանիշները ներկայումս զգալիորեն վատթարացել են: Եվ կարելի է ասել, որ այդ երկրներում բարեփոխումների հետագա ընթացքը մեծապես կախված կլինի այդ նեգատիվ միտումների հաղթահարումից և մարդկային կապիտալի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումից: Դա է այդ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության բարեկեցության բարձրացման գրավականը: 20-րդ դարի երկրորդ կեսից տնտեսության մեջ մարդկային կապիտալի դերի նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխությունը, հետինդուստրիալ հասարակությունում մտավոր պոտենցիալի՝ որպես արտադրության աճի կարևոր ռազմավարական բաղադրիչի նոր ըմբռնումը եկան հաստատելու, որ հենց մարդկային կապիտալն է իր գերիշխող դերով հանդիսանում ժամանակակից ինովացիոն տնտեսության՝ որպես տնտեսության զարգացման հաջորդ՝ բարձր փուլի ստեղծման գլխավոր գործոնը: Ակներև է, որ նոր պայմաններում տնտեսության մրցակցային առավելությունները և արդիականացման հնարավորությունները մեծապես որոշվում են հենց կուտակված ու իրացված մարդկային կապիտալով, որ հենց մարդիկ են իրենց գիտելիքներով, որակավորմամբ ու փորձով որոշում հասարակության տեխնոլոգիական, տնտեսական ու սոցիալական արդիականացման սահմաններն ու հնարավորությունները, հենց նրանք են ձևավորում հասարակական արտադրության նոր ճյուղը՝ տեղեկատվական-մտավոր արտադրանքի ինդուստրիան:

Արդի համշխարհային տնտեսության հիմքը ինովացիոն մարդկային կապիտալն է: Ինովացիոն պրոցեսը մեր օրերում հանդես է գալիս որպես արտադրության ու նրա արդյունքի մրցունակության ապահովման, արտադրողականության և դրանով իսկ՝ ինչպես

ձեռնարկության, այնպես էլ ամբողջությամբ վերցրած տնտեսության արդյունավետության բարձրացման հիմնական ուղի: Ինովացիոն տնտեսությունն ստեղծվում ու զարգանում է կուտակված մարդկային կապիտալի որակի ու արժեքի աճի հետ համատեղ, մարդկային կապիտալի զարգացմանը զուգընթաց: Ընդ որում՝ որակյալ մարդկային կապիտալը հանդիսանում է նրա զարգացման գլխավոր գործոնը և գիտելիքների տնտեսության հիմքը՝ որոշելով վերջինիս ինչպես ընթացիկ մակարդակը, այնպես էլ զարգացման վերին սահմանը:

Ինովացիոն տնտեսությունը որպես արդի տնտեսության մոդել, իրենից ներկայացնում է կյանքի բարձր որակի, ինտելեկտի, կրթության, գիտության և բարձրորակ մարդկային կապիտալի տնտեսություն: Դա տնտեսության այնպիսի տեսակ է, որը հիմնված է ինովացիաների հոսքի, մշտական տեխնոլոգիական կատարելագործման, բարձր հավելյալ արժեք ունեցող արտադրանքի արտադրության և ինչպես դրա, այնպես էլ բուն տեխնոլոգիաների արտահանման վրա: Մյուս կողմից՝ ինովացիոն տնտեսությունն այն տնտեսությունն է, որն ընդունակ է կուտակել ու բազմապատկել դրական ստեղծարար մարդկային կապիտալը և խոչընդոտել դրա բացասական, քայքայիչ բաղադրիչի կուտակմանը: Ինովացիոն տնտեսությունն իր մեջ ներառում է մի շարք բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ են միջազգային չափանիշներով մրցունակ մակարդակի հասնելու համար: Դրանց թվում են կրթությունը, գիտությունը, մարդկային կապիտալն ամբողջությամբ վերցրած՝ ներառյալ կյանքի բարձր որակը և բարձր որակավորման մասնագետները, ինովացիոն համակարգը, որն ընդգրկում է օրենսդրական բազան, ինովացիոն համակարգի նյութական բաղադրիչները (տեխնոլոգիաների տրանսֆերի կենտրոնները, տեխնոպոլիսները, ինովացիոն կենտրոնները, կլաստերները, բարձր տեխնոլոգիաների տարածքների յուրացումը, վենչուրային բիզնեսը և այլն), նորություններն իրականացնող իննովացիոն արդյունաբերությունը, մարդկային կապիտալի գործունեության բարենպաստ միջավայրը: Տնտեսության ինովացիոն համակարգը, էլիտայի, հասարակության ու պետության կրեատիվ մասը հանդիսանում են բարձրորակ մարդկային կապիտալի կուտակման աղբյուրները, կապիտալ, որը և որոշում է տվյալ երկրի, տարածաշրջանի, կազմակերպության զարգացման ուղղությունն ու տեմպերը: Մյուս կողմից՝ կուտակված մարդկային կապիտալն է ընկած իննովացիոն համակարգի և տնտեսության հիմքում: Այնպես որ մարդկային կապիտալի և իննովացիոն տնտեսության զարգացման պրոցեսները կազմում են ինվեստիցիոն-տեղեկատվական հասարակության և նրա տնտեսության ձևավորման ու զարգացման միասնական պրոցեսը: Անցումը «գիտելիքների

հասարակությանը» կամ «տեղեկատվական հասարակությանը» սկզբունքային փոփոխություններ է մտցնում բուն աշխատանքի պրոցեսի մեջ:

Մարդկային կապիտալի տեսության ու պրակտիկայի հիմքի վրա աշխարհի առաջատար երկրներում ձևավորվում է տնտեսական զարգացման նոր պարադիգմա, որի համաձայն ինովացիոն տնտեսությունում շահույթը հիմնականում ստեղծում են նորարարների ու գիտնականների ինտելեկտը, արդի տեղեկատվական տեխնոլոգիաները, ընդհանրապես տեղեկատվական ոլորտը, այլ ոչ թե նյութական արտադրությունը կամ ֆինանսների (կապիտալի) կենտրոնացումը: Տեղեկատվության առանձնահատուկ նշանակությունն ու կարևորությունն արդի տնտեսության և ամբողջությամբ վերցրած հասարակության կյանքի համար արտահայտվում է նաև հետինդուստրիալ առաջավոր տնտեսությունների անվանման մեջ՝ «տեղեկատվական հասարակություն», «ինովացիոն-տեղեկատվական տնտեսություն» կամ «գիտելիքների տնտեսություն», որոնք կազմում են ինովացիոն տնտեսության բարձրագույն փուլը:

Մարդկային կապիտալ կատեգորիայի վերլուծությունը մեզ բերում է այն համոզման, որ մեր օրերում խիստ տարածված այդ հասկացությունը՝ իր տնտեսական արտակարգ կարևորությամբ հանդերձ՝ զուրկ է մարդասիրական բովանդակությունից, հումանիստական չափումից:

Մարդկային կապիտալի բոլոր տեսությունների համար այսպես թե այնպես բնորոշ է բուն հումանիստական պրոբլեմատիկայի շրջանցումը, հումանիստական չափման անտեսումը, մարդկային անհատի հանգեցումը սոսկական «արտադրողական ուժի», որը թվում է, թե զուրկ է հոգևոր կեցությունից, մարդկային պահանջմունքների բազմազանությունից ու հարստությունից:

Թեև մարդկային կապիտալի՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի ըմբռնումը տեղեկատվական հասարակության և գիտելիքների տնտեսության զարգացման հետ միասին անընդհատ ընդարձակվում է՝ ընդգրկելով նորանոր բաղադրիչներ և այն դարձնելով արդի տնտեսական առաջընթացի բարդ ինտենսիվ գործոն, սակայն մարդը շարունակվում է դիտվել սոսկ որպես արտադրության տարր, որի միակ չափումն արտադրական գործունեությունն է, ուրիշի համար կատարվող աշխատանքը, ուրիշի շահույթի ավելացումը:

Հումանիզմի հետ ոչ մի ուղղակի աղերս չունի այն միակողմանիությունն ու սահմանափակությունը, որ մարդկային կապիտալի տեսաբանները ցուցաբերում են այդ պրոբլեմը հետազոտելիս: Մարդու պրոբլեմը քննության առնելով զուտ տնտեսական հարթության վրա՝ նրանք հանիրավի շեշտը դնում են մարդու գործունեության միայն արտադրական կողմի վրա, նրա մարդկային բազմապիսի պահանջմունքներն ու շահերը հանգեցնելով զուտ արտադրական պահանջմունքների և շահերի:

Մարդը նրանց գրչի տակ հանդես է գալիս սոսկ որպես որոշակի արտադրական ֆունկցիաների կրող, որը շարժման մեջ է դնում արտադրության մյուս բաղադրիչները:

Արտաքին աշխարհի հետ մարդու հարուստ կապերն ու հարաբերությունները հանիրավի անտեսվում են՝ դրանք միակողմանիորեն հանգեցվելով նրա արտադրական կապերին ու հարաբերություններին, առարկայական-պրակտիկ գործունեությանը:

Շրջանցվում են մարդու՝ որպես ամբողջական սոցիալական էակի կենսական մյուս, հատկապես հոգևոր պահանջմունքները, նրա մարդկային էության դրսևորումների բազմազանությունն ու հարստությունը:

Եվ եթե մարդկային կապիտալի կոնցեպցիայի շրջանակներում շոշափվում էլ են մարդու ինտելեկտի, գիտելիքների, առողջության, կյանքի որակի և այլնի հետ կապված հարցեր, ապա միայն այն չափով, ինչ չափով դրանք առնչվում են մարդու միայն արտադրական, աշխատանքային գործունեության հետ:

Հումանիստական չափումը բացակայում է արդեն իսկ մարդկային կապիտալի դասական դասակարգման մեջ, երբ այն բաժանվում է՝ 1. անհատական մարդկային կապիտալի, 2. ֆիրմայի (ձեռնարկության) մարդկային կապիտալի, 3. ազգային մարդկային կապիտալի:

Մատնանշված երեք դեպքերում էլ մարդկային կապիտալը դիտվում է սոսկ որպես արտադրողական գործոն, արտադրության պրոցեսի կարևոր ու վճռորոշ բաղադրիչ, սակայն ոչ իբրև մարդու՝ որպես հոգևոր էակի բազմազան պահանջմունքների բավարարման միջոց, նրա էությունը բնութագրող հատկանիշ:

Անտեսվում է մարդկային կեցության հոգևոր-բարոյական կողմը, այն, որ կրթության ու մյուս բաղադրիչների հետ մեկտեղ՝ հոգևոր գործոնները պետք է կազմեն մարդկային

պոտենցիալի զարգացման անբաժանելի բաղադրիչը, մարդու հոգևոր կերպարի ձևավորման, աշխարհի նկատմամբ նրա հոգևոր վերաբերմունքի հիմքը:

Թեև որոշ տեսաբաններ, կարծես, նկատում են այն միակողմանիությունն ու հումանիզմի սկզբունքների անտեսումը, որն իր հետ բերում է մարդկային կապիտալ հասկացության առօրյա, ուտիլիտար ըմբռնումը, մասնավորապես այն փորձերի անընդունելիությունն ու վտանգավորությունը, որոնցով հավասարության նշան է դրվում մարդկային կապիտալ ու մարդկային պոտենցիալ հասկացությունների միջև, այնուամենայնիվ՝ այս դեպքում էլ շոշափվող պրոբլեմի հումանիստական ասպեկտն իր ամբողջության մեջ մնում է նրանց ուշադրությունից դուրս: Օրինակ, Յու.Ա.Կորչագինը, ով մարդկային կապիտալ հասկացությունը դիտում է որպես ավելի լայն տնտեսագիտական կատեգորիա, քան մարդկային գործոն և մարդկային ռեսուրս կատեգորիաները, այնուամենայնիվ այդ հասկացության ծավալը սահմանափակում է մարդու միայն այն պահանջմունքներով, որոնք անհրաժեշտ են նրան՝ որպես արտադրողական գործոնի:

Հանդես գալով մարդկային կապիտալի ու մարդկային պոտենցիալի նույնացման գաղափարի դեմ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ.Պ.Շչետինինը գտնում է, որ մարդկային պոտենցիալը կարող է մարդկային կապիտալի վերածվել միայն վարձու աշխատանքի պրոցեսում:⁶⁸

Ավելին՝ որոշ տեսաբաններ ճիշտ ու կոռեկտ չեն համարում մարդկային պոտենցիալի հանգեցումը մարդկային կապիտալի նույնիսկ վարձու աշխատանքի տիրապետության շրջանակներում՝ դրա մեջ տեսնելով անցանկալի ու նույնիսկ վտանգավոր միտումներ:

“Человеческий капитал в инновационной экономике” հոդվածում տնտեսագիտության թեկնածու Յու.Ն.Անդրեևը,⁶⁹ անդրադառնալով մարդկային պոտենցիալի և մարդկային

⁶⁸ Щетинин В.П. Человеческий и вещественный капитал - общность и отличие, <http://www.situation.ru>

⁶⁹ Андреев Ю.Н. Человеческий капитал в инновационной экономике.

<http://www.rudocs.exdat.com/docs/index-355268.html>

կապիտալի հարաբերակցության հարցին, վարձու աշխատանքի շրջանակներում զարգացման ինովացիոն ուղին մարդկային պոտենցիալի՝ մարդկային կապիտալի վերածման հետ շաղկապելը՝ իր ամբողջ ֆորմալ համոզությամբ հանդերձ՝ համարում է կասկածելի մոտեցում: Այս առումով բնորոշ է, որ նույնիսկ այն դեպքում, երբ որոշ տնտեսագետներ գտնում են, որ մարդկային կապիտալի արժեքի չափումն ունի երկու ասպեկտ՝ տնտեսական ու հոգևոր և որ հետևաբար՝ արժեքային ներդրումների բոլոր պարամետրերը պետք է լինեն մարդկանց՝ որպես և՛ տնտեսական միավորի, և՛ հոգևոր միավորի պարամետրեր՝ միևնույն է մարդը նրանց մոտ վերջին հաշվով հանդես է գալիս սոսկ որպես արտադրական միավոր, որին պետք է ենթարկված լինեն նրա բոլոր, այդ թվում հոգևոր չափումները:

Այս ամենի հետևանքով ինքը՝ մարդու աշխատանքային, արտադրական գործունեությունը դադարում է նրա՝ որպես սոցիալական էակի ինքնահաստատման ակտ, պրակտիկ ունիվերսալության բարձրագույն դրսևորում լինելուց, իսկ ինքը՝ մարդը հանդես է գալիս սոսկ որպես արտադրական պրոցեսի բաղադրիչ, որի գլխավոր կոչումը արտադրանքի թողարկումն է, ուրիշի հարստության ավելացումը՝ իր կենսական ուժերի միակողմանի դրսևորման, դրանց օտարման հաշվին:

Մարդկային կապիտալի տեսությունը խոցելի է նաև ընդհանուր-հումանիստական տեսանկյունից: Եվ դա ամենից առաջ այն պատճառով, որ նրանում հանիրավի անտեսվում է այն կոնցեպտուալ սկզբունքը, որ մարդկային աշխատանքը ինքնաբավ նպատակ չէ, այլ սոսկ միջոց, որը կոչված է ծառայելու ոչ միայն մարդկանց պահանջմունքների բավարարմանը, այլև (որ շատ կարևոր է) նրանց ֆիզիկական ու հոգևոր պոտենցիաների դրսևորմանը, մարդկային կոչմանն արժանի պայմանների ստեղծմանը, մարդկային ուժի ազատ ու անկաշկանդ զարգացմանը:

Լռության է մատնվում այն հանգամանքը, որ հասարակական առաջադիմության բարձրագույն նպատակը, նրա իդեալը արտադրողական ուժերի զարգացման և աշխատանքի արտադրողականության այնպիսի մակարդակի ձեռքբերումն է, երբ հասարակությունը կարողանում է նվազագույն աշխատանքային ծախսումներով և աշխատօրվա նվազագույն տևողությամբ ստեղծել մարդկանց ապրելու և արարելու համար անհրաժեշտ նյութական և հոգևոր բարիքներ, և հասարակական հարստության չափանիշն էլ այդ դեպքում դառնում է մարդկանց ոչ թե աշխատանքային, այլ ազատ ժամանակը, այսինքն այն ժամանակը, որը

նրանք տրամադրում են իրենց կենսական ուժերի ու պոտենցիաների դրսևորմանն ու զարգացմանը: Հենց այս ուղիով է իրականանում մարդկային կեցության ներքին խորհուրդը՝ պատմական անցումը անհրաժեշտության թագավորությունից դեպի ազատության թագավորություն, երբ մարդու ստեղծագործական ձիրքերի բացարձակ դրսևորումը, մարդկային ուժի զարգացումն առհասարակ հանդես է գալիս որպես հասարակական առաջընթացի գլխավոր նպատակ:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է արդի սոցիալ-տնտեսագիտական գիտության կենտրոնական կատեգորիաներից մեկի՝ մարդկային կապիտալի սոցիալ-փիլիսոփայական էության իմաստավորմանը, կատեգորիա, որը վերջին տասնամյակում ավելի ու ավելի է արմատավորվում հասարակական կյանքում: Հումանիզմի դիրքերից քննական վերլուծության են ենթարկվում այդ հիմնախնդրի վերաբերյալ արդի գիտական գրականության մեջ առավել լայն տարածում գտած մի շարք մոտեցումներ: Ցույց է տրվում այն տեսակետների սահմանափակությունն ու միակողմանիությունը, որոնք մարդկային կապիտալը հանգեցնում են զուտ տնտեսական ֆենոմենի, իսկ մարդուն՝ միայն արտադրողական ֆունկցիաներ կրողի՝ անտեսելով անհատի հարուստ ու համակողմանի հոգևոր շահերն ու պահանջմունքները: Մատնանշվում է նաև, որ մարդկային կապիտալի նման մեկնաբանությունն անխուսափելիորեն տանում է դեպի հասարակական հարաբերությունների, բուն աշխատանքի պրոցեսի դեհումանիզացիա, նրանից իսկական մարդկային էության դուրսմղում. որի հետևանքով աշխատանքը մարդու՝ պատմության կերտողի պրակտիկ ունիվերսալության բարձրագույն դրսևորումից վերածվում է նրա գոյության հասարակ միջոցի:

Հիմնաբառեր. հումանիզմ, մարդ, մարդկային կապիտալ, ֆիզիկական կապիտալ, բնական կապիտալ, ազգային հարստություն, հետինդուստրիալ հասարակություն, ինովացիոն տնտեսություն, անհատի հոգևոր պահանջմունքներ:

HUMAN CAPITAL IN THE CONTEXT OF THE HUMANIST WORLD ENVIRONMENT

GRIGOR ASATRYAN

Key words: humanism, human, human capital, physical capital, natural capital, national wealth, postindustrial society, innovative economy, spiritual needs of the individual.

The article is dedicated to the comprehension of the social-philosophical gist of the human capital – one of the central categories of the modern social-economical science, which is intensely radicalizing in the social life during the last decades.

From humanistic perspectives, a number of the most popular in modern scientific literature approaches to said problem are analyzed. Shown is the narrow-mindedness and one-sidedness of the points of view, which regard the human capital only as an economical phenomenon, and the human being – as the bearer of industrial functions; those which disregard the wide and diverse spiritual interests and demands of an individual. The fact that the human capital will inevitably lead to dehumanization of social relations, of the very process of labor, to forcing the true human being out of it, to converting the lofty act of affirmation of a human's – the creator of history – practical universality into a simple tool for his existence.

ЧЕЛОВЕЧЕСКИЙ КАПИТАЛ В КОНТЕКСТЕ ГУМАНИСТИЧЕСКОГО
МИРОВОСПРИЯТИЯ

ГРИГОРИЙ АСАТРЯН

Ключевые слова: гуманизм, человек, человеческий капитал, физический капитал, природный капитал, национальное богатство, постиндустриальное общество, инновационная экономика, духовные запросы личности.

Статья посвящена осмыслению социально-философской сущности человеческого капитала – одной из центральных категорий современной социально-экономической науки, интенсивно укореняющейся за последние десятилетия в общественной жизни.

В ней с гуманистических позиций подвергается критическому анализу ряд наиболее распространенных в современной научной литературе подходов к данной проблеме.

Показывается узость и однобокость точек зрения, рассматривающих человеческий капитал лишь в качестве экономического феномена, а человека - как носителя сугубо производственных функций, и игнорирующих богатые и разнообразные духовные интересы и запросы личности. Акцентируется и то, что подобная интерпретация человеческого капитала неизбежно ведет к дегуманизации общественных отношений, самого процесса труда, вытеснению из него подлинно человеческого начала, превращению труда из высшего акта утверждения практической универсальности человека - творца истории - в простое средство его существования.


ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՐՈՒԹՅԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ

Ակտիվների արժեթղթավորումը տնտեսական համակարգում հանդես գալով որպես ֆինանսավորման ինովացիոն գործիք, աստիճանաբար իր զարգացումն է ստացել և ներկայումս իրագործվում է տարբեր մոդելներով: Որպես կանոն, ակտիվների արժեթղթավորումը առանձնանում է տարբեր ինստիտուտացիոնալ կառույցների ներդաշնակ գործունեությամբ: Տնտեսական համակարգում համարվելով որպես ֆինանսական ռեսուրսների համակացման և ներդրումային հոսքերի վերաուղղման գործիք, արժեթղթավորումը ի տարբերություն վարկավորման, լիզինգի կամ ֆակտորինգի, համեմատաբար առավել ընդգրկուն գործառույթներ է իրականացնում, և այս առումով միջնորդային և ոչ միջնորդային ստորաբաժանումների լայն շրջանակ է պահանջում:

Ակտիվների արժեթղթավորման գործընթացում ընդգրկված են մի շարք ինստիտուցիոնալ օղակներ, որոնք փոխլրացնում են միմանց և ամբողջական դարձնում պասիվ ակտիվների համակենտրոնացումն ու դրանց իրացվելիության աստիճանի բարձրացումը:⁷⁰ Այս առումով, մասնագիտական գրականությունում կարծիք է հայտնվում, որ ՀՀ-ում ակտիվների արժեթղթավորման գործընթացում լուրջ խոչընդոտներ են հանդիսանում ինստիտուցիոնալ կառույցների գործունեության ոչ կատարյալ լինելը, հայաստանյան ներդրողների անպատրաստվածությունը և անվստահությունը

⁷⁰ Գազազյան Ե.Է., Հիփոթեքային վարկերի արժեթղթավորման և երկրորդային շուկաների ստեղծման հարցի շուրջ, //Բանբեր Երևանի համալսարանի, 3(120), 2006, էջ 187-194:



Ֆինանսական այս նոր գործիքի նկատմամբ, ինչպես նաև խոշոր ինստիտուցիոնալ ներդրողների (կենսաթոշակային ֆոնդեր, ներդրումային հիմնադրամներ) պասիվ առնչությունը նման գործառնություններին:⁷¹

Հաշվի առնելով ակտիվների արժեթղթավորման ինստիտուցիոնալ կառույցների փոխհամաձայնեցման բարդություններն ու ռիսկերը, մասնագիտական գրականությունում նաև կարծիք է հայտնվում, որ դրամական միջոցներ ներգրավելիս գործարարության ոլորտում առավել նպատակահարմար է սինդիկացված վարկեր ձեռքբերելը, քան կորպորատիվ արժեթղթեր թողարկելը, որն ավելի ժամանակատար ու ծախսատար գործընթաց է: Առավել ևս, երբ ոչ բոլոր կազմակերպություններն են համաձայն իրենց վերաբերող տեղեկատվության բացահայտմանն այնպիսի մակարդակով, ինչպիսին պահանջվում է արժեթղթերի թողարկման դեպքում:⁷²

⁷¹ Թովմասյան Ա., ՀՀ արժեթղթերի շուկայի առկա վիճակը և դրա հնարավոր մասնակցությունը անշարժ գույքի արժեթղթավորման գործընթացում, //Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, #9-10, (181-182), 2015, էջ 39-41:

⁷² Մամիկոնյան Կ., Հավաքական (սինդիկացված) վարկերի տրամադրման համաշխարհային փորձի օգտագործումը ՀՀ-ում, Բանքեր ՀՊՏՀ, 2(26), 2012, էջ 63-75:

Գծապատկեր 1 Ակտիվների արժեթղթավորմանը մասնակցող

ինստիտուցիոնալ կառույցներ⁷³

Կիրառման առումով ակտիվների արժեթղթավորումը պահանջում է ինստիտուցիոնալ տարբեր կառույցների համակցում, որոնց գործունեության ներդաշնակության բացակայության պարագայում պարզապես կխաթարի ֆինանսավորման այս գործիքի օգտագործումը: Ընդհանրական կտրվածքով այդ ինստիտուտները արժեթղթավորման պարագայում հանդես են գալիս երեք խմբով՝ դրամական հոսքեր կառավարող, վստահություն ապահովող և թողարկում ու տեղաբաշխում ապահովող կառույցներ (տես գծապատկեր 1), որոնցից յուրաքանչյուրը իր օժանդակությունն է ցուցաբերում ակտիվների արժեթղթավորման ամբողջական իրագործմանը: Ընդ որում, այդ կառույցները կարող են գործել փոխկապակցված կամ առանձնացված,⁷⁴ տարբեր ոլորտներում կամ աշխարհագրական տեղանքներում, սակայն նպատակ ունենալով ստեղծելու ակտիվների արժեթղթավորումը ապահովող պայմաններ, և սպասարկելու այդ գործընթացի անխափան ու կայուն ընթացքը:

Որպես կանոն, ինստիտուցիոնալ կառույցների գործունեության համակցման տեսանկյունից ակտիվների արժեթղթավորումը առավել բարդ է հիփոթեքային վարկերի օգտագործման պարագայում, երբ կիրառվում են ֆինանսատնտեսական բազմաշերտ գործարքներ: Ընդհանուր առմամբ, հեղինակները այս պարագայում արժեթղթավորման ինստիտուտների համակցման գործընթացը հիմնականում ներկայացվում է վեց փուլով. միասեռ ակտիվների համախմբում, արժեթղթերի թողարկում, վաճառք, գումարների հավաքագրում, ֆինանսական ներդնում, ներդրողներին փոխհատուցում:⁷⁵ Սակայն, մեր կարծիքով, արժեթղթավորման ինստիտուցիոնալ նման բնորոշումը ընդհանրական է, և պահանջում է առավել մանրամասն մեկնաբանում:

Ինստիտուցիոնալ կառույցների համակցման տեսանկյունից առավել բարդ է համարվում հիփոթեքային վարկերի արժեթղթավորումը, որի մեկնաբանումը մեր կարծիքով առավել ամբողջական է ներկայացնում տարբեր կառույցների մասնակցությունը ակտիվների արժեթղթավորման գործընթացում: Այսպես, վարկառուները, գրավադնելով ձեռքբերած բնակարանները առևտրային բանկերում, սահմանված ժամանակացույցով մարում են իրենց վարկային պարտավորությունները մայր գումարի և տոկոսների մասով (տես գծապատկեր 2, գործառույթ 1), որը տևում մինչև 25 տարի՝ անգամ ավելի:

⁷³ Կազմվել է հեղինակի կողմից:

⁷⁴ Механизмы защиты интересов участников финансового рынка /Под ред. Е. М. Поповой. СПб.: Изд-во МБИ, 2012, стр 26.

⁷⁵ Рачкевич А., Алексеева И., Секьюритизация: характерные признаки и определение, //Деньги и кредит, 8, 2008, стр.22-31.

Սակայն, բանկը կարող է որոշում կայացնել «ինտենսիֆիկացնելու» կոնկրետ դրամական հոսքերը, կիրառելով ակտիվների արժեթղթավորման գործիքը: Այս մասով որոշումների կայացումը կարող են հետապնդել մի քանի նպատակ.

- ակտիվացնելու հիփոթեքային գործաքներին առնչվող դրամական «պասիվ» հոսքերը, այդպիսով կատարելով պարտավորությունների վերաֆինանսավորում և դրամական հոսքերը վերաուղղելով վարկավորման համեմատաբար կարճաժամկետ և շահավետ ոլորտներ,

- բարձրացնելու ակտիվների իրացվելիության որակական կազմը, քանի որ գրավադրված ակտիվները ապահովում են արժեթղթերի թողարկում, որոնք առավել իրացվելի են շուկայում և ունեն դրամային հոսքերի փոխակերպման համեմատաբար մեծ արագություն,

- բարելավելու բանկային կապիտալի բավարարվածության որակը, քանի որ հիփոթեքային ակտիվներն ունեն ռիսկայնության բարձր աստիճան և արժեթղթավորման պարագայում դուրս գրվելով բանկերի հաշվեկշիռից, մեծացնում են կապիտալի համարժեքության գործակիցը:⁷⁶


Գործնականում հիփոթեքային վարկերի արժեթղթավորմանը երկու մոտեցում է ցուցաբերվում. ավանդական, երբ տեղաբաշխված վարկերը դուրս են գրվում բանկի հաշվեկշիռից, և սինթետիկ, երբ դրանք մնում են առևտրային բանկի հաշվեկշռում: Սակայն, երկու դեպքում էլ, նախաձեռնողների կողմից պահանջվում է միասեռ ակտիվների համախմբում (տես գծապատկեր 2, գործառույթ 2): Արժեթղթերի թողարկումը տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից, որպես կանոն, իրականացվում է լայնամասշտաբ կտրվածքով, ուստի մեկ կամ երկու հիփոթեքային վարկերի առկայությունը այստեղ բավարար չէ: Ակտիվների արժեթղթավորումը հիմնվում է բազմաքանակ հիփոթեքային վարկային ակտիվների վրա, որոնք կարող են համախմբվել ոչ միայն կոնկրետ առևտրային բանկի, այլև դրա սահմաններից դուրս:

Սակայն միննույն ժամանակ, հիփոթեքային վարկային ակտիվները կարող են բանկերում ունենալ մարման տարբեր ժամանակահատվածներ, օժտված լինել գրավադրման տարբեր ռիսկայնությամբ, և դրանով նպատակահարմար չհամարվեն համախմբվելու արժեթղթավորման “վարկային ամբարում” կամ “փուլում”, որտեղ պահանջում է վարկառուների կողմից պարտավորությունների մարման միատիպ ժամանակացույց և կարգապահություն: Ստացվում է այնպես, որ միասեռ ակտիվների համախմբումը ենթադրում է հիփոթեքային ակտիվների այնպիսի պաշարի ստեղծում, որով կապահովվեն արժեթղթավորման գործընթացի համար անհրաժեշտ կայուն

⁷⁶ Копейкин А.Б., Рогожина Н. Н., Туктаров Ю. Е. Ипотечные ценные бумаги. М.: «Институт экономики города», 2008, 124 с.

և անհրաժեշտ դրամական հոսքեր:⁷⁷

Արժեթղթավորում նախաձեռնող բանկը (բանկերը) ձևավորելով միասեռ ակտիվների վարկային համախումբը, կամ “փուլը”, այն փոխանցում է արժեթղթեր թողարկող հիմնադրամին (տես գծապատկեր 2, գործառնություն 2): Այս ինստիտուցիոնալ կառույցը ոչ առևտրային կազմակերպություն է, և բնավ շահույթ չի հետապնդում: Այն պարզապես զբաղվում է ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկմամբ, առևտրային բանկերից ստանալով միասեռ ակտիվների վարկային համախումբը (“փուլը”): Ընդ որում, մասնագիտական գրականության մեջ նշվում է, ⁷⁸ որ սինթետիկ արժեթղթավորման ժամանակ արժեթղթավորման հիմնադրամի, կամ ինչպես արևմուտքում են ասում՝ հատուկ նշանակման հիմնադրամի (SPV) ձևավորումը պարտադիր չէ:



Գծապատկեր 2 Հիփոթեքային վարկերի արժեթղթավորման դասական սխեման⁷⁹

⁷⁷ Ерошенков К. М., Мухомов С. И. Первые шаги и актуальные проблемы секьюритизации ипотеки в России / под ред. С. Г. Ерошенкова. М. : МАКС Пресс, 2007, стр.52.

⁷⁸ Սալնազարյան Ա., Մամիկոնյան Կ., Բանկային ակտիվների արժեթղթավորումը որպես ՀՀ կապիտալի շուկայի ակտիվացման և “երկար փողերի” ձևավորման նախապայման, // Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, 2 (164), 2014, էջ 12:

⁷⁹ Կազմված է հեղինակի կողմից:

Մեր կարծիքով, նման մոտեցումը միգուցե աղարացված է ոչ լայնամասշտաբ արժեթղթավորման պարագայում, երբ մեկ բանկի շրջանակում հնարավորություն է ստեղծվում ձևավորելու համախմբված միասնական վարկային ակտիվներ: Սակայն, երբ բանկային ակտիվների արժեթղթավորումը ընդլայնում է իր շրջանակները, ապա այստեղ ձևավորվում է արժեթղթավորման հիմնադրամի պահանջ, որի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ:⁸⁰ Սակայն մինչ Լմիսիան, ակտիվների արժեթղթավորումը պահանջում է ներդրողների շրջանում վստահության տեղեկատվության տարածում: Այս առումով, կարևոր են համարվում վստահություն ապահովող ինստիտուտների ներառումը արժեթղթավորման գործընթացին, որոնցից առաջնային են համարվում ապահովագրական ընկերություններն ու վարկանիշավորող կազմակերպությունները:

Արժեթղթերի ապահովագրումով (տես գծապատկեր 2, գործառույթ 3) ներդրողները առավել վստահաբար են ձեռք բերում ակտիվներով ապահովագրված պարտատոմսեր, քանի որ այստեղ գործում են ձախողման ռիսկերի մասնակի, կամ լրիվ փոխհատուցման մեխանիզմներ:⁸¹ Իսկ ներդրողների մոտ ակտիվներով ապահովված պարտատոմսերի ձեռքբերման վստահության աստիճանը էլ ավելի է բարձրանում, երբ արժեթղթավորման գործընթացին մասնակից են դառնում արժեթղթեր վարկանիշավորող կազմակերպությունները, որոնք գնահատում են վաճառահանվող արժեթղթի ապահովվածության աստիճանը (տես գծապատկեր 2, գործառույթ 4):

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվում, որ համաշխարհային վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի կարևորագույն պատճառներից մեկն էլ հիփոթեքային արժեթղթերի գերազնահատումն և ոչ իրատեսական տեղեկատվություն տրամադրումն էր ֆինանսական շուկային:⁸² Այս առումով, հեղինակները նաև ընդգծում են, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ստեղծել արժեթղթեր թողարկողի որակական գնահատական ներկայացնող հավատարմագրված կառույց, մշակել պատասխանատվության գործիքներ և այլընտրանքային հասարակական տեղեկատվական աղբյուրներ, ոչ արժանահավատ վարկանիշների ներկայացման բացահայտումների համար (տես գծապատկեր 2,

⁸⁰ “Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին” ՀՀ օրենքը, Երևան, 2008 թ զլուխ 2:

⁸¹ Газман В.Д. Инновационное финансирование лизинга. М. :Вопросы экономики, 2011, № 9, С. 108-120.

⁸² Лупырь А. А. Классификация как способ сравнения российских и зарубежных ипотечных ценных бумаг, // Предпринимательство и реформы в России: материалы семнадцатой международной конференции молодых ученых-экономистов. 24–25 ноября 2011 г., ЭФ СПбГУ, 2011. С. 293–295.

գործառույթ 5):⁸³

Անցնելով վստահություն ապահովող ինստիտուտների գործառույթներով, ակտիվներով ապահովված արժեթղթերը թողարկվում և վաճառահանման են ենթարկվում արժեթղթավորան հիմնադրամի կողմից (տես գծապատկեր 2, գործառույթ 6): Վաճառքից գոյացած եկամուտը հավաքագրվում է հիմնադրամում (տես գծապատկեր 2, գործառույթ 7) և այնուհետև փոխանցվում է արժեթղթավորում նախաձեռնող առևտրային բանկեր՝ վերջիններիս կողմից հետագա տեղաբաշխման նպատակով (տես գծապատկեր 2, գործառույթ 8):

Ստանալով արժեթղթավորված ակտիվների վաճառքի եկամուտները, առևտրային բանկերը ունեն դրանց տեղաբաշխման երկու ուղղություն, որոնցից մեկը վարկավորման նոր և առավել շահավետ ոլորտների ընդլայնումն է և մինչ պարտատոմսերի մարման ժամկետների լրանալը՝ լրացուցիչ տեղաբաշխումների ետ գնումն ու շահույթների ձևավորումն է: Բսկ մյուս ուղղությունը, որը ցածր ռիսկային է, բայց նախորդի նկատմամբ նվազ շահութաբեր է՝ արժեթղթերի վաճառքի եկամուտների տրամադրումն է թրապթներին, կամ դրամական հոսքերը կառավարող հիմնադրամներին (տես գծապատկեր 2, գործառույթներ 9-10): Երկրորդ տարբերակը առավել գործուն է արևմտյան ֆինանսական շուկաներում, քանի որ թրապթային ինստիտուցիոնալ կառույցների կողմից արժեթղթավորման դրամական հոսքերի կառավարումը որոշակիորեն մեղմում է ներդրումային ռիսկերը:⁸⁴

⁸³ Թովմասյան Ա., Անշարժ գույքի արժեթղթավորման գործընթացը, այդ գործընթացում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, //Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, #9-10, (181-182), 2015, էջ 36-38:

⁸⁴ Осадчая Ю. Залог и банкротство при секьюритизации ипотечных активов, // Рынок ценных бумаг. 2006. № 22. С. 40–43.

Աղյուսակ 1

Արժեթղթավորված ակտիվների վստահության որակական կառուցվածքը ըստ տարածաշրջանների 2016 թ.⁸⁵

Տարածաշրջանը	Կայուն (%)	Աճող (%)	Նվազող (%)
Հյուսիսային Ամերիկա	80,5	12,3	7,2
Եվրոպա	75	19,8	5,2
Ավստրալիա	91,5	5	3,5
Հատինական Ամերիկա	66,1	0	33,9
Ասիա	66,7	33,3	0


Մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն ընդգծվում է, որ ակտիվների արժեթղթավորման գործընթացը պահանջելով տարբեր ինստիտուցիոնալ կառույցների գործառույթների համակցում, պահանջում է նաև զգոնություն, քանի որ արդյունավետ ֆինանսավորում իրականացնելիս խախտելով գործընթացը աջակցող կառույցների գործառույթների փոխկապակցման ներդաշնակությունը, ձևավորվում են ֆինանսատնտեսական համակարգային ռիսկեր, որոնք և պատճառ հանդիսացան համաշխարհային վերջին ֆինասական ճգնաժամի համար:⁸⁶

Սակայն, ճգնաժամից հետո համաշխարհային ֆինանսական շուկայում զգալիորեն փոխվեց արժեթղթավորված ակտիվների որակական կառուցվածքը, և գերիշխող դարձան վարկանիշային կայունություն ցուցաբերող ակտիվներով ապահովված արժեթղթերը (տես աղյուսակ 1): Ընդ որում,

⁸⁵ S&P Global Rating, Global Securitization Lending, July 21 2017, // www.STANDARDANDPOORS.com/RATINGSDIRECT

⁸⁶ Թովմասյան Ա. Անշարժ գույքի արժեթղթավորման գործընթացը, այդ գործընթացում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, //“Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա” 9-10, 2015 էջ 36:

վարկանիշային աճը առավելապես դրսևորվեց ապագա դրամական հոսքերը արժեթղթավորելիս (տես գծապատկեր 3), որն ինստիտուցիոնալ կառույցների բարեփոխված գործառույթների շնորհիվ նույնպես վստահություն ներշնչեց ներդրողների շրջանում և շուկայի կողմից համարվեց որպես ֆինանսավորման ինովացիոն գործիք:



Գծապատկեր 3 Համաշխարհային ֆինանսական շուկաներում պարտատուների վստահության գնահատականը՝ ըստ արժեթղթավորվող ակտիվների տեսակների 2016թ.⁸⁷

ԱՄՓՈՓՈՒՄ

Ակտիվների արժեթղթավորումը պահանջում է ինստիտուցիոնալ կառույցների փոխհամաձայնեցված գործունեություն, որի ներդաշնակության խաղտման պարագայում ծագում են ֆինանսական ներդրումների խափանման ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ռիսկեր: Այս առումով ներկայումս ֆինանսական շուկաներում առավել կարևորվում են վստահություն ապահովող ինստիտուտների գործառույթները, որոնք շախկապում են դրամական հոսքերի արդյունավետ կառավարումը ակտիվներով ապահովված արժեթղթավորման թողարկման համակարգում:

⁸⁷ S&P Global Rating, Global Securitization Lending, July 21 2017, // www.STANDARDANDPOORS.com/RATINGSDIRECT

Հիմնաբաներ. վստահության ինստիտուտներ, ներդրողներ, հիփոթեքային ակտիվներ, դրամական հոսքեր:

THE INSTITUTIONS COMBINATION ISSUES OF ASSETS SECURITIZATION

ANDRANIK VOSKANYAN

Key words: trust institutions, investors, mortgage assets, cash flows, assets

securitization.

Securitization of assets requires a mutually acceptable arrangement of institutional structures. In case of a violation of the harmonization of financial investments, both economic and social risks formation is acquire. In this sense, the most important are the institutions, that provide confidence in effective cash flow management in the asset securitization system.

ПРОБЛЕМЫ КОМБИНАЦИИ ИНСТИТУЦИОНАЛЬНЫХ СТРУКТУР ПРИ СЕКЬЮРИТИЗАЦИИ АКТИВОВ

АНДРАНИК ВОСКАНЯН

Ключевые слова: доверительные учреждения, инвесторы, ипотечные активы, денежные потоки.

Секьюритизация активов требует взаимоприемлемого действия институциональных структур, и в случае нарушения этой гармонизации при финансовых вложений возникают как экономические, так и социальные риски. В этой связи, наиболее важными являются доверительные институциональные структуры, которые обеспечивают эффективное управление денежными потоками в системе секьюритизации активов.

THE BOLOGNA PROCESS SOCIO - ECONOMIC CONSEQUENCES

HAMED MIRZAEI

In recent years it has become necessary to discuss the Bologna process issues not only from the point of view of education, but also concerning the issues of economic outcomes. As a rule, in professional literature, the Bologna process is analyzed in terms of building a single European educational area leaving the comments of educational market global competitiveness in the shadow. The article is an attempt to represent the Bologna process motives not only on the basis of educational, but also social economic motives.

The main and wide-ranging target of the Bologna process is the formation of the European higher education area (EHEA), the necessity of which was observed two decades ago. However, the Bologna process started not only on the basis of educational motives. The reasons were more thoughtful and troubling for Europe.

First of all, the common labor market in Europe is rapidly developing. Higher education specialists, freely moving within the territory of the European Union, are given various estimates by employers of various countries. Therefore, now mutual recognition of diplomas awarded to the graduates of the European Universities and the formation of mutual trust towards quality of education is considered to be very important, and it is possible to implement by forming a single educational area. Besides, within the territory of the European Union not only graduates with a higher education but also students and staff of the Universities have started to participate in mobility. So, preparation of the same specialists in different Universities and countries according to the unified educational standards has become a necessity and the formation of the European higher education area can significantly contribute to it. And finally, Europe's attractiveness and competitiveness in the field of educational services has also become a question of agenda. Currently the provision of educational services is not only a major factor in the formation of human capital, but also a business. Thus, according to the involvement of international students the USA is considered to be a leader and ensures large inflows of educational fees from Europe as well. Therefore, in terms of competitiveness the formation of the European higher education area will be able to adequately respond to global challenges. Thus, the main motive of the Bologna Process was not only the

establishment of a unified European educational area, but also the suggestion of political and economic interests.

Higher educational services have a tendency to grow in price and it is conditioned not only by high inflation rates registered in the global economy. Nowadays the requirements of the labor market made to specialists are rapidly changing and becoming more demanding and of high quality. As a result, skills and competencies of the University graduates, formed in the course of education, may "get old" from the very start of their work.

Naturally, professional educational services should resist competitive challenges of the labor market and spend more resources for the purpose of ensuring the required quality of education. It is not accidental that during the last decade the higher professional education in the European higher education area education price has increased by 16 %. Moreover, education and science expenditure portion in GDP of the European countries passes the 5% threshold. It is natural that in the formed situation the European countries should take measures to increase the effectiveness of educational expenses, and the Bologna process tools significantly contribute to it.

Thus, the transfer of academic credits implies not only academic freedom, it also has an economic context. In case of mutual recognition and acceptance of credits from other educational establishments the University does not spend resources any more on teaching a similar module and makes savings of tuition. Granting joint diplomas by different universities pursues the same goal, as the costs of educational services provided for graduates are effectively distributed between universities thereby reducing the cost of education. A large-scale application of ongoing education system also contributes to the cost reduction of educational services, especially in such cases when Universities accept academic credits from non-university structures thereby "being liberated" from teaching some modules.

However, in terms of forming economic results the Bologna process application tools are more vividly displayed not from the perspective of increasing efficiency of forming educational services cost but from that of regulating labor market and alleviating unemployment in Europe. Each corner of the common economic area formed within the framework of European Union should be available for free movement of the workforce. So, Universities will strive to prepare such specialists who will be able to find a job and be demanded by employers of different countries.

According to the statistics, proportion of unemployment in groups having a higher education has a lower level as they have a greater demand in the labor market. (see table 1): So the main task of the University is to prepare specialists meeting the requirements of the globalizing economy.

If during the first years preceeding the launch of the Bologna process the basic components ensuring its tools had been formed (quality assurance, academic credits accumulation and transfer, mutual recognition, education), leaving analysis of social consequences of the process on the background, then during London Communiqué a serious statement was made to promote all the levels of a higher education in the direction of social justice towards entering, studying and graduating students. It became clear that the Bologna process could not have run effectively, or it could have even failed, if it had not been based on social justice. For this purpose it was intended to take additional measures to organise students' education irrespective of their social and economic status, revealing flexible educational paths and providing educational services on an equal basis.

Table 1

Proportion of unemployed people in groups having different levels of education 2016(%)⁸⁸

Academic degree	EU	Italy	France	Czech	Poland
Secondary	14.4	11.19	12.3	15.5	41.7
Vocational	9.5	8.8	15	6.6	25.4
Higher	10.2	12.3	9.8	5.3	16.1

In addition to all this, the socio-economic dimension of the Bologna process was clearly underlined during the conference in Leuven. It was decided that students should reflect the diversity of population of Europe aiming at achieving equal rights for quality education. It includes the improvement of the educational atmosphere, elimination of all the obstacles and establishment of

⁸⁸ Key Data on Education in Europe, Eurostat 2017.

relevant economic conditions so that students can be provided with educational services for all levels.

It was also mentioned that each country-participant should set measurable targets for overall involvement in educational programs and improvement of various groups' participation indexes at all levels, it should also develop standards and mechanisms for periodic reviews. In addition, it was also suggested to increase the Universities' responsibility for ensuring their graduates' social perspectives (employment, career opportunities).

Studies show that in the EHEA countries the distribution of migrant and non-migrant students is not equal. In general, in all the countries the availability of a higher education among migrants is significantly low. If in the Netherlands, the Czech Republic, Finland the ratio of migrant and non-migrant students is somehow equal, in Italy, Estonia there is a triple split emerging between them. Such distribution does not indicate social balance of students' admission in the EHEA Universities. (see table 2).

Table 2

Distribution of migrant and non-migrant students in the Universities of EHEA countries (%)⁸⁹

<i>EHEA countries</i>	<i>Migrant students</i>	<i>Non migrant students</i>	<i>Total</i>
Netherlands	40	60	100
Italy	35	65	100
Czech Republic	50	50	100

⁸⁹ The European Higher Education Area in 2019: Bologna Process Implementation Report.

Portugal	45	55	100
Estonia	20	80	100
Armenia	0	100	100

Furthermore, applicants' admission to Universities in several countries of the EHEA is conditioned by the availability of a higher education of their parents. The degree of connectivity between parents' qualification and the number of applicants is especially high in Slovakia, Romania, and Bulgaria, where parents' psychological and economic support is great.

Concerning this, one of purposes the Bologna process targets is financing higher educational mainly by public resources, which is making warrantable conditions for university stabile development. According to comparable analyzing, the governmental participation in higher education and research framework is different in EHEA. As a result, in the Western Europe region the public portion of tertiary education and science financing in pre crisis period was higher (2%) in Norway and Denmark, and lower in Slovakia (0.7%), when the average of this indicator was 1.15%.

Bologna process is not only a higher education service providing an oriented progression, but also capability for improving economic and social conditions of graduating students. Although, this process has been under way for more than over 10 years, still there are problems in employability and social dimensions for the educated people not only in Europe, but also in Eastern countries. The higher the level of education, the lower the unemployment ratio among young people is. However, on average around one fifth of the young people having a higher education qualifications are employed in jobs usually not requiring a higher education qualification. While obtaining a tertiary qualification improves the employability of young people in most countries, recent graduates face difficulties in the labor market. This conclusion again highlights the problems concerning the evaluation of a higher education institutions' performance based on unemployment indicators.

The results of the working process on “Mobility and Internationalization” will feed into the following proposals for the 2015 Yerevan Communiqué⁹⁰:

Staff Mobility

It is recommended that the Ministers aim for a paradigm shift towards a more supporting environment for staff mobility on the base of the attached guidelines, because high quality mobility of staff contributes to the development of doing research, teaching and learning and to the modernization of management and administration. Staff mobility comprises all groups of HEIs personnel – academic, administrative and technical staff. It helps the EHEA to flourish through international cooperation and it is an opportunity to generate expertise and new added value services within institutions. Therefore, there is a need to make this mobility an everyday reality and to turn it into an integral part of human resources development in our higher education institutions.

We recommend asking Eurostat to improve data collection on staff mobility in order to better assess its quantity and quality. On this basis, the BFUG should be asked to monitor progress in the field of staff mobility and to report on it at the

Mobility of teacher training students in the EHEA

It is recommended that the Ministers commit to improving the framework conditions for teacher/student mobility in our national systems. Teacher training students will eventually become teachers. They will, therefore, serve in future as role model and educators for future generations. There is a need to encourage our Higher Education Institutions to facilitate mobility in teacher training by inter alia designing curricula with mobility windows, offering joint programmes, ensuring smooth and fair recognition of periods spent abroad as well as professional recognition. Funding programmes for the exchange of teaching assistants will be promoted.

Quality in Mobility

It is recommended that the Ministers support the comprehensive internationalization of higher education institutions, with mobility being one of its major pillars.⁹¹ To promote quality in

⁹⁰ REPORT OF THE 2012-2015 BFUG WORKING GROUP ON MOBILITY AND INTERNATIONALISATION, 8 January 2015

⁹¹ REPORT OF THE 2012-2015 BFUG WORKING GROUP ON MOBILITY AND

mobility the institutions must give students guidance before, during, and after mobility by taking into account tailored personal needs and recent technical developments so as to develop further mentoring, support, reintegration guidance and feedback between all stakeholders involved. Mobility as a means for the acquisition of competences such as foreign language knowledge, intercultural awareness, and other soft skills must be integrated in all programs.

Recommendations for overcoming under representation in student credit mobility

It is recommended that the Ministers are aware of mobility obstacles for underrepresented student populations. Great talents are lost, for example, from students with an immigrant background, who might be brilliant but do not have the linguistic skills to fully participate in study programs, or “second chance” students, who for reasons other than lack of scholastic aptitude could not follow a traditional learning path; therefore, we commit to support research to understand these phenomena in greater detail and to better adjust our actions for overcoming them.

Data should not only focus on academic mobility but also on traineeships, summer schools and other forms of mobility, including non-formal education. Analyses should include older students, students from a low parental education background or those with delayed transition into a higher education.

Description of study programmes in the EHEA

We recommend that the Ministers acknowledge the need to improve information about study programmes as a means of syllabi increasing mobility and attractiveness of the EHEA. There is a need in our countries to pursue the recommendations adopted by the BFUG on a common structure of national data bases describing the EHEA and national HE systems, including institutions, study programs and student support services and structures. The structure of the information should help data providers, data collectors and HE institutions to increase transparency.

A target on incoming mobility of students from outside the EHEA into the EHEA

It is recommended that the Ministers, aim to increase the number of students enrolled in the EHEA who have obtained their prior qualification outside the EHEA.⁹² To this end we propose call on all EHEA countries to consider setting a national target for such incoming student mobility and define measures to reach these targets as part of their internationalisation strategies.

We recommend that Eurostat, in cooperation with the relevant national data collectors is asked to collect and report on data on incoming student mobility for degree as well as credit purposes from outside the EHEA on the annual and standard basis.

Portability of student financial support - Guidelines for further implementation

Acknowledging the importance of portability of student financial support to promote learning mobility, we propose that the Ministers commit to follow the guidelines and recommendations on the subject adopted by the BFUG, namely that financial student support granted in an EHEA's member country to cover living expenses should be portable to other EHEA countries. Member countries, as well as Higher Educational Institutions, should provide adequate information on the portability of financial student support as well as on the conditions to be fulfilled. The implementation of these guidelines should be covered in the next Implementation Report.

The implementation of global competitive tendencies of the Bologna process policy did not keep us waiting. Some regions of Transcaucasia peculiarly responded to this process. However, the experience came to show that, in general, the Bologna process enforcement tools were considered acceptable out of European higher education area.⁹³

Asian region:

Australia came up as an initiator of establishing Asian-Pacific unified educational area, a regional zone which has the same functions as the EHEA. According to Communiqué adopted on April 4, 2006, in Brisbane, 27 regional countries announced about the formation of a unified educational area, where student and staff mobility, credit exchange and, therefore, introduction of

⁹² REPORT OF THE 2012-2015 BFUG WORKING GROUP ON MOBILITY AND INTERNATIONALISATION, 8 January 2015

⁹³ Daviy Crosier, Teodora Parveva The Bologna Process: Its Impact in Eouroe and Beyon, //UNESCO, International Institute of Educational Planing, Paris, 2013, www.iiep.unesco.org

unified quality system were highly encouraged. A regional center for higher education and development, (RIHED), was established in Thailand, which introduces tools in compliance with Bologna process in countries joined Brisbane Communiqué in Pacific and Asian regions.⁹⁴

Latin America and Caribbean basin

Inter-American organization for a higher education (IOHE) includes over 300 Universities from 26 countries of Latin America aiming at harmonizing higher education approaches in that region. IOHE organization develops common regional principles directed to mutual recognition of academic credits, quality assurance acceptance of diploma unified supplement.⁹⁵

Africa

The African Continent is also interested in the creation of a higher professional educational area.⁹⁶ During the joint meeting of the Higher education ministers of 18 countries of the region African Higher education harmonisation union was formed, mostly emphasizing mutual recognition process and quality assurance. Currently, that union has also set a task to strengthen public responsibility of availability of providing higher educational services, which is very important for developing African countries. Moreover, the Union has a few ways of integrating into the Bologna process. (EUA, 2010).

Northern America

The origin and enforcement of the idea of academic mobility and credit system initially started in the United States, which has been a world leader by involvement of International students till now. Therefore, in this region a serious attitude towards Bologna process should be shown in terms of maintaining competitive positions in the global educational market. At present Pan-Canadian professional academic degree awarding system is being developed. In the USA “Tuning” pilot

⁹⁴ Brisbane communiqué Issued at the Asia- Pacific education ministers’ meeting, Brisbane, Australia, 4 April 2006

⁹⁵ The Bologna Process for U.S. eyes: Re-learning higher education in the age of convergence’, // Washington, DC: Institute for Higher Education Policy. 2012, // www.ihep.org/assets/

⁹⁶ Bayemi, G. Dao Sow, A. 2006. ‘Support for higher education in WAEMU countries’. Appraisal report for the African Development Fund.

program operates which is aimed at making some academic programs and qualification degrees in concord with the European, thus, making northern-American region attractive for European students.⁹⁷

Northern Africa and Middle East

Although the countries of this region are not official members of the Bologna agreement they are closely related to this process and have an active collaboration directed to the integration into EHEA. Particularly the target fields are harmonization of Bachelor's and Master's qualification degrees, quality assurance, student mobility, which are in the center of attention of European TEMPUS program.⁹⁸

So, the Bologna process left its trajectory on overseas educational areas in two terms. On the one hand, developing countries strive to portray the tools of that process and search for ways of integrating into the EHEA. On the other hand, the countries having a developed educational system, being leaders in the provision of educational services and having rich traditions, not only do not reject the Bologna principles, moreover, somehow applying them, they strive not to lose their competitive positions in globalizing the educational market.

Key words: student mobility, education system, employability, education fees.

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾՆԹԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՀԱՄԵՂ ՄԻՐՉԱՅԻ

Հիմնաբառեր. ուսանողական շարժունություն, կրթական համակարգ, զբաղվածություն, կրթավճարներ:

⁹⁷ Tuning Educational Structures USA, // www.tuningusa.org.

⁹⁸ *countries in the Southern Mediterranean (2009–2010)*. A Tempus Study, No. 03. Brussels: EACEA. Retrieved from:

http://eacea.ec.europa.eu/tempus/tools/documents/bologna_implementation_mediterranean_countries_1005.pdf

Բոլոնիայի գործընթացը ուղղված չէ միայն կրթական բարեփոխումներին և կրթական ներդաշնակության ապահովմանը: Այն զգալի սոցիալ-տնտեսական հետևանքներ է առաջացնում, մեղմելով բուհական շրջանավարտների գործազրկությունը, ակտիվացնելով աշխատանքի շուկան, ստեղծելով միջազգային համագործակցության նախադրյալներ: Հոդվածում քննարկվում են Բոլոնիայի գործընթացից բխող սոցիալ-տնտեսական հետևանքները:

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ БОЛОНСКОГО ПРОЦЕССА

ХАМЕД МИРЗАИ

Ключевые слова: студенческая мобильность, система образования, занятость, плата за обучение.

Болонский процесс не направлен исключительно на реформу образования и образовательную сплоченность. Это приводит к значительным социально-экономическим последствиям, смягчению безработицы выпускников университетов, активизации рынка труда, созданию предпосылок для международного сотрудничества. В статье рассматриваются социально-экономические последствия Болонского процесса.

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՆԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Համաձայն ՀՀՄ 7 ստանդարտի, կազմակերպության դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը օգտակար է այն առումով, որ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին տրամադրում է հիմքեր՝ գնահատելու կազմակերպության դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ստեղծելու կարողությունը, և այդ դրամական միջոցների հոսքերի օգտագործման նրանց պահանջները:

Միջազգային ստանդարտներով կազմակերպությունների դրամական հոսքերը ներկայացվում են երեք՝ գործառնական, ներդրումային և ֆինանսական ուղղություններով: Գործառնական գործունեությամբ կազմակերպությունը հիմնականում ապահովում է հասույթով, քանի որ այն հանդիսանում է տնտեսավարման որոշիչ նպատակը: Ներդրումային գործունեությունը երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն և օտարումն է, իսկ ֆինանսական գործունեության արդյունքում տեղի են ունենում կազմակերպության ներդրված սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխություններ⁹⁹

Ընդ որում, դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են ուղղակի մեթոդով՝ հիմնված գործառնությունների արձանագրման դրամարկղային սկզբունքի վրա, և անուղղակի՝ հիմնված գործառնությունների հաշվեգրման սկզբունքի վրա: Առաջին դեպքում, որպես հաշվարկային ելակետ է համարվում թողարկման (ծառայությունների իրացման) ծավալը, իսկ երկրորդ դեպքում՝ հաշվետու ժամանակաշրջանում ձևավորված գուտ շահույթը:

Ուղղակի մեթոդով կազմված դրամական հոսքերի հաշվետվության հիմքում ընկած է «դրամարկղային սկզբունքը», համաձայն որի, կազմակերպությունների դրամական միջոցների շարժն ու մնացորդը ներկայացվում են դրամի ելքի և մուտքի փաստացի ֆիզիկական հոսքերի հիման վրա: Այս դեպքում, հաշվետվությունը լրացնելիս «ուղղակիորեն օգտվում են» դրամական միջոցները հաշվառող սինթետիկ հաշիվների հաշվետու ժամանակաշրջանի գրանցումներից:

Անուղղակի մեթոդով դրամական հոսքերը ներկայացնելիս չեն օգտվում կազմակերպություններում վարվող դրամական միջոցների սինթետիկ հաշիվներում արձանագրվող դրամի փաստացի շարժի տեղեկատվությունից, և հաշվետվությունների կազմման համար հիմք է ընդունում ոչ թե դրամարկղային՝ այլ հաշվեգրման սկզբունքը: Հաշվեգրման սկզբունքի կիրառման պարագայում արդեն հաշվի չի առնվում դրամի փաստացի շարժը, այլ ի նկատի են առնվում այն հանգամանքները, որոնք անուղղակիորեն հանգեցրել են դրամական միջոցների «ավելացմանը» կամ «նվազմանը»:

⁹⁹ ՀՀՄ 7 “Հաշվետվություն դրամական հոսքերի մասին” ստանդարտ, կետ 6:

Հետևաբար, անուղղակի եղանակով դրամական հոսքերի ներկայացման դեպքում օգտվում են ֆինանսական իրավիճակի մասին հաշվետվության (հաշվապահական հաշվեկշիռ) հոդվածների սկզբնական և վերջնական մնացորդների փոփոխությունից և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տեղեկատվությունից: Այս դեպքում, փոխկապակցվում են հաշվապահական հաշվեկշռի հոդվածային շեղումներն ու ֆինանսական արդյունքների հաշվետվության ցուցանիշները, որպեսզի դրամական հոսքերի շարժը ներկայացվի գործառնական, ներդրումային և ֆինանսական կտրվածքով:

Եթե ըստ վերոնշյալ երեք ուղղությունների, դրամական հոսքերի ներկայացմանը հիմնականում համակարծիք են մասնագիտական գրականության մեջ, ապա հոսքերի ներկայացման հաշվարկային մոտեցումների հարցում կան տարակարծություններ, ինչպես հեղինակների շրջանում, այնպես էլ միջազգայնորեն ընդունված ստանդարտում: Այսպես, ՀՀՄ 7 ստանդարտով խրախուսվում է գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացնել՝ օգտագործելով ուղղակի մեթոդը:¹⁰⁰ Ուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացման կողմնակից են նաև մի շարք հեղինակներ, բերելով բազմաթիվ փաստարկներ:¹⁰¹

- անուղղակի մեթոդը փոխկապակցում է կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքները դրամական հոսքերի հետ և հաշվարկային հիմքում դնում է զուտ շահույթը,

- եթե դրամարկղային եղանակի վրա հիմնված ուղղակի մեթոդը ներկայացնում է դրամի փաստացի կայացած շարժը ըստ ուղղությունների, ապա հաշվեգրման հիմքով անուղղակի մեթոդի կիրառմամբ հնարավորություն է ստեղծվում կողմնորոշվելու տեսանելի ապագայում դրամական հոսքերի կազմում սպասվող փոփոխությունները իրատեսորեն գնահատման համար,

- ուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվարկը շատ ավելի բարդ և աշխատատար է, քան անուղղակի մեթոդի պարագայում,

¹⁰⁰ ՀՀՄ 7 “Հաշվետվություն դրամական հոսքերի մասին” ստանդարտ, կետ 19:

¹⁰¹ Metka Duhovnik, Improvements of cash flows statement control function in financial reporting, // University of Ljubljana Econ. Fac. Vol 26 pages 123-150,

-անուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացումը, ի տարբերություն ուղղակի մեթոդի, առավել սերտ փոխկապվածություն ունի կազմակերպությունների ֆինանսական դրության և ֆինանսական կայունության պաշարի հետ,

- տնտեսական գործունեության վերլուծությունը առավել միտված է կազմակերպությունների ապագա ֆինանսական կայունության ամրապնդման ռեզերվների բացահայտմանը, և ոչ թե անցյալ դեպքերի գնահատմանը, որին առավել նպաստում է անուղղակի եղանակով դրամական հոսքերի ներկայացումը,

- անուղղակի եղանակով դրամական հոսքերը առավել սերտ են առնչվում կազմակերպությունների «տնտեսական գործունեության անատոմիայի» հետ, քանի որ հաշվի է առնում տնօրինվող ակտիվների, պարտավորությունների փոփոխությունները, ինչպես նաև ձևավորվող ֆինանսական արդյունքներն ու զուտ շահույթը:

Սակայն, դրա հետ մեկտեղ, մասնագիտական գրականությունում փաստարկներ են բերվում ի օգուտ ուղղակի մեթոդով դրամական միջոցների հոսքերի հաշվետվության ներկայացման: Մասնավորապես նշվում է, որ.¹⁰²

- ուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվարկը հիմնվում է կազմակերպությունների գործունեությունից կամ ծառայությունների մատուցումից իրացման հասույթի վրա և չի պահանջում զուտ շահույթի գծով ճշգրտումներ,

- ուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվարկները չեզոքացնում են ոչ դրամային էֆֆեկտները, որոնք առկա են անուղղակի մեթոդը կիրառելիս, ինչպիսիք են ամորտիզացիոն հատկացումները, ակտիվների վերագնահատումներից եկամտային աճը կամ արժեզրկման վնասը և այլն.

¹⁰² Хахонова, Н.Н. Методы оценки рисков денежных потоков по операционной деятельности организации /Н.Н.Хахонова, С.А. Уколова// Актуальные проблемы экономики образования и науки: материалы четвертой региональной научно-практической конференции /Ростовский Государственный экономический университет (РИНХ). – Ростов-н/Д, 2011. – С. 92-95.

- դրամարկղային հենքով ուղղակի մեթոդը կիրառելիս դրամական հոսքերի ձևավորումը չի իրականացվում հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների հաշվետվությունների հիման վրա, որոնց հոդվածները ոչ արժնահավատ կարող են լինել ակտիվների ու պարտավորությունների մնացորդների անիրատեսական վերագնահատումների արդյունքում,

- ուղղակի մեթոդով դրամական հոսքերը առավել անալիտիկ են և բացառում են դրամի ներհոսքերի և արտահոսքերի հաշվանցումները, որոնք կարող են տեղի ունենալ անուղղակի մեթոդի կիրառման դեպքում և ազդել վերլուծության տեղեկատվական ապահովվածության վրա:

Մյուս կողմից, անուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացման նպատակահարմարությունը հիմնավորվում է կազմակերպությունների հեռանկարային կառավարման առումով: Մասնագիտական գրականությունում կարծիք է հայտնվում, որ անուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվետվությունը ռազմավարական նշանակություն ունի, քանի որ ներկայացնում է դրամի շարժի վրա դրականորեն և բացասականորեն ազդող տնտեսավարման գործոնները: Այս առումով, կազմակերպությունների կառավարման օղակները դրամական հոսքերի անուղղակի մեթոդով կազմված հաշվետվությունների հիման վրա տեսանելի ապագայում միջոցներ է ձեռնարկում դրամական մուտքերի և ելքերի համախառն սպասելիքների, դեբիտորական պարտքերի կրճատման, պարտավորությունների չափավոր ավելացման ուղղությամբ: Իսկ ուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվետվությունը առավելապես մարտավարական կառավարման խնդիրներ է լուծում, քանի որ այն կոնկրետ ժամանակահատվածի կտրվածքով բացահայտում է դրամական արտահոսքերի ոլորտները և դրամական գուտ հոսքերի նվազման վրա բացասական ու դրական գործոնները:¹⁰³

¹⁰³ Селезнева, А.Н. Классификация финансовых потоков как фактор повышения эффективности их управления / А.Н. Селезнева // Аудит и финансовый анализ. – 2012. - №3. с. 448-453.

ԱՄՓՈՓՈՒՄ

Դրամական հոսքերի հաշվետվությունների անուղղակի մեթոդի կիրառման հիմքում ընկած են զուտ շահույթի գծով կատարվող ճշգրտումները, որոնք բացառում են ոչ դրամային փոփոխությունները ֆինանսական արդյունքների ձևավորման գործընթացում: Այնուհետև, դրամական միջոցների հաշվեկշռային փոխկապվածության մեջ գտնվող հոդվածների փոփոխություններով ներկայացվում են գործառնական, ֆինանսական և ներդրումային գործունեությամբ պայմանավորված դրամական հոսքերը: Այդ նպատակով, հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական ակտիվների ու պարտավորությունների հոդվածների տարբերությունները և հաշվեկշռված կապ ստեղծում դրանց ձևավորման և դրամական միջոցների հոսքերի փոփոխումների միջև:

Հիմնաբառեր. ուղղակի և անուղղակի վերլուծություն, դրամական հոսքեր, ֆինանսական հաշվետվություններ:

О МЕТОДОЛОГИИ АНАЛИЗА ДЕНЕЖНЫХ ПОТОКОВ

НАРИНЕ САРКИСЯН

Ключевые слова: прямой и косвенный подход, денежные потоки, финансовая отчетность.

Информация о денежных потоках играет важную роль при оценке финансовой стабильности организаций. Однако до сих пор на практике и в теории нет единого мнения, по какой методологии представить денежные потоки. В статье анализируются подходы составления финансовой отчетности по прямым и косвенным методам и на этой основе выявлении преимущества и недостатки обоих подходов.

ABOUT METHODOLOGY OF CASH FLOW ANALYSIS

NARINE SARGSYAN

Key words: direct and indirect analysis, cash flow, financial statements.

Information on the cash flow plays an important role in assessing the financial stability of the organization. However, so far in practice and in theory there is no consensus on what methodology to present cash flows. The article analyzes the approaches of the financial statements for the direct and indirect methods, and on this basis, identify the advantages and disadvantages of both approaches.

ՓՈԽԱՏՎԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԲԱԿՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այսօր թե՛ տեսական մակարդակով և թե՛ հասարակության տարբեր խմբերի մոտ վարկերի դրական ազդեցության մասին մոտեցումները ոչ միանշանակ են¹⁰⁴: Վարկը հանդես է գալիս որպես ֆինանսական հարաբերության դրսևորման ձև, որպես փոխատվական կապիտալի շարժման եղանակ¹⁰⁵: Վարկատուի և վարկառուի ֆինանսական պահանջ-մուծքների բավարարման և նրանց միջև տնտեսական հարաբերությունների հաստատման ժամանակ էլ դրսևորվում է վարկի կարգավորող գործառույթը:

Վարկերը կարգավորող գործառույթն իրենից ներկայացնում է խթանող և բաշխող ենթագործառույթների միավորում: Ինչպես հայտնի է, վարկային հարաբերություններն առաջանում են արժեքի վերաբաշխման փուլում. ժամանակավորապես ազատված միջոցները տրամադրվում են փոխառուին, որից հետո դրանք կրկին վերադառնում են այդ միջոցների սեփականատիրոջը՝ փոխատուին: Վարկի այս բնորոշ առանձնահատկությունը հիմք է ծառայում առանձնացնել վարկի առաջին՝ վերաբաշխողական գործառույթը: Վարկի մյուս՝ խթանիչ գործառույթը դրսևորվում է նրանում, որ վարկային ռեսուրսները կարող են օգտագործվել որպես կապիտալ, որի նպատակը լրացուցիչ եկամուտ ստանալն է:

Տնտեսության մեջ վարկն իր խթանող և բաշխող գործառույթներն իրականացնում է ի շնորհիվ փոխատվական տոկոսադրույթի: Փոխատվական տոկոսադրույթը, որպես

¹⁰⁴ Деньги, кредит, банки. Экспресс-курс: Учебное пособие/кол. авт.; под. ред. О.И. Лаврушина.-4-е изд., М.: КНОРУС, Стр. 122-124.

¹⁰⁵ Деньги, кредит, банки, под. Ред. Жуков В.Ф., Эриашвили Н.Д., Зеленкова Н.Д., Зеленкова Н. 4-е изд., перераб. и доп. – М.: Юнити: 2011, Стр. 205.

տնտեսագիտական կատեգորիա, բնութագրում է այնպիսի տնտեսական հարաբերություն, որում փոխատուն տրամադրելով փոխատվական միջոցներ փոխառուին, ակնկալում է ստանալ նրանից եկամուտ՝ այդ միջոցների օգտագործման դիմաց կատարվող վճարների տեսքով: Ի շնորհիվ փոխատվական տոկոսադրույքի՝ կապիտալը վարկի տեսքով հոսում է դեպի տնտեսության այն ոլորտները, որտեղ շահութաբերությունն ավելի բարձր է, քանի որ այդ ոլորտներն ավելի վճարունակ են:

Քանի որ, վարկային տոկոսադրույքը առավել զարգացած փոխատվական տոկոսադրույքի տարատեսակ է, ուստի մակրոմակարդակով փոխատվական տոկոսադրույքի և դրա վրա ազդող գործոնների գնահատումը կարելի է կատարել վարկային տոկոսադրույքի օրինակով:

Խոսելով ՀՀ-ում գործող վարկային տոկոսադրույքների մասին, հարկ ենք համարում նշել, որ այստեղ առկա են վարկային հարաբերությունների զարգացման որոշակի սահմանափակումներ, որոնց պայմաններում վարկը լիարժեքորեն չի իրացնում իր գործառնությունները, ինչն, իր հերթին, նվազեցնում է վարկի՝ որպես տնտեսական աճը պայմանավորող կարևոր գործոնի դերակատարությունը:

Որպես նման սահմանափակում կարող է հանդիսանալ շուկայում որևէ հեղինակավոր կազմակերպության մենաշնորհային դիրքը, որը հետևանքը ավելի արտոնյալ պայմաններով տրամադրված վարկերն են:

Այսօր ՀՀ ֆինանսական շուկայում հաճախադեպ են նաև տարբեր ծրագրերով պետական մակարդակով վարկային տոկոսների սուբսիդավորման գործընթացները, որոնք ոչ միշտ են լինում նպատակային, տվյալ դաշտի ոչ բավարար վերահսկելիության պատճառով, ինչը նույնպես կարող է սահմանափակել վարկային գործառնությունների լիարժեք դրսևորումը, և քանի որ վարկի կարգավորիչ գործառնություն իրականություն է դառնում ի շնորհիվ շուկայական գործոնների փոփոխությանը տոկոսադրույքի արագ արձագանքելու կարողության, ուստի երբ փոխատվական տոկոսադրույքի վրա ազդող գործոնները շուկայականից փոխակերպվում են ճոշ շուկայականի, այդ դեպքում նվազում է նաև վարկի՝ որպես տնտեսական զարգացման կարևոր գործոնի դերակատարությունը:

Տոկոսադրույքի մակարդակի ձևավորման գործում իրենց ազդեցությունն են ունենում ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ մասնավոր գործոններ:

Փոխատվական տոկոսադրույքը պայմանավորող մակրոտնտեսական գործոնների շարքին են դասվում.

Փոխառու միջոցների առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությունը: Եթե փոխառու միջոցների նկատմամբ պահանջարկը նվազում է, ինչպես որ դա լինում է տնտեսական անկման ժամանակ, իսկ առաջարկը մնում է անփոփոխ, ապա տոկոսադրույքները նվազում են: Հակառակ գործընթացը կլինի այն դեպքում, եթե նվազեն ԿԲ-ի կողմից տնտեսության ֆինանսավորման ծավալները, իսկ փոխառու միջոցների պահանջարկը մնա անփոփոխ:

Գնահատելով ՀՀ ֆինանսական շուկայի վերջին զարգացումները, կարելի է նկատել, որ այստեղ փոխառու միջոցների նկատմամբ առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը պարբերաբար փոփոխության է ենթարկվել:

Առհասարակ հայտնի է, որ փոխառու միջոցների նկատմամբ առաջարկը և պահանջարկը ու նրանցով պայմանավորված շուկայական միջին տոկոսադրույքի տատանումները կախված են տնտեսության վերարտադրության շրջապտույտի կոնկրետ փուլերից: Տնտեսական վերելքի նախնական փուլում, չնայած շահույթի նորմայի բարձր մակարդակին, տոկոսադրույքի նորման լինում է ցածր: Պատճառն այն է, որ այս փուլում ապրանք արտադրողները հիմնականում օգտագործում են սեփական ֆինանսական միջոցները: Այս փուլում փոխառու միջոցների նկատմամբ պահանջարկը ցածր է, իսկ առաջարկը գնալով աճում է:

Տնտեսական շրջապտույտի ամենավերին կետում տոկոսադրույքի նորման զգալիորեն աճում է, քանի որ փոխառու միջոցների նկատմամբ պահանջարկն աճում է: Ընդ որում՝ վարկն օգտագործվում է ոչ միայն արտադրության ընդլայնման համար, այլ նաև արժույթային, ֆոնդային և ապրանքային շուկաներում կատարվող սպեկուլյատիվ գործարքներում:

Ճգնաժամի ընթացքում տոկոսադրույքի նորման հասնում է իր առավելագույն արժեքին, քանի որ աճում է փոխառու կապիտալի նկատմամբ պահանջարկը, իսկ առաջարկը նվազում է: Այս փուլում սկսվում է փողերի հորսը՝ թե՛ որպես վճարման միջոցի և թե՛ որպես զանձերի կուտակման միջոցի, բոլորը փորձում են բանկերից դուրս հանել գումարներ, ապրանքները չեն իրացվում, իսկ գումարներն անհրաժեշտ են լինում նախկին պարտքերը մարելու համար:

Լճացման փուլում տոկոսադրույքի նորման լինում է մինիմալ, քանի որ արագ աճում է փոխառու միջոցների առաջարկը, իսկ պահանջարկն անկում է ապրում: Առաջարկն աճում է արտադրության անկման և լճացման պատճառով: Այսպես, կապիտալի մի մասը, որը նախկինում մասնակցում էր արդյունաբերության կամ առևտրի մեջ (վերելքի փուլում),

լճացման փուլում ազատվում է դրամի տեսքով և հոսում է բանկեր՝ հանդես գալով որպես ավանդ: Այսպիսով, լճացման փուլում փոխառու կապիտալի կուտակումը նվազեցնում է տնտեսության իրական հատվածում շրջանառվող կապիտալի ծավալները:

Տնտեսական շրջափուլերին տոկոսադրույքի արձագանքման այս տրամաբանությունը դրսևորվել է նաև ՀՀ տնտեսության վերջին շրջանի զարգացումների ժամանակ: Այստեղ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունն իրեն առավել զգացնել տվեց 2008 թվականին, և արդեն 2009 թվականին, համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների, տեղի ունեցավ նախորդ տարվա համեմատ 14.1 տոկոսային կետով ՀՆԱ-ի նվազում¹⁰⁶:

ՀՀ տնտեսությունում առևտրային բանկերի կողմից կատարվող վարկային ներդրումները թե՛ բացարձակ և թե՛ հարաբերական արժեքներով մինչ ճգնաժամը բավական առաջանցիկ տեմպերով աճ են արձանագրել, ինչը բնորոշ է տնտեսական վերելքի փուլին: 2009-2010 թվականներին վարկային ներդրումների աճի տեմպերի նվազումը զուգակցվել է ՀՀ դրամով տոկոսադրույքների միաժամանակյա աճով, որը արդեն ճգնաժամի փուլին բնորոշ դրսևորումներ են: Բնական է ենթադրել, որ այս շրջանում բանկերը, տոկոսադրույքները բարձրացնելով, ձգտել են նվազեցնել ճգնաժամով պայմանավորված դրամի արժեզրկման ռիսկերը: Հաջորդ տարիներին, սակայն, բանկերի միջև մրցակցության սրումը, որը հետևանք էր ճգնաժամով պայմանավորված իրական հատվածում տնտեսավարողների կրճատմամբ, հանգեցրեց նրան, որ տոկոսադրույքները կրկին վերանայվեցին: Հետևանքը եղավ այն, որ 2013 թվականին ՀՀ դրամով տրամադրվող վարկերի միջին տոկոսադրույքը նույնիսկ ավելի ցածր մակարդակ ունեցավ, քան ուներ մինչև ճգնաժամը դիտարկվող ժամանակահատվածում: Տոկոսադրույքի այսպիսի վարքագիծը, ինչպես արդեն նշեցինք, բնորոշ է տնտեսական լճացման և վերջինիս հաջորդող վերելքի փուլերին, երբ տոկոսադրույքն ունենում է նվազման միտում:

Փողի և արժեթղթերի շուկայի զարգացվածության աստիճանը: Արժեթղթերի տեսքով կատարվող ներդրումները ավանդաբար դիտարկվում են որպես այլընտրանքային գործարքներ բանկային վարկերի նկատմամբ: Ֆինանսական հաստատությունները ստիպված մշտապես վերանայում են տոկոսադրույքները ի պատասխան արժեթղթերի

¹⁰⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2013թ., էջ 253:

շուկայում տեղի ունեցող փոփոխությունների: Որքան զարգացած է արժեթղթերի շուկան, այնքան ակնհայտ է այդ կախվածությունը:

Ինչ վերաբերվում է ՀՀ արժեթղթերի շուկային, ապա ակներև է, որ այս ոլորտը զգալի հետ է մնում զարգացման տեմպերից: Ներկայումս էլ շարունակում է արժեթղթերի շուկան գործել գերազանցապես բանկային հատվածում, իսկ այդ հատվածում որպես հիմնական շրջանառվող գործիք շարունակում են հանդես գալ պետական պարտատոմսերը:

Կապիտալի միջազգային միգրացիան, ազգային արժույթի դիրքը, վճարային հաշվեկշռի վիճակը: Ինչպես հայտնի է, վճարային հաշվեկշռի հոդվածներում արտացոլվող դրամական միջոցների շարժը անդրադառնում է դրամական զանգվածի ծավալի և կառուցվածքի, տնտեսության ներքին շուկայի, ինչպես նաև մարդկանց սպասումների վրա: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում տոկոսադրույքի փոփոխություն, որն արձագանքում է բոլոր նշված գործոնների համալիր ազդեցությանը:

ՀՀ-ում, պայմանավորված մեծաքանակ արտագնա աշխատանքային միգրացիայով, արտաքին զգալի տրանսֆերտների հոսքերով, վճարային հաշվեկշիռը և ազգային արժույթի դիրքը էական ազդեցություն են ունենում ոչ միայն տնտեսության ֆինանսական, այլ նաև իրական հատվածի վրա: Ֆինանսական հաստատությունները ևս, իրենց հերթին, հաշվի առնելով տնտեսական կանխատեսումները, որոնք վերաբերվում են, օրինակ, ազգային արժույթի դիրքին, դիվերսիֆիկացնում են փոխառական տոկոսադրույքները՝ կախված տրամադրվող փոխառության արժույթից: Ըստ էության, սա արժութային տատանումներից բանկային ռիսկերի զսպման մեխանիզմ է, որը սակայն, ինչպես ցույց է տալիս կյանքը, կարող է մեծ բեռ դառնալ հասարակության համար: Այսինքն՝ դրամի տեսքով եկամուտ ստացող ՀՀ քաղաքացին փոխարժեքի թանկացման հետևանքով հետագայում կարող է դժվարանալ մարել արտարժութային վարկը:

Ռիսկի գործոնը բնորոշ է ցանկացած վարկային գործարքի համար: Ռիսկի աստիճանը և բնույթը փոփոխվում է՝ կախված կոնկրետ գործարքի բնույթից, սակայն եթե ներքին ռիսկերը կառավարելի են, ապա նույնը չի կարելի ասել արտաքին ռիսկերի (մակրոտնտեսագիտական, քաղաքական, իրավական) մասին: Այս ռիսկերը մակարդակը հաշվի է առնվում հատկապես միջազգային գործարքներում տոկոսադրույքները որոշելիս:

ՀՀ Կենտրոնական Բանկի դրամավարկային քաղաքականությունը: Դրամավարկային քաղաքականություն իրականացնելով, ՀՀ ԿԲ ձգտում է խթանել տնտեսական աճը, մեղմացնել տնտեսության զարգացման տատանումները, զսպել գնաճը, բարելավել արտաքին տնտեսական կապերը: Դրամավարկային քաղաքականության

գլխավոր գործիքներից են ԿԲ-ի հաշվարկային տոկոսադրույքը, բանկերի պարտադիր պահուստավորման նորմատիվները, ԿԲ-ի կողմից իրականացվող բաց շուկայական գործառնությունները, որոնց համալիր գործածման արդյունքում կարգավորվում են շրջանառության մեջ դրամական զանգվածի ծավալը և փոխատվական կապիտալի շուկայական տոկոսադրույքի մակարդակը:

Ինչպես ցույց տալիս, ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը, այն ևս կարելի է դասել տոկոսադրույքի վրա էականորեն ազդող գործոնների շարքում: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվում է հաշվառման դրույք, որը սահմանափակում է բանկային տոկոսադրույքները վերին շեմով: Հաշվառման տոկոսադրույքը կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի վարկավորման պաշտոնական տոկոսադրույքն է: Հաշվառման դրույքը մեկն է այն հիմնական գործիքներից, որի օգնությամբ տարբեր երկրների կենտրոնական բանկերը կարգավորում են շրջանառության մեջ փողի զանգվածը, ինֆլյացիայի տեմպերը, վճարային հաշվեկշիռը և արժութային կուրսը:

ՀՀ պետականության բոլոր տարիներին ՀՀ ԿԲ-ն եղել է բավականին ակտիվ, նույնիսկ նրա կողմից իրականացվող որոշ միջոցառումներ կարելի է համարել շուկային: Օրինակ, վերջին շրջանում առևտրային բանկերի համար սահմանված ընդհանուր կապիտալի նորմատիվի սահմանաչափի էական փոփոխությունը ստիպեց շատ բանկերի դուրս գալ ՀՀ ֆինանսական ասպարեզից: Չնայաց ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող միջոցառումներին դժվար է տալ միանշանակ գնահատական, սակայն նրա դերը ՀՀ ֆինանսական շուկայում և փոխատվական տոկոսադրույքի սահմանման գործում անհերքելի է:

Ինֆլյացիան (գնաճի սպասումները) էական գործոն է, որն ազդում է տոկոսադրույքների վրա: ՀՀ տնտեսության ինֆլյացիայի աճի տեմպը կարելի է համարել ավելի բարձր պաշտոնական տվյալների հետ համեմատած: Գնաճի տեմպի պաշտոնական տվյալների հաշվարկը կատարվում է որոշակի ապրաքախմբերի զանբյուրի հիման վրա, սակայն երբ շուկայում էականորեն թանկանում են առաջին անհրաժեշտության ապրանքները, դա արդեն առաջ է բերում համընդհանուր մակրոտնտեսական հետևանքներ, նույնիսկ եթե այդ ապրանքների գնային փոփոխության ազդեցությունը փոքրանում է, պայմանավորված նշված զամբյուրի տարբեր ապրանքների կշիռներով, և էական տատանում չի տալիս ինֆլյացիայի ցուցանիշի վերջնական արդյունքի վրա:

Հարկային քաղաքականություն: Հարկերի վճարման պատճառով նվազում է ձեռնարկությունների շահութաբերության մակարդակը, ինչի արդյունքում նրանց համար դժվարանում է շահույթի հաշվին տոկոսագումարների վճարումը: Սրան հակառակ,

հարկային արտոնություններից օգտվող նույնիսկ ավելի քիչ շահութաբեր ոլորտները դառնում են ավելի հրապուրիչ ներդրումների տեսանկյունից: Ինչ վերաբերվում է ՀՀ հարկային համակարգին, ապա կարելի է փաստել, որ չնայած այստեղ գործող հարկադրույթները միջազգային համեմատությունների առումով համարվում են նորմալ չափի, սակայն բազմաթիվ այլ խնդիրների պատճառով (օրենսդրական բացեր, կոռուպցիոն ռիսկեր, հարկատու-հարկային մարմիններ փոխվստահության բացակայություն և այլն) հարկային բեռը կարելի է դեռևս համարել բավականին ծանր:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կատարված գնահատականները ցույց են տալիս, որ ներկայացված գործոնների մեծամասնությունն ունի էական ազդեցություն փոխատվական տոկոսադրույթի վրա: Այդ գործոններն են՝ փոխառու միջոցների առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությունը, կապիտալի միջազգային միգրացիան, ազգային արժույթի դիրքը, վճարային հաշվեկշռի վիճակը, ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը, արտաքին ռիսկերի գործոնը, ինֆլացիոն սպասումները, հարկային քաղաքականությունը:

Հիմնաբառեր. փոխատվական տոկոսադրույթ, վարկ, մակրոտնտեսական գործոններ, ֆինանսական հատված:

FACTORS INFLUENCING ON INTEREST RATES IN ARMENIA

BAKUR MARTIROSYAN

Keywords: interest rate, credit, macroeconomic factors, financial sector.

The main factors affecting the interest rate on Armenian economy are presented in the work. The estimates show that most of the factors presented have a significant impact on the interest rate. These factors include: relationships between supply and demand of borrowers, international migration of capital, position of the national currency, state of balance of payments, monetary policy of the Central Bank of Armenia, external risk factor, inflation expectations, tax policy.

ФАКТОРЫ, ВЛИЯЮЩИЕ НА ПРОЦЕНТНЫЕ СТАВКИ В АРМЕНИИ

БАКУР МАРТИРОСЯН

Ключевые слова: процентная ставка, кредит, макроэкономические факторы, финансовый сектор.

В работе представлены основные факторы, влияющие на процентную ставку в экономике Армении. По оценкам, большинство представленных факторов оказывают значительное влияние на процентную ставку. Эти факторы включают взаимосвязи между спросом и предложением заемщиков, международной миграцией капитала, позицией национальной валюты, состоянием платежного баланса, денежно-кредитной политикой Центрального банка Армении, внешним фактором риска, инфляционными ожиданиями, налоговой политикой.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՓՈԽԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆ

ՍՅՈՒՁԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ժամանակակից արժեքների վերագնահատման պայմաններում փոփոխվող հասարակական իրականության մեջ նշանակալի տեղաշարժեր են տեղի ունենում ընտանեկան դաստիարակության համակարգում: Ընտանիքը հասարակության հիմքն է և որպես մարդկանց կայուն սոցիալական օղակ, ունի բազմաթիվ տարիների պատմություն: Այն հասարակության տարր է և կատարում է կարևորագույն խնդիր՝ ապահովել երեխայի ֆիզիկական ու հոգեկան զարգացումն ու համակողմանի դաստիարակությունը: Ընտանիքը համարվում է երեխայի սոցիալականացման առաջին և կարևորագույն օղակը: Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորության գծերը, դաստիարակվում են բարոյական հատկություններ և սոցիալական վարքագծի հիմքեր:

Ընտանիքը մեծապես նպաստում է երեխայի ինքնահաստատմանը սոցիալական միջավայրում, նրա ստեղծագործական ներուժի և անհատականության բացահայտմանը: Անհատի համար սեփական «ես»-ի զգացողությունը և աշխարհընկալումը նույնպես ձևավորվում է ընտանիքում: Նշված ձեռքբերումները ծնողների և երեխաների ինքնատիպ և կայուն հարաբերությունների արդյունք են: Ընտանիքն այն կայուն սոցիալական օղակն է, որն ուղեկցում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքի ընթացքում¹⁰⁷:

Ընտանիքի ուսումնասիրությամբ մինչև վերջին ժամանակները զբաղվում էր բացառապես միայն սոցիոլոգիան, սակայն այժմ դարձել է և՛ հոգեբանների, և՛ մանկավարժների դիտարկման կարևորագույն օղակը: Ներկա ժամանակաշրջանում ընտանիքի սոցիալական դերը ոչ միայն հոգեբանական, մանկավարժական հիմնախնդիր է, այլև լուրջ մտահոգության առարկա՝ ցանկացած հասարակության համար: Ընտանիքի կարևորագույն սոցիալական գործառույթը երեխաների դաստիարակությունն ու զարգացումն է, մատաղ սերնդի սոցիալականացումը: Վերջին տարիներին ընտանիքի դաստիարակչական ներուժը, նրա կենսագործունեությունը, արժեքային կողմնորոշումը և սոցիալական հիմնադրույթները, վերաբերմունքը երեխաների կրթության և դաստիարակության նկատմամբ, կրում են լուրջ փոփոխություններ, որոնք մեծապես պայմանավորված են կյանքի նոր պայմաններին հարմարման գործընթացներով: Այսօր առավելագույնս է նշանավորվում ծնողի՝ որպես առաջին ուսուցչի դերի կարևորությունը: Ծնողները հասարակության կողմից դիտարկվում են որպես երեխաներին կրթելու հարցում ուսուցչի գործընկեր:

Այսօրվա փոփոխվող հասարակության մեջ ընտանիքը նոր ձևով է սահմանվում: Մենք ընդունում ենք, որ ընտանիքի տեսակներն այնքան բազմազան են, որքան նրա անդամները: Ե՛վ մեծ, և՛ փոքր միջուկային ընտանիքները, որտեղ կան ծնողներ ու երեխաներ, բոլորն էլ արժեվորվում են երեխաների վրա ունեցած սկզբնական ազդեցությամբ: Ծնողները խնդրահարույց հարցերի լուծման և համագործակցության առաջին մոդելներն են: Նրանք սովորեցնում են իրենց երեխաներին դառնալ համայնքի և հասարակության մի մասը: Ծնողներն իրենց երեխաների համար ունեն նույն ընդհանուր նպատակները, ինչ

¹⁰⁷ Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաբյան «Նախադպրոցական մանկավարժություն», Երևան 2008 թ.:

ուսուցիչները բոլոր երեխաների համար: Ինչպես Ջեյմս Հայմեսն է գրում իր «Ուսուցանել մինչև 6 տարեկան երեխային» աշխատության մեջ. «Ծնողներն այնքան հավատացած են յուրաքանչյուր անհատի արժեքների, կարևորության և արժանապատվության մեջ, որքան ցանկացած ուսուցիչ: Ի վերջո, այդ անհատը նրանց երեխան է: Ծնողները գիտեն պատրաստակամության և նվիրվածության մասին: Նրանք ապրում են իրենց երեխաների հետ և հաշվի են առնում այս գաղափարները»:

Վաղվա առողջ սերնդի կայացման համար չափազանց կարևոր է կրթական բոլոր հաստատությունների գործիմաց համագործակցությունը: Ժամանակակից մանկավարժության կողմից առավել քան կարևորվում է «ընտանիք-մանկապարտեզ-դպրոց» սոցիալական ինստիտուտների միջև համագործակցության նոր ձևերի մշակումը, փոխադարձ կապի և պատասխանատվության հաստատումը: Համագործակցության պայմաններում դրական փոփոխությունների են ենթարկվում «ծնող-երեխա-մանկավարժ» փոխհարաբերությունները, որոնք կրթական գործընթացի խթանման և դրա արդյունավետության հիմնական գործոններից մեկն է:

Մանկապարտեզը կոչված է իրականացնելու նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական դաստիարակությունը: Նախադպրոցական կրթօջախների հիմնական գործառույթը երեխայի դաստիարակության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում, նախադպրոցահասակ երեխաների հասարակական կյանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Մանկապարտեզում է երեխան սկսում հաղորդակցվել և համագործակցել, որոշումներ կայացնել, համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների ու կարծիքի հետ:

Ընտանիքի և մանկապարտեզի ընդհանուր համագործակցության մեջ կարևորվում է պատասխանատվությունը, որն ապահովում է հաջողություն յուրաքանչյուր երեխայի զարգացման բոլոր ոլորտներում: Հետազոտությունները ցույց են տվել, որ այսպիսի միությունը արդյունավետ է երեխայի անձնական և սոցիալական զարգացման համար: Բոլոր երեխաներն էլ շահում են տան և մանկապարտեզի դրական, բարեկամական հարաբերություններից: Դրանք թույլ են տալիս ստեղծել հստակ հարաբերություններ: Երեխաները գիտակցում են, որ իրենց աշխարհի ամենակարևոր մեծահասակները հոգում են իրենց մասին: Երեխաների դաստիարակության գործում պահանջվող միասնությունն ապահովում է նրանց վարքի ձևավորումը, արագացնում գիտելիքների, կարողությունների և

ունակությունների յուրացումը, նպաստում ծնողների և դաստիարակների հեղինակության բարձրացմանը: Նման միասնության հիմքը ծնողների մանկավարժական գիտելիքներն են, նրանց իրազեկությունը նախադպրոցական հաստատության գործունեության մասին:

Փորձենք ներկայացնել ընտանիքի ու մանկապարտեզի համատեղ աշխատանքը. ըստ մանկավարժների ծնող-դաստիարակ արդյունավետ կապը ստեղծելու երկու հիմնական ճանապարհ կա.

- հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցում,
- ծնողների ներգրավման բազմազան միջոցներ:

Ընտանիք-մանկապարտեզ կապը հիմնված է փոխվստահության վրա: Արդյունավետ հաղորդակցումը փոխադարձ վստահություն է ծնում: Ծնողների հետ իրական գործընկերներ լինելու համար մանկավարժները և դաստիարակները պետք է նախ թեստերի, անկետաների միջոցով մանրամասն տեղեկանան ծնողներից իրենց երեխաների մասին: Այս պարագայում, ծնողները համարվում են կարևոր խորհրդատուներ: Ծնողների և մանկավարժ դաստիարակների միջև երկկողմ հաղորդակցության մեջ հաջողության հասնելու համար մանկավարժները համբերատար լսելու հմտություններ պետք է ունենան: Ծնողներին ուշադիր լսելով կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել:

Երկկողմանի հաղորդակցության համակարգված աշխատանքի միջոցով ծնողներն ու մանկավարժները սերտորեն համագործակցում են երեխաներին օժանդակելու նպատակով: Այս եռակողմ կապի առկայությամբ է ձևավորվում ծնող-երեխա-դաստիարակ փոխհարաբերությունները: Մեր կողմից կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ ավելի հեշտ է լուծել դժվար խնդիրները, երբ հաղորդակցության ուղիներն արդեն լավ գործում են: Այս ձևով և՛ մանկավարժները, և՛ ծնողներն ունենում են մի սկզբնակետ, որից ելնելով, փորձում են լուծել ծագած խնդիրները: Անհրաժեշտ ենք համարում, որ մանկապարտեզում հատուկ սենյակ առանձնացվի ծնողների համար պարբերաբար ծնողական կոնֆերանսներ, երկխոսություններ, թեմատիկ սեմինարներ («հայրիկների մասնակցությունը երեխաների դաստիարակությանը», «աշխատանքային դաստիարակությունը ընտանիքում», «համակարգչային խաղերի դերը երեխաների

զարգացման գործում») կազմակերպելու համար¹⁰⁸։ Ծնողներին հատուկ տեղ տրամադրելով՝ մանկապարտեզը կարծես ընդգծում է, որ զգում է նրանց կարիքը և հարգանքով է վերաբերվում այն բոլոր ներդրումներին, որ նրանք կարող են կատարել։ Անհրաժեշտ է խթանել ծնողներին՝ որպես երեխաների կրթության ու դաստիարակության հարցում մանկավարժի գործընկեր։ Ծնողի կամ ընտանիքի այլ անդամի հետ անցկացվող զրույցները (առավոտյան կամ երեկոյան) դաստիարակը պետք է վարի նախապես նախապատրաստված և այն նշի իր աշխատանքային պլանում։ Առավոտյան զրույցները համեմատաբար կարճատև են լինում, սակայն կարևոր նշանակություն ունեն երեխայի ինքնագզացողությունը պարզելու, տրամադրությունը բարձրացնելու, դաստիարակի նկատմամբ վստահություն ներշնչելու առումով։

Ծնողների համար նախատեսված կոնսուլտացիաները պետք է անցկացնել այն ժամանակ, երբ հասունանում է նրանց հետ ավելի մանրամասն և հիմնավոր խոսելու պահը, որպեսզի վերլուծվեն այնպիսի սխալներ, որոնք թույլ են տրվում ծնողների կողմից մանկապարտեզի հետ սերտ կապի մեջ չլինելու պատճառով։

Ընտանիքի հետ կոլեկտիվ աշխատանքի ձևերից են նաև ծնողական ընդհանուր և խմբային ժողովները, խմբային կոնսուլտացիաները, ծնողների համարկազմակերպվող երեկոները։ Նման ժողովների նպատակը ծնողների մանկավարժական կուլտուրայի բարձրացումն է և երեխաների դաստիարակության գործում նրանց տրվող օգնությունը։ Ծնողական ժողովի թեմաներն ընտրվում են ընտանիքի և մանկապարտեզի առջև ծագած խնդիրներով։ Ծնողական ընդհանուր ժողովների թեմատիկան տարբերվում է խմբային ժողովների թեմատիկայից։ Խմբային ժողովներում քննարկվում են հատկապես տվյալ տարիքին վերաբերող հրատապ խնդիրները։

Նախադպրոցական հաստատության պրակտիկայում կան նաև «Բաց դռների օրեր» ծնողների համար։ Դրանք պլանավորվում են ամբողջ տարվա համար։ Այդ օրերին ծնողները լսում են պարապմունքներ, մասնակցում զբոսանքներին, դիտում են երեխաներին խաղային և աշխատանքային գործունեության պահերին, ծանոթանում են այն մեթոդների ու հիմնահարցերի հետ, որոնք օգտագործում է դաստիարակը երեխաների դաստիարակության

¹⁰⁸ «Քայլ առ քայլ» ծրագիր երեխաների և նրանց ընտանիքների համար, Երևան 2002 թ.։

գործը կազմակերպելիս: Դաստիարակը կարող է կազմակերպել նաև թեմատիկ ցուցահանդեսներ, որոնք ծնողներին կծանոթացնեն երեխաների ստեղծագործական աշխատանքներին, նրանց նկարելու, ծեփելու, նախշելու, բնական նյութերով աշխատելու կարողություններին¹⁰⁹:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտանիքի դերը մեծ է հատկապես նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործում: Ծնողների օգնությամբ են երեխաները տիրապետում շրջապատող իրականության վերաբերյալ նախնական պատկերացումներին: Ծնողներն իրենց երեխաներին դաստիարակում են հասարակության պահանջներին համապատասխան՝ նրանց մեջ ձևավորելով հայրենիքի նկատմամբ սեր և բարոյական վարքի անհրաժեշտ ունակություններ: Իսկ որպեսզի նախադպրոցական հաստատության աշխատանքն ընտանիքի հետ տա կոնկրետ արդյունք, նպաստի ծնողների մանկավարժական կուլտուրայի բարձրացմանը, ինչպես նաև սահմանվի դաստիարակչական աշխատանքի միասնություն, անհրաժեշտ է պլանավորված, նպատակաուղղված և պարբերաբար ընթացող աշխատանք: Մեծ նշանակություն ունի նաև մանկապարտեզի անձնակազմի և դաստիարակների փոխհրաբերությունների բնույթը ծնողների հետ: Ընտանիքի հետ տարվող աշխատանքի նպատակաուղղվածությունը կայանում է նրանում, որ ամեն մի զրույց, հանդիպում, զեկուցում ուղղված լինի որոշակի նպատակի: Այսպիսով մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայացված է նախադպրոցական հաստատության և ընտանիքի փոխգործունեության այն առանձնահատկությունները, որոնք վերաբերում են երեխայի ինքնադրսևորմանը կամ ընդգրկում են սոցիալականացման հաղորդակցական հնարավորությունները: Երեխայի ընդհանուր զարգացման ենթատեքստում քննարկվում են նախադպրոցական հաստատության և ընտանիքի տեղն ու նշանակությունը:

¹⁰⁹ Այսպիսով Հովհաննիսյան «Դաստիարակենք միասին», Երևան 2014թ.:

Հիմնաբաներ. ընտանիք, մանկապարտեզ, դաստիարակություն, զարգացում, համագործակցություն, սոցիալական զարգացում, փոխօգնություն, գործընկեր, մանկավարժական կուլտուրա, փոխգործունեություն:

THE PECULIARITIES OF INTERACTION BETWEEN PRESCHOOL INSTITUTIONS AND FAMILY

MARIANNA AVAGYAN

SUYZANNA HOVANNISYAN

The article presents those features of the interaction of preschool institutions and family, which contribute to self-presentation of a child, including communication capabilities. The place and significance of the interaction between preschool institutions and family are discussed in the context of the overall development of the child.

Key words: family, preschool institution, education, development, cooperation, social development, mutual aid, partner, pedagogical culture, interaction.

ОСОБЕННОСТИ ВАИМОДЕЙСТВИЯ ДОШКОЛЬНОГО УЧРЕЖДЕНИЯ И СЕМЬИ

МАРИАННА АВАГЯН

СЮЗАННА ОГАНИСЯН

В статье предсавляются те особенности взаимодействия дошкольного учреждения и семьи, которые способствуют самопредставлению ребёнка, включая возможности коммуникации.

В контексте общего развития ребёнка, обсуждается место и значеение взаимодействия дошкольного учреждения и семьи.

Ключевые слова: семья, детский сад, образование, сотрудничество, социальное развитие, взаимопомощь, партнер, педагогическая культура, взаимодействие.

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԻՆ (ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ՔՐԻՍՏԻՆԵ ՌՇՏՈՒՆԻ

“Մայրենի լեզվի նկատմամբ ունեցած յուրաքանչյուրի վերաբերմունքից կարելի է դատել ոչ միայն նրա քաղաքակիրթ լինելու մակարդակի, այլ նաև նրա քաղաքացիական արժեհամակարգի մասին”:¹¹⁰

Կ. ՊԱՌԻՍՏՈՎՍԿԻ

Ժամանակակից կրթությունը հիմնված է մարդասիրական ու ժողովրդավարական սկզբունքների վրա և դրա ուշադրության կենտրոնում դրվում է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման խնդիրը: Աճող սերնդի արժեհամակարգում արժևորվում է բարոյական որակների դաստիարակման անհրաժեշտությունը, ամրապնդվում է անհատի պատասխանատվությունը քաղաքական, բարոյական, իրավական ընտրության, օրենքի պահպանման, երկրի պաշտպանության համար: Այսինքն կարևորվում է ոչ միայն առողջ սերունդ ունենալու խնդիրը, այլև այնպիսի քաղաքացու դաստիարակումը, ով կունենա ձևավորված քաղաքացիական դիրքորոշում և պատրաստ կլինի ցանկացած ժամանակ պայքարելու հայրենիքի ազատության, ժողովրդավար իրավական պետության կայացման համար, կայացնելու ինքնուրույն որոշումներ՝ կանխագուշակելով դրանց հնարավոր հետևանքները: Քաղաքացիական հասարակության կառուցումը և սոցիալապես պատասխանատու քաղաքացու դաստիարակությունը լուծվում է դպրոցում քաղաքացիական դաստիարակության միջոցով: ՀՀ հանրակրթական պետական չափորոշիչներում բնութագրվում է սովորողների արժեքային համակարգը, որը սովորողների քաղաքացիականության կարևոր բաղադրիչն է և ամբողջացնում է քաղաքացու կերպարը:

¹¹⁰ Կ. Պաուստովսկի, <http://proza.ru/2015/01/28/1683>

Այդ բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների, նրանց մշակույթի հանդեպ, գնահատի իր ուժերն ու կարողությունները, բացառելով սեփական անձի թերագնահատումը և գերագնահատումը:¹¹¹

Տարեցտարի գիտակցում ենք, որ քաղաքացիական հասարակություն կառուցելու համար անհրաժեշտ է ճկուն, դինամիկ, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվող անձի ձևավորումը, ով կտիրապետի քաղաքացիական մշակույթին, ազգային մտածողությանը, համամարդկային արժեքներին: Քաղաքացիական դաստիարակության հիմնախնդիրը իր ուրույն տեղն է զբաղացրել հայ մանկավարժության մտքի պատմության մեջ: Մեծանուն մանկավարժներ Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Ղ. Աղայանը, Րաֆֆին իրենց գրական հարուստ ժառանգությամբ զարգացրել են բարոյական մի շարք սկզբունքներ, որոնց նպատակն էր աճող սերնդի մեջ դաստիարակել լավ քաղաքացու հատկանիշներ՝ հայրենասիրություն, պատասխանատվություն, անձնուրացություն, առաքինություն:

Դաստիարակել քաղաքացուն նշանակում է դաստիարակել իսկական մարդու, ով իր մեջ ներառում է սոցիալական լավատեսությունը, հայրենիքը բարձր գնահատելու կարողությունը, կյանքի իմաստի ըմբռնումը, անձնականի և հասարակականի ներդաշնակ միասնությունը, անձի մտավոր և հոգևոր հարստությունը, ակտիվ վերաբերմունքը բարուն և չարին, արժանապատվությունը, սերը աշխատանքի նկատմամբ:¹¹²

Ժամանակակից դպրոցի կարևոր խնդիրներից է աջակցել քաղաքացիական կրթությանը, որի համակարգը ընդգրկում է իր մեջ մի շարք նպատակներ, գործառույթներ, որոնք ձևավորվում են հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, յուրացնելու համաքաղաքացիական և համամարդկային քաղաքական գաղափարները,

¹¹¹ Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց (պրակ 1, կրթակարգ, կրթության ազգային ինստիտուտ, , Երևան, 2004, էջ 63:

¹¹² Սուխոմլինսկի Վ.Ա., Քաղաքացու ծնունդը, Լույս, Եր., 1978թ., էջ 26:

քաղաքացիական դաստիարակության բովանդակությունը, ձևերը դպրոցում, դպրոցից դուրս, հասարակական կազմակերպություններում, ՋԼՄ-ներում, աշխատանքային կոլեկտիվներում:

Դպրոցականների քաղաքացիական դաստիարակության նպատակները և գործառնությունները կատարվում և իրականացվում են ամբողջական ուսումնադաստիարակչական գործընթացի հարուստ բովանդակության շնորհիվ, որը նպաստում է ազգային արժեքների, մշակույթի, ավանդույթների, մարդու քաղաքացիական իրավունքի, ազատության, անձնվիրաբար հայրենիքը պաշտպանելու կարողության ձևավորմանը:

Քաղաքացիական դաստիարակության խնդիրները լուծվում են ուսումնական տարբեր առարկաների համակարգում, հատկապես մայրենի լեզվի և գրականության, հարազատ երկրի պատմության և աշխարհագրության ժամերին: Սակայն այս համակարգում օտար լեզվի դերն ու տեղը թերագնահատվում է, մինչդեռ սովորողների քաղաքացիական կրթության համար օտար լեզուն ունի անհրաժեշտ նախադրյալներ:

Քաղաքացիական դաստիարակության իրականացումը հանրակրթական դպրոցի ուսուցման գործընթացում ունի իր խնդիրները՝ որոնք պայմանավորված են.

1. Դասաժամին կիրառվող ժամանակակից մեթոդների ընտրությամբ:

«Ըստ Վ. Շ. Մասլեննիկովայի սովորողների մոտ քաղաքացիական գիտակցության ձևավորումը պայմանավորված է ոչ այնքան դասավանդվող առարկայով, այլ դասավանդման մեթոդների ճիշտ ընտրությամբ և դաստիարակությամբ».¹¹³

2. Ուսումնական առարկայի կրթության բովանդակության նպատակային կիրառմամբ:

Օրինակ՝ Հայաստանի և Միացյալ Թագավորության պատմության, դրա հետ առնչվող հերոսական շարժման, հերոսների, ազգային ավանդույթների, տեսարժան վայրերի, որոնք պետք է ոչ միայն նպաստեն դասի արդյունավետության բարձրացմանը, այլև՝

¹¹³ МАСЛЕННИКОВА В.Ш. Педагогическая модель социально-ориентированной личности студента : метод. пособие, Казань: ИСПО РАО, 2006. 124 с.

- քաղաքացիական գիտակցության, քաղաքացիական որակների և արժեքների վերահսկման ձևավորմանը,

- քաղաքացիա-հայրենասիրական գործունեության կազմակերպմանը,

- քաղաքացիական դիրքորոշման խթանմանը:

3. Մկանակ ուսուցիչների ոչ լիարժեք գիտելիքների և փորձի հետ, որոնք թերի են մնացել դեռ ԲՈԻՀ-ում ուսանելու տարիներից:

4. Քաղաքացիական կրթության համակարգում կրթական գործունեության բոլոր սուբյեկտների ներգրավում:

Օտար լեզվի դասին քաղաքացիական դաստիարակությանը էապես կարող է նպաստել մշակութային երկխոսություն տեխնոլոգիայի կիրառումը, որը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ քաղաքացիական դիրքորոշման կայացման և կատարելագործման համար՝ ներառելով ուսուցման գործընթացի մասնակիցներին և ստեղծում պայմաններ հասարակության բարոյական արժեքների գիտակցման և ընդունման համար, նախապատրաստում սովորողներին համակարգված բարոյական-իրավական գիտելիքների ըմբռնմանը: Օտար լեզվի դասին մշակութային երկխոսության տեխնոլոգիայի կիրառումը քաղաքացիական դաստիարակության նպատակով հնարավոր է, քանի որ մի շարք առարկաների ուսումնասիրումից սովորողները ունեն ընդհանուր պատկերացումներ պետության կայացման մասին, մարդու հիմնական իրավունքների և պարտականությունների, մարդու վարքի, բարոյական հասկացությունների մասին, նրանք ծանոթ են իրենց հայրենիքի պատմությանը, Հայաստանի Հանրապետության մարզերի և քաղաքների անուններին, ծանոթ են պետական խորհրդանիշներին՝ դրոշմի, զինանշանի, օրհներգի պատմությանը, հայկական ազգային ավանդույթներին, տոներին, նշանավոր անձանց: Այստեղ առաջնային խնդիրը օտար լեզվի դասին սովորողների ակտիվ բառապաշարում հոգևոր արժեքներ, բարոյական, հայրենասիրական, իրավական, քաղաքացիական, հայրենասիրական դիրքորոշումը բնութագրող բառաշերտ ստեղծելն է, որպեսզի կարողանան իրենց ունեցած գիտելիքներով երկխոսության մեջ մտնել օտար լեզվի դասին: Աշակերտներին ներգրավելով այնպիսի խթանող ուսումնական գործունեության մեջ, ինչպիսիք են տեքստի ընթերցումը, քննարկումը, մտքի վերարտադրումը, մամուլի ասուլիսները, բլից հետազոտությունները, խորհրդատվությունները, ցուցահանդեսները, դիագրամների, աղյուսակների լրացումը սեփական երկրի կամ մշակույթի հետ համեմատելու և հակադրելու նպատակով (աղյուսակ 1), դերային խաղերը, վիկտորինաները, կարճ/հակիրճ պրեզենտացիաները/ռեֆերատները

հնարավորություն կտան ստեղծելու ոչ միայն անհրաժեշտ պայմաններ քաղաքացիական դիրքորոշման կայացման և կատարելագործման համար, քաղաքացիական և բարոյական նորմերի ընկալման և յուրացման համար, այլև կխորացնեն աշակերտների մշակութային պատկանելության զգացումը, կնպաստեն, որ աշակերտները գիտակցեն մշակութային բազմազանությունը, կտվորեցնեն գնահատել սեփական և օտար մշակույթը: Ուսուցման գործընթացում նմանատիպ փոխներգործուն ձևերի կիրառումը հնարավորություն են տալիս ակտիվացնել և խթանել լսարանի «մտքի և խոսքի» մշակույթը:

Վերոհիշյալ սխեմայում/դիագրամում «մտքերի տարափ» մեթոդով ուսանողները գրում են այն հասկացությունները և երևույթները, որոնք իրենց մոտ ասոցիացվում են «հայրենիք» հասկացության հետ:

Աղյուսակ 1

	UK	Armenia
1. General characteristics		
2. Geography		
3. Architecture		
4. Food		
5. National symbols		
6. Traditions		
7. National festivals		

8. National heroes/famous statesmen/		
9. Political system		

Դասարանը բաժանելով երկու խմբի՝ մշակութային երկխոսության տեխնոլոգիայի կիրառմամբ կներկայացնեն Մեծ Բրիտանիան և Հայաստանը: Ուսուցչի օգնությամբ կներկայացնեն այն ենթաբաժինները, որոնք զետեղված են աղյուսակ 1-ի ինը բաժիններում:

Օրինակ՝ **Geography** բաժնում կարելի է ներառել հետևյալ թեմաները.

- Where is the UK/Armenia situated?
- What is the full name of the country?
- What is the landscape of the country like?
- What are the highest peaks/mountains in the country?
- Name the rivers/lakes and seas in the country.

կամ՝ **National heroes/famous statesmen/** բաժնում պետք է անվանել Միացյալ Թագավորության և Հայաստանի հայտնի քաղաքական գործիչներին/ազգային հերոսներին, ներկայացնել կենսագրական տվյալներ նրանց մասին, խոսել նրանց կատարած գործունեության կարևոր դրվագների մասին, նշել թե որտեղ կարելի է տեսնել նրանց հուշարձանները:

Political system բաժնում աշակերտները պատասխանում են հետևյալ հարցերին.

- What political system does the UK/Armenia have?
- Who rules the country?
- Name the three branches of the government in the UK and Armenia.
- How often are elections held in the country?

Սովորողը մտնելով երկխոսության մեջ՝ ցույց է տալիս հարազատ և օտար երկրի օրենքների, նորմերի, պահանջների, սովորույթների, բառապաշարի իր իմացությունը և դրանք կյանքում կիրառելու ունակությունը, ընդլայնում սոցիալ-մշակութային և մշակութային ինքնորոշման և ինքնիրացման շրջանակը:

Այսպիսով՝ քաղաքացու, հայրենասերի և պաշտպանի դաստիարակումը յուրաքանչյուր պետության ընդհանուր և մասնագիտական կրթության ռազմավարական խնդիրներից է: Անվիճելի է, որ ժամանակակից աշխարհում մշակույթների երկխոսությունը և կրթական բարեփոխումները թելադրում են հասարակության բազմակողմանի զարգացում: Այդ պատճառով օտար լեզվի ուսուցանումը մայրենիի հենքով ոչ միայն հայրենասիրություն է, այլ ակտիվ քաղաքացիական դիրքորոշում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում նշվում է, որ սովորողների քաղաքացիական կրթության համար օտար լեզուն նույնպես ունի անհրաժեշտ նախադրյալներ: Մշակութային երկխոսության տեխնոլոգիայի կիրառումը օտար լեզվի դասին կստեղծի անհրաժեշտ պայմաններ սովորողների քաղաքացիական գիտակցության, քաղաքացիական որակների և արժեքների ձևավորման, քաղաքացիական դիրքորոշման կայացման համար:

Հիմնաբառեր. քաղաքացիական դաստիարակություն, քաղաքացիական դիրքորոշում, քաղաքացիականություն, քաղաքացիական մշակույթ, քաղաքացիական հասարակություն, մշակութային երկխոսություն:

FORMATION OF IDEAS AND NOTIONS OF CIVIC EDUCATION IN FOREIGN LANGUAGE CLASS (THE ENGLISH LANGUAGE CLASS)

KRISTINE RSHTUNI

Key words: Civic education, civic position, civil culture, civil society, cultural dialogue.

The article points out that a foreign language too has prerequisites for students' civic education. The application of cultural dialogue in a foreign language class will ensure necessary conditions for formation of students' civic consciousness, civil qualities and values, as well as establishment of civic position.

ФОРМИРОВАНИЕ ПОНЯТИЙ ГРАЖДАНСКОГО ВОСПИТАНИЯ НА УРОКЕ ИНОСТРАННОГО ЯЗЫКА (НА ПРИМЕРЕ УРОКА АНГЛИЙСКОГО ЯЗЫКА)

КРИСТИНЕ РШТУНИ

Ключевые слова: гражданское воспитание, гражданская позиция, гражданская культура, культурный диалог.

В статье обсуждается необходимость иностранного языка в деле гражданского воспитания учащихся. Использование метода культурного диалога на уроке иностранного языка создаст необходимые предпосылки для формирования гражданского сознания, гражданских качеств и ценностей, а также для становления гражданской позиции.

«ՁԱՐԳԱՑՆՈՂ» ԵՎ «ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԻՐՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Հնագույն ժամանակներից սկսած մարդկային միտքը զբաղված է եղել իր կուտակած փորձն ապագա սերունդներին փոխանցման առավել արդյունավետ ուղիների որոնմամբ: Այդ գործընթացում տևական ժամանակ ուղեցույց են հանդիսացել հնագույն փիլիսոփաների գաղափարները կրթության, դաստիարակության, ուսուցման մեթոդների վերաբերյալ: Գիտելիքի կարևորությունը արժևորվել է երկու տեսանկյունից՝ արտաքին՝ որպես անձնական հաջողության հասնելու միջոց (սովետներ) և ներքին՝ որպես ինքնաճանաչողության հասնելու միջոց (Սոկրատես, Պլատոն, Արիստոտել):

Մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց փոփոխության են ենթարկվում նաև կրթության հանդեպ պահանջները:¹¹⁴ Միջնադարում, առավել ևս

¹¹⁴ . Թորգոմյան Լ. Վ. . «Մանկավարժության արժեքաբանության հիմունքներ»,

Երևան «ԱՆ-ՁՈՆ» հրատ. 2011թ., 160 էջ:

Վերածննդի դարաշրջանում վերաիմաստավորվում են դասիարակության, կրթության հիմնախնդիրները և նոր ուղիներ են նախանշվում դրանց լուծման համար:

Վաղ կապիտալիզմի շրջանում կրթության նկատմամբ նոր պահանջներ էին առաջադրվում, կրթության բովանդակության վերակառուցման անհրաժեշտությունը հանգեցնում էր մանկավարժական գիտելիքների դերի արժևորման և առկա մեթոդիկայի վերաիմաստավորման:

Համաշխարհային զարգացումների ժամանակակից միտումները նորանոր խնդիրներ են առաջադրում, որոնք անհրաժեշտ է լուծել կրթության համակարգում էական փոփոխություններ կատարելով, մասնավորապես այն արդիականացնելով: Կրթության առաջանցիկ զարգացումը ժամանակակից աշխարհում վճռորոշ նշանակություն ունի ոչ միայն հասարակության առաջընթացի այլև յուրաքանչյուր առանձի, մարդու ճակատագրի համար: Քաղաքակրթության նորագույն իրողությունները օրինաչափորեն բխում են շատ երկրների կրթական «ձգնաժամից», ինչը հանգեցնում է կրթական համակարգի խոր և էական փոփոխությունների, նորամուծությունների, բարեփոխումների: Այդ ամենը չեն կարող շրջանցել հետխորհրդային տարածքի երկրները, այդ թվում նաև Հայաստանը:

Թե՛ մեր երկրում, թե՛ արտերկրում կատարված փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները վկայում են «զարգացնող» ուսուցում և «արդյունավետ» ուսուցում իրականացնող ուսուցիչների ռազմավարության և դասավանդման տեխնիկայի տարբերության մասին:

«Զարգացնող» ուսուցման կողմնակից ուսուցիչները ջանում են ավելի մեծ ուշադրություն դարձնել ուսումնական նվաճումների փոփոխական գործոնների վրա: Նրանց համար առաջնային նշանակություն ունեն աշակերտների պարտաճանաչությունն ու ջանասիրությունը, իսկ «արդյունավետ» ուսուցման կողմնակից ուսուցիչները առավել մեծ ուշադրություն են դարձնում ուսումնական նվաճումների կայուն գործոնների վրա:¹¹⁵ Նրանց համար առավել մեծ նշանակություն ունեն սովորողների ընդունակությունները և կարողությունները, որոնք էլ կնպաստեն աշակերտների բարձր առաջադիմությանը ամբողջ

¹¹⁵ .Арсеньев А.С. Проблема цели в воспитании и образовании, Москва

«Педагогика» 1981г.

ուսուցման ընթացքում և մեծ դեր կխաղան աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցերում:

Այս տարբերության արդյունքում առաջին խմբի ուսուցիչները առաջնային են համարում սովորողների և ուսումնական հաստատության այլ ուսուցիչների հետ իրենց ունեցած լավ հարաբերությունները, իսկ երկրորդները՝ իրենց մասնագիտական հեղինակությունը:

Այս երկու խմբերի ուսուցիչները տարբեր կերպ են ողջունում սովորողների հաջողությունները:

«Արդյունավետ» ուսուցման կողմնակից ուսուցիչները գովաբանում են այն աշակերտներին, որոնց ցուցանիշները գերազանցում են միջինի մակարդակը, նույնիսկ այն դեպքում, երբ նրանց առաջադիմությունն իջել է: «Զարգացնող» ուսուցման կողմնակից ուսուցիչները նման դեպքում կշտամբում են աշակերտին: Մինչդեռ հենց այս խմբի ուսուցիչներն են գովասանքով արձագանքում իրենց աշակերտների ամենաանշան հաջողությանը, հենց նրանք են քաջալերում և օգնում սովորողներին ուսուցման գործընթացում: Ի հակադրումն այս ուսուցիչների «արդյունավետ» ուսուցման կողմնակիցները խրախուսում կամ կշտամբում են այն դեպքում, երբ ուսուցման արդյունքը հայտնի են, թե՛ դրական, թե՛ բացասական իմաստով: «Զարգացնող» ուսուցման կողմնակիցները ձգտում են զարգացնել սովորողների անհատականությունը՝ հիմք ընդունելով հուզական և սոցիալական գործոնները:¹¹⁶

Հավատարիմ մնալով ճկուն ծրագրին, նրանք չեն սահմանափակվում ուսուցանվող առարկայի բովանդակությամբ: Նրանց հատուկ են դասավանդման ազատ ոճը, անհատական մոտեցումը անկեղծությունը և հաղորդակցման բարեկամական ոճը:

«Արդյունավետ» ուսուցման կողմնակից ուսուցիչները հետաքրքրված են միայն սովորողների մտավոր ունակությունների զարգացմամբ: Խստորեն հետևում են ուսուցանվող առարկայի ծրագրի բովանդակությանը: Աշխատում են մանրակրկիտ մշակված ծրագրով,

¹¹⁶ .Арсеньев А.С. Проблема цели в воспитании и образовании, Москва

“Педагогика” 1981г.

խստորեն հետևում նյութի յուրացմանը՝ աշակերտներին ներկայացնելով բավականին բարձր պահանջներ: Վերաբերմունքը սովորողների նկատմամբ պաշտոնական է՝ ոչ մտերմիկ:

Երկու խմբի ուսուցիչների աշխատանքային ոճերը լինելով տարբեր, տարբեր է նաև նրանց գործունեության արդյունավետությունը, որը ինչ որ չափով պայմանավորված է նաև աշակերտների դասի հանդեպ տարբեր մոտեցումներով՝ հուզական և ճանաչողական: Ճանաչողական մոտեցում ցուցաբերող աշակերտների նվաճումները որոշվում են նրանց ստացած գնահատականներով, որոնք էլ վկայում են որքանով լավ կամ վատ է յուրացվել մատուցված նյութը: Սրանով էլ բացահայտվում է աշակերտների ընդունակությունները սովորելու գործընթացում:

Ուսման հանդեպ հուզական մոտեցում ցուցաբերող աշակերտների ուսումնական արդյունքները կարող են լինել դրական, բացասական կամ չեզոք: Այս պարագայում ուսուցչի դասավանդման արդյունավետությունը կարող է պայմանավորված լինել և ուսման հանդեպ հակում ունեցող և տվյալ ուսուցչի դասի հանդեպ դրական վերաբերմունք ունեցող աշակերտներով: Այսպիսով ուսուցչի մանկավարժական վարպետությունը կատարյալ կլինի այն դեպքում, երբ ուսման հանդեպ հակում ունեցող և ի՛ր և ի՛ր առարկայի հանդեպ դրական վերաբերմունք ունեցող աշակերտները միասին կազմեն 100%: Լավ է այն ուսուցիչը, որի աշակերտների մի մասը ուզում է սովորել, մյուսները՝ ուսուցչի օգնությամբ կկարողանան սովորել:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սովորողի անհատական առանձնահատկությունների բացահայտումը մեծապես պայմանավորված է ուսուցչի անհատական-հոգեբանական առանձնահատկություններով:¹¹⁷ Այն ուսուցիչները, ովքեր իրենց մասնագիտական կատարելագործումը չեն կապում «ինքնավստահության» զարգացման հետ (ընդհակառակը՝ մոտենալով մասնագիտական կատարելության ձգտում են ավելի քիչ ինքնավստահության), ավելի դրական են գնահատում սովորողի անհատականությանը: Իսկ այն ուսուցիչները, որոնց մասնագիտական կատարելագործումը

¹¹⁷ Логвинов И.И. Основы дидактики. Учебно-методическое пособие. М.

Московский психолого-социальный институт, 2005 г.

բարձրացնում է նրանց «ինքնավստահությունը», նրանք առավել հաճախ բացասական են գնահատում աշակերտի անհատականությունը:

Վարպետ-ուսուցիչը նա է, ով կատարյալ է և՛ հոգեբանա-մանկավարժական, և՛ առարկայական իմացությամբ, ուստի առավել արդյունավետ է փոխանցում իր մասնագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Գոյություն ունի մանկավարժական գործունեության երկու տիպի արդյունք.

1. մասնագիտական գործունեության գործառնական արդյունք՝ դաս, պարապմունք, մեթոդիկա,

2. մասնագիտական գործունեության հոգեբանական արդյունք՝ հոգեբանական նոր արժեքների ձևավորում:

Մանկավարժական գործունեության հիմնական և վերջնական արդյունքը համարվում է ինքը սովորողը՝ նրա անհատականության, գիտելիքների, ընդունակությունների և կարողությունների զարգացումը:

Ուսուցչի գործիմացությունը պայմանավորված է նրա ներունակությամբ, ինչպես նաև նրա մասնագիտա-մանկավարժական մտածողությամբ:

Մանկավարժական արվեստը այն ժամանակ է արդյունավետ, երբ այն հենվում է մանկավարժական բարձր իրազեկության և վարպետության վրա:

Չնայած այսօր քիչ են նորարար մանկավարժները, բայց նրանց, ում հաջողվում է ուսուցման գործընթացում համադրել հայտնի մեթոդներն ու մեթոդիկան՝ համարվում են վարպետ ուսուցիչներ: Արդեն հայտնի մեթոդներից նոր մեթոդական համակարգի ստեղծումը ևս համարվում է ստեղծագործական դրսևորում (ավանդական և ժամանակակից մեթոդների համադրում): Յուրաքանչյուր դասի կառուցումն ու վարումը պահանջում է ստեղծագործական մոտեցում: Քանզի դասը տարբեր սոցիալ-հոգեբանական իրավիճակներում գտնվող մասնակիցներին նյութի հաղորդման գործընթաց է, որը պահանջում է ուսուցման տարբեր մեթոդներ, դասի վարման տարբեր սխեմաներ: Յու.Կ.Բաբանսկին առաջարկում է մեթոդների կիրառման ժամանակ հաշվի առնել 6 պայման.

1. ուսուցման օրինաչափությունները և սկզբունքները,

2. դասի նպատակը և խնդիրները,
3. դասի բովանդակությունը,
4. սովորողների ընդունակությունները,
5. ուսումնական հաստատության հնարավորությունները,
6. ուսուցչի հնարավորությունները:¹¹⁸

ԱՄՓՈՓՈՒՄ

Դեռևս հնագույն ժամանակներում սկսված և մինչ օրս ձգվող գործընթացը, որի նպատակն է գտնել, ուսումնասիրել, հետազոտել, հայտնագործել և տարածել ուսուցման և դաստիարակության առավել արդյունավետ և զարգացնող մեթոդներ, անավարտ է ու շարունակական: Գործընթաց, որը կտևի այնքան ժամանակ, որքան Երկիր մոլորակի վրա կապրի մարդը: Իր դրսևորման բազմազանությամբ և տևականությամբ հանդերձ՝ այս գործընթացն, այնուամենայնիվ, մեկ նպատակ է հետապնդում՝ նպաստել ուսուցման և կրթության որակի բարձրացմանը՝ ի նպաստ հասարակության զարգացման:

Քննարկվող խնդրի ուսումնասիրությունը թույլ տվեց եզրակացնել, որ ուսուցման գործընթացում առավել բարձր արդյունքներ կարելի է ապահովել, թերևս, «զարգացնող» և «արդյունավետ» ուսուցման տեխնոլոգիաների համադրմամբ:

Հիմնաբաներ. զարգացնող, արդյունավետ, ուսուցում, ուսուցիչ, սովորողներ, դաս, ընդունակություններ, մանկավարժ, մասնագիտական:

¹¹⁸ Բաբանսկի Յու. Կ. §Մանկավարժություն՝ ուսումնական ձեռնարկ
մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար, Երևան, §Լույս՝
հրատ. 1986 թ. 1

THE DIFFERENCE BETWEEN THE RESULTS OF “DEVELOPING” AND “EFFECTIVE” EDUCATION

NAIRUHI SARGSYAN

The results of conducted surveys confirm the of differences in the strategies and tactics of the students' "development" and "performance"-oriented teachers.

“Development-oriented” teachers pay attention to the varying factors of academic achievement; focused on "performance", looking to the achievement of stable factors in learning processes.

Ideally, the highest level of teaching skills should be characterized by the number of students willing to learn, apt to learn and students with a positive attitude to the subject - its being proportion equal to 100 percent.

Key words: developing, effective, training, teacher, student, lesson, ability, trainer, professional.

РАЗНИЦА РЕЗУЛЬТАТОВ “РАЗВИВАЮЩЕГО” И “РЕЗУЛЬТАТИВНОГО” ОБУЧЕНИЯ

НАИРУИ САРГСЯН

Результаты наблюдений подтверждают существование различий в стратегиях и тактиках учителей, ориентированных на “развитие” и на “результативность” учащихся.

Учителя, ориентированные на “развитие” обращают внимание на изменчивые факторы учебных достижений; учителя, ориентированные на “результативность” обращают внимание на устойчивые факторы достижения в учебе.

В идеале самый высокий уровень педагогического мастерства преподавателя должен характеризоваться тем, что число студентов склонных к обучению, желающих обучаться и число положительно относящихся к предмету приравнивается к ста процентам.

Ключевые слова: развивающее, результативное, обучение, учитель, учащиеся, урок, способности, педагог, профессиональный.

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ՆՈՒՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

«Բարեփոխել աշխարհը նշանակում է բարեփոխել դաստիարակությունը»

Յանուշ Կորչակ

Դպրոցին ներկայացվող ժամանակակից պահանջներին զուգընթաց տարեցտարի փոխվում ու բարդանում են նախադպրոցական հաստատություններում երեխաների գործունեությունը կազմակերպող մանկավարժների առջև դրված հոգեբանամանկավարժական ու մեթոդական պահանջները: Հայտնի է, որ կրթությունը գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերման, յուրացման և դրանց հիման վրա գիտական աշխարհայացքի, բարոյական, անձնային որակների ձևավորման, ստեղծագործական ընդունակությունների զարգացման գործընթաց է: Դա հիմնականում, տեղի է ունենում փորձի միջոցով, որն ազդեցություն է թողնում մարդու մտածելակերպի, գործողությունների, զգացողությունների վրա: Կրթությունը նաև միջոց է, որով հասարակությունը գիտակցաբար իր կուտակած գիտելիքները, ունակությունները, ավանդույթներն ու արժեքները փոխանցում է սերնդեսերունդ: Մանկավարժները և երեխայի հետ շփվող բոլոր մեծահասակները պետք է հիշեն, որ կյանքի 5-6-րդ տարում երեխայի ֆիզիկական, մտավոր և հոգեկան զարգացումը էական փոփոխություններ է կրում, զարգանում է խոսքը, մտածողությունը: Կարևոր է դառնում նրա հաղորդակցումը հասակակիցների հետ: Ճիշտ ու արդյունավետ կրթությունը երեխային դարձնում է ստեղծագործ, բազմակողմանի զարգացած անհատ: «Ինչպե՞ս դաստիարակել ներդաշնակ անհատականություն» հարցին պատասխանում էին դեռ Վերածննդի ժամանակաշրջանում, երբ կրթությունը միայն արտոնյալների մենաշնորհն էր: Էրազմ Ռոտերդամցին, Ֆրանսուա Ռաբլեն, Միշել դե Մոնտենը գիտեին, որ լավ ուսուցիչը հասկանում է երեխայի հոգեբանամանկավարժական պահանջները և հավատում նրա ուժերին: 17-րդ դարում չէիս

ականավոր մանկավարժ, դասախոս Յան Կոմենսկին ընդգծում էր, որ անհրաժեշտ է երեխայի մեջ սեր արթնացնել ուսման նկատմամբ՝ օգտագործելով զգացմունքները, գիտակցությունը և հավատը: Ժան-ժակ Ռուսոն դաստիարակության հիմքը համարում էր ազատ զարգացումը, իսկ ըստ Մարիա Մոնտեսորիի, երեխան ի ծնե ազատության և ինքնադաստիարակման պահանջ ունի: Դիտարկումների արդյունքում նա հանգում է այն եզրակացության, որ երեխաների ինքնաբուխ ակտիվությունն այդ միջավայրում բացահայտում է նրանց զարգացման ներքին ծրագիրը, իսկ մանկավարժի համապատասխան խնդիրն է չեզոքացնել այդ բնական զարգացման խոչընդոտները և հնարավորություն ստեղծել դրա շարունակական զարգացման համար: Ըստ Մոնտեսորիի, դաստիարակությունը կոչված է զարգացնել երեխայի կամքը, որն անձի կայացման կարևորագույն գործոնն է: Պեստալոցցիի կրթամանկավարժական տեսությունն ընդհանուր առմամբ հանգում է հետևյալ սկզբունքներին, որ ցանկացած ուսուցում պետք է հիմնված լինի դիտարկման ու փորձի և դրանից հետո միայն վերջիններիս հիման վրա արված ընդհանրացումների ու եզրակացությունների վրա, ուսուցման գործընթացի հիմքում պետք է լինի մասնավորից դեպի ընդհանուրը աստիճանական անցումը, ուսուցման հիմքը դիտողականությունն է և առանց դրա հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել, զարգացնել մտածողությունն ու խոսքը, անհրաժեշտ է պայքարել խոսքի մակաբույծ դրսևորումների (վերբալիզմ), վերացական ու ճոռում արտահայտվել (գրել, խոսել) սովորեցնող կրթության դեմ, ուսուցումը պետք է նպաստի գիտելիքների կուտակմանը, և միևնույն ժամանակ զարգացնի սովորողի մտավոր ունակությունները, մտածողությունն ու դատողունակությունը:

Սակայն միայն 20-րդ դարում մանկավարժ-նորարարների շնորհիվ այդ գաղափարները զանգվածային տարածում և կիրառում ստացան, իսկ ավանդական կրթօջախը սկսեց լսել երեխայի կարծիքը: Ժամանակի ավանդական կրթության մասին պատկերացումները փոխած ամենահայտնի ուսուցիչների նորարար մոտեցումների և մեթոդաբանության շնորհիվ կրթություն ստանալը դարձավ ոչ միայն օգտակար, այլև հաճելի գործընթաց:

Ավագ նախադպրոցական շրջափուլը բնութագրվում է ակնառու-պատկերային մտածողությամբ, հիշողության, երևակայության և այլ հոգեկան գործընթացների գերակայությամբ: Ընդլայնվում են ճանաչողական հետաքրքրությունները և կարողությունները, որոնք նպաստում են դպրոցական ուսումնառության կազմակերպմանը, ես-ի հաստատմանը: Հոգեբանների և մանկավարժների կարծիքով երեխաները շատ վաղ են

սկսում հետաքրքրություն ցուցաբերել ուսման նկատմամբ: Վիգոտսկու, Բոժովիչի, Ուսովայի, Տիխենայի ուսումնասիրությունները վկայում են, որ նախադպրոցական տարիքում միանգամայն հնարավոր է գրաճանաչությունը: Գրաճանաչության ուսուցման նոր մեթոդների ստեղծման գործում մեծ նշանակություն են ունեցել Ֆրիդրիխ Գեդիկեն, Հայնրիխ Ստեֆանին, որոնց ստեղծած մեթոդիկայի հիմքում ընկած էին հնչյունների համադրումը դեպի նոր ամբողջական միավորը՝ նախադասությունը կամ այդ միավորը վերլուծելու միջոցով դեպի խոսքի տարրական մասնիկները գնալու գիտակցության սկզբնավորումը: Բնականաբար այսօր գրաճանաչության նախապատրաստումը մանկապարտեզում ստացել է նոր որակ:

«Հոգեբանական տեսանկյունից,- գրում է Օ.Ի Սոլովյովան,- գրագիտության նախապատրաստական շրջան կարելի է համարել խոսքի ձևավորման նկատմամբ նոր վերաբերմունքը»:¹¹⁹ Գիտակցության առարկան հենց խոսքն է, նրա արտաքին հնչյունային կոդը: Օ.Ի Սոլովյովան նշում է, որ բանավոր խոսքի հիմքը բառի հնչյունային վերլուծությունն է. երեխաները գրեթե ծանոթ են նախադասությանը, բառին, վանկին, հնչյունին:

Գրագիտության ուսուցման նախապատրաստման հիմնական նպատակներն ու խնդիրներն են նախակրթարաններում հնչյունային վերլուծական-համադրական մեթոդով երեխաների նախապատրաստումը գրաճանաչությանը: Հմուտ ուսուցիչը, հիմք ընդունելով վերլուծական-համադրական մեթոդի սկզբունքներն ու էությունը, 5-6 տարեկան երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ու նրանց գրաճանաչությանը նախապատրաստելու աստիճանը, ուսումնասիրելով «Դաստիարակությունը մանկապարտեզում» ծրագրում երեխաներին գրաճանաչության ուսուցմանը նախապատրաստելու աշխատանքի բովանդակությունը, երեխաներին ծանոթացնում է նախադասությանը, նախադասությունը բառերի վերլուծելու և բառերից նախադասություններ կազմելու / համադրելու/ կարողությանը: Այնուհետև երեխաներին

¹¹⁹ Օ.Ի Սոլովյովա, Խոսքի զարգացման մեթոդիկական և մայրենի լեզվի ուսուցումը մանկապարտեզում, 3 հրատ., Մ., 1966, էջ 27:

ծանոթացնում է բառերի հնչյունային կազմի հետ, օգնում է երեխաներին յուրացնել բառ և հնչյուն տերմինները:

«Եթե առանձնացնենք երեխաների գրագիտության նախապատրաստման գործընթացի հիմնական, համընդհանուր խնդիրը («այն դառնում է մի ուսումնասիրության առարկա»), ապա գրաձանաչությունը պետք է սկսել ոչ թե նախապատրաստական խմբում, այլ ավելի վաղ, նաև նախորդ խմբերում: Դիդակտիկ խաղերով պետք է մշակել հնչյունային խոսքը, հաճախ կրկնվող հնչյունները, դրանց ճիշտ արտասանությունը մասնավորապես ձևավորել ուշադիր լսելու կարողությունը...»:¹²⁰ Նախադպրոցական հաստատություններում երեխաների գրագիտության ուսուցման, դաստիարակչական, կրթական աշխատանքները բարելավելու նպատակով անհրաժեշտ է կիրառել բառի հնչյունային կողմի ուսուցման մեթոդիկան, երեխաներին ծանոթացնել բառի հնչեղության առանձնահատկություններին՝ հնչեղության տևականությանը, հնչյունների հաջորդականությանը և այլն, նրանց սովորեցնել առանձնացնել հնչյունները բառերի մեջ, որոշել հնչյունների հաջորդականությունը: «Բառն ունի հնչեղություն /сложное звучание/: Բառերը հնչեղությամբ կարող են լինել նման և տարբեր»:¹²¹ Հետևաբար, գրագիտության ուսուցման հիմք է հանդիսանում երեխայի ընդհանուր զարգացումը, խոսքի խնդիրները: Փորձերը ցույց են տվել, որ այն երեխաները, որոնք տիրապետում են խոսքին, հեշտությամբ են յուրացնում քերականությունը: Խոսքային վերլուծությունները, սեփական խոսքային գործունեության գիտակցումը, խոսքի ազատ ձևավորումը կարևոր գործոն են ուսուցման համար: Դա նաև դպրոցին հոգեբանորեն նախապատրաստելու կարևոր գործոն է: Խոսքի ձևավորման և գրագիտության ուսուցման ցուցանիշներն են հետևյալ ունակությունները՝ ուշադրությունը սևեռել խոսքային խնդրին, ազատ կազմել մտքերը, մտածել, գնահատել խոսքը: Բանավոր խոսքում յուրաքանչյուր բառի նշանակություն կոդավորվում է խոսքի հնչյունների որոշակի համալիրում: Դ. Բ. Էլկոնին իր ուսումնասիրություններում եկել է այն եզրահանգման, որ կարդալու ուսուցումը առավել հեշտ է բառերի վանկային վերլուծություն կատարելով, քանի որ վանկը բնական արտա-

¹²⁰ Ֆ.Ա. Սոխին, Նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի զարգացումը, 1976, էջ 12-13:

¹²¹ Սոնյա Հարությունյան, Ծրագիր, Խոսքի զարգացման և գրաձանաչության ուսուցման մեթոդիկա, 1986, էջ 24:

հատչականության միավորն է: Կարդալու ընթացքում վանկատումը դժվարություն չի ներկայացնում: Այսօր կիրառվում են Դ.Բ. Էլկոնինի մեթոդը, Վ.Գ. Գորգեցու, Վ.Ա. Կիրյուշկինի, Ա.Ֆ. Շանկոյի հնչյունավանկային մեթոդները: Այս մեթոդների հիմքում ընկած է կարդալու տեքստային սկզբունքը, օրինակ՝ տուն, տար, տիր, տեղ բառերի մեջ հնչյունների արտաբերումը փոխվում է կախված նրանից, թե ինչ հնչյուն է իրենից հետո: Երեխան պետք է կարդանա արտաբերել ձայնավոր և բաղաձայն հնչյունները բառերի մեջ: Կարդալու մեխանիզմի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է մեծ նշանակություն տալ երեխայի հնչյունային լսողության զարգացմանը, որը մարդկային խոսքի հնչյուններն ընկալելու ընդունակությունն է: Մանկան խոսքի զարգացման մի շարք ուսումնասիրությունները / Ա.Ն. Գվոզդև, Վ.Ի. Բելտյուկով, Ն.Խ. Շվաչկին, Գ.Ս. Լյամինա / ցույց են տվել, որ հնչյունային խոսքը շատ վաղ է զարգանում: 2 տարեկան երեխան արդեն որոշակիորեն տիրապետում է մայրենի լեզվին: Հնչյունային լսողության զարգացումը, լեզվի մեջ երեխայի կողմնորոշման ձևավորումը, հնչյունային վերլուծություն-համադրություն կատարելու ունակությունը, ինչպես նաև խոսքի և լեզվի նկատմամբ գիտակցական վերաբերմունքի զարգացումը գրագիտության նախապատրաստման հիմնական խնդիրներն են: Գրագիտության ուսուցման խնդիրը մանկավարժությունում բարձրացվել է 1944 թ. Ռուսաստանում, երբ դպրոցական ուսուցումը սկսվում էր 7 տարեկանից: Մինչ 1962 թ. նախադպրոցական դաստիարակության ծրագրում այդ հարցը չի դրվել: 1962 թվականին ծրագրում « Գրագիտության ուսուցում » բաժինը, որտեղ նախատեսվում էր և կարդալու և գրելու ուսուցումը: 1970-ական թվականներին ծրագրի քնարկումից հետո մի շարք պատճառներով արգելվեց գրավոր ուսուցումը և մնաց միայն գրաձանաչությունը՝ Դ.Բ. Էլկոնինի համակարգի հիման վրա: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 5 տարեկան երեխան տիրապետում է խոսքի հնչյունային կողմին, և հենց այս տարիքն էլ կարելի է համարել բարենպաստ տառաձանաչության համար: 4-5 տարեկանում երեխան գործնականում ծանոթանում է «բառ» և «հնչյուն» տերմիններին. դրանք կարող են կիրառել վարժությունների, խոսքային, բառային խաղերի ընթացքում: Երեխան ծանոթանում է կարճ բառերին, ձայնավոր, բաղաձայն հնչյուններին: 5-6 տարեկան երեխան սովորեցնում է կատարել բառի հնչյունային վերլուծությունը, տեղին կիրառել սովորած տերմինները: «Բառ» տերմինը երեխան յուրացնում է 4-5 տարեկանում, հաղորդակցման ընթացքում, բառապաշարի ակտիվացման, հարստացման միջոցով: Դաստիարակը պետք է հաճախակի կրկնի հետևյալ արտահայտությունները. «Լսիր՝ ես ինչպես եմ արտասանում այս բառը», «Ճիշտ արտասանի՝ ը այս բառը» և այլն: Կարելի է օգտվել գրական ստեղծագործություններից,

հեքիաթներից, խաղերից, օրինակ՝ «սև սպիտակ», «ասա հակառակը», «գտիր նմանը», «հեռախոս» և այլն: Երեխայի ուշադրությունը պետք է դարձնել բառի բովանդակության ընկալմանը՝ առարկա, հատկանիշ, գործողություն: Ֆ.Ա. Սոխինը գտնում է, որ բառի իմաստը պետք է երեխայի գիտակցությանը հասցնել, օրինակ՝ գրն և դակ-ը ոչինչ չեն նշանակում, իսկ միասին իմաստավորվում են: Նախադասության հետ ծանոթացման ժամանակ նախ անհրաժեշտ է նախադասությունն առանձնացնել խոսքից, օրինակ՝ նկարով պատումի ժամանակ առանձնացնել պատմվածքի յուրաքանչյուր նախադասությունը: Բացատրել, որ ամեն մի նախադասություն ունի իր միտքը: Առաջարկել կազմել նախադասությունները և կազմել նախադասության գծապատկերը: Նախադասության մասին պատկերացումներն ամրապնդելու համար առաջարկվում են հետևյալ հնարները՝ տրված բառերով կազմել նախադասություններ, վերնագրել նկարը, փոքրիկ պատմություն հորինել, տրված երկու նկարներով կազմել մեկ նախադասություն և այլն: Ծանոթացումը նախադասության բառակազմի հետ նորից կարելի է կատարել գծապատկերների միջոցով: Ուսուցումը սկսվում է պարզ նախադասություններից՝ 2-3 բառ. Օրինակ՝ Տիկնիկը քնեց: Տիկնիկը խաղում է: Նախադասությունների վերլուծության ժամանակ կիրառվում են դիդակտիկ-գործնական մեթոդները և հնարները՝ խաղալիքների դիտում, խաղալիքների հետ կատարվող գործողությունների դիտում, նկարի դիտում, տարածական մոդելավորում, միաժամանակ աշխատանք է տարվում նախադասությունները կազմելու ուղղությամբ: Ուսուցման հիմքում ընկած է նախադասությունների ճիշտ արտասանությունը, ձայնով բառերի առանձնացումը, դրանց քանակի և հերթականության որոշումը, քանի բառ կա, որն է առաջինը: Սկզբնական շրջանում, խաղերի հետ գործողությունները կատարելիս, երեխաներին ցույց է տրվում, որ յուրաքանչյուր խաղալիքի մասին կարելի է ասել մի քանի նախադասություն, օրինակ՝ Տիկնիկը պառկած է: Տիկնիկը ճաշում է: Տիկնիկն արթնացավ: Կարելի է նախադասությունները կրկնել երեխաների հետ. թույլ տալ, որ նրանք ինքնուրույն կազմեն նախադասությունները: Նախադասությունները կազմելու համար օգտագործում ենք գծապատկերներ: Դաստիարակը գրատախտակին պատկերում է նախադասությունների գծապատկերներն ու բացատրում, որ նախադասությունները կարելի է նկարել, որպեսզի հասկանանք, թե այնտեղ քանի բառ կա: Գրատախտակին պատկերում է նախադասության գծապատկերը և նշում, որ այստեղ կա 3 գիծ, նշանակում է նախադասության մեջ կա 3 բառ: Մեծ տարածում է գտել Ֆ.Ա. Սոխինի և Գ.Պ. Բելյակովայի կողմից մշակված «կենդանի բառեր» խոսքային խաղը: Նախադասության մեջ կենդանի բառեր են երեխաները: Խաղի ընթացքում դաստիարակը կանչում է այնքան երեխա, որքան բառ կա նախադասության մեջ

և յուրաքանչյուր երեխայի ասում է, թե նա որ բառն է, հետո «կենդանի բառերը» հերթականությամբ կանգնում են ձախից աջ և կազմում են ստացված նախադասությունը: Խաղում անընդհատ «կենդանի բառերը» կարող են փոխվել՝ ընդգրկելով շատ երեխաներ: Ծանոթացում է տրվում նաև բառի վանկային կազմին: Ընթերցանության նախապատրաստումը ենթադրում է վանկերով, այլ ոչ թե տառերով կարդալու ունակության ձևավորում: Բառի վանկային կազմի հետ ծանոթացման խնդիրը կայանում է նրանում, որ երեխաները գիտակցեն բառի վանկային կազմը, դրանց հաջորդականությունը բառի մեջ և քանակը, կարողանան տրված վանկերով բառեր կազմել: Այս խնդիրների իրականացման համար երեխային պետք է սովորեցնել, որ վանկը խոսքի բառաստեղծման և արտահայտչական միավոր է: Այս ամենի հետ մեկտեղ բառի վանկային կազմի յուրացումը նույնպիսի բարդ գործընթաց է, որքան նախադասության վերլուծությունը: Ուսուցման սկզբնական շրջանում կիրառվում են երկվանկանի բառեր՝ կա-տու, գըն-դակ, առ-յուծ: Երեխաները այդ բառերը լսում են համապատասխան նախադասություններում, կրկնում են դրանք: Այնուհետև երեխաներին առաջարկվում է ասել, թե բառի մեջ նրանք քանի վանկ են լսել: Դաստիարակը հենվում է ոչ միայն երեխաների լսողական ընկալման, այլև տեսողական ընկալման վրա «քանի անգամ բերանը բացվեց բառն արտասանելիս», ինչպես նաև շոշափելիքի ընկալման համար երեխաներին առաջարկում է ձեռքի ավեր, դեպի ներքև դնել դնչի տակ և արտասանել բառը. որքան դունչը կպչի ձեռքին, բառում այնքան վանկ կա: Այստեղ բառի գծապատկերը ևս գծվում է գրատախտակին: Այն ունի հորիզոնական գծի տեսք, որը ուղղահայաց գծով բաժանված է այնքան մասի, որքան վանկ ունի տվյալ բառը: Ողջ ուսումնական գործընթացում կիրառվում են բառի մեջ վանկերի քանակի և հերթականության որոշման հնարները: Այս խնդիրների իրագործման համար կիրառվում է «կենդանի վանկ» խոսքային խաղը, որը նախորդ խաղի նման է և իրականացվում է նույն կերպ. այստեղ ևս երեխաները հանդես են գալիս «կենդանի վանկի» դերում: Կիրառվում են նաև տրված վանկերով բառեր կազմելու վարժությունները՝ տրված բառերում վանկերի տեղերը փոխել և ստանալ նոր բառեր, օրինակ՝ մուկ-կում, շուն-նուշ, մատ-տամ և այլն: Ֆ.Ա. Սոխինին, Լ.Է. Ժուրովայի և նրանց աշակերտների կողմից մշակվել է երեխաների կողմից բառի հնչյունային կողմի յուրացման հերթականությունը: Երեխաների կողմից բառի հնչյունային կողմի հետ ծանոթացումը սկսվում է կրտսեր և միջին խմբերում, երբ հնչյունային կուլտուրայի դաստիարակության ընթացքում վարժությունների և խոսքային խաղերի միջոցով երեխաները սովորում են պարզ և հասկանալի արտասանել հնչյունները, արտասանել որոշակի հնչյուններ պարունակող բառեր, դրանք արտասանել ձայնի տարբեր ուժգնությամբ:

Երեխաները բանաստեղծական հանգերում սովորում են արտասանել որոշակի հնչյուններ, սովորում են նաև նկատել կրկնվող հնչյունը: Աստիճանաբար յուրացնում են «հնչյուն» բառի նշանակությունը: Բառը հնչյունային վերլուծության ենթարկելու խնդիրն իրականացնելիս նախ՝ պետք է երեխաներին սովորեցնել բառն ընդունել ոչ թե որպես հնչյունների համադրություն, այլև առանձին հնչյունների համակարգված ամբողջություն: Հետագայում ուսուցանվում է նաև արտասանել առանձին հնչյունները և անվանել բառի առաջին հնչյունը, ինչպես նաև արտասանել հատուկ հնչողությամբ՝ կոշտ և փափուկ հնչյուններ՝ կոշտ հնչյուններն անվանելով «բարկացած», իսկ փափուկ հնչյունները՝ «բարի»: Ավագ նախադպրոցական տարիքում խնդիր է դրվում ձևավորել հնչյունային վերլուծության ունակությունը: Սկզբում իրականացվում է միավանկ բառերի վերլուծություն՝ տուն, շուն, գետ, կետ և այլն: Դրանց վերլուծություններից հետո խորհուրդ է տրվում սովորեցնել տարբերակել ձայնավոր և բաղաձայն հնչյունները: Պետք է բացատրել, որ ձայնավոր հնչյունները արտասանելիս բերանում խոչընդոտներ չեն առաջանում, ոչինչ «չի խանգարում»՝ ոչ լեզուն, ոչ ատամները, ոչ շրթունքները: Բաղաձայնների ուսուցման ժամանակ սովորեցնում ենք, որ բաղաձայն հնչյունները երգեցիկ չեն և դրանց արտասանության ժամանակ ինչ-որ բան «խանգարում է»: Երեխաները կարողանում են նախկինում վերլուծության ենթարկած բառերից առանձնացնել բաղաձայն և ձայնավոր հնչյունները: Այս խնդրի իրականացման համար իրականացվում են մի շարք խոսքային խաղեր օրինակ՝ «ասա տրված հնչյունով բառ», «գտիր քո տունը», «ով է ավելի ուշադիր», «բառերի շղթա»:

«Մանկապարտեզի նախապատրաստական խմբում գրագիտության ուսուցման հիմնական նպատակն է երեխաներին սովորեցնել կազմել նախադասություններ երկուսից չորս բառերով, վերլուծել նման բառային համակարգ ունեցող նախադասությունը բառերի, վերլուծել երկվանկ բառերը, վերլուծել բաց վանկերով եռավանկ բառերը /մե-քե-նա/ և կազմել բառեր այդ վանկերով, երեխաներին մոտեցնել բառի հնչյունային վերլուծության: Գործնական վարժությունների միջոցով ամրապնդում ենք պատկերացումները նախադասության, բառի, վանկի, հնչյունի վերաբերյալ, լեզվաբանական, տեսական բնորոշումներ չեն տրվում»:¹²²

¹²² Ֆ.Ա. Սոխին, Նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի զարգացումը,

1976, էջ 166:

ԱՍՓՈՓՈՒՄ

Գրագիտության ուսուցումից հետո երեխաները դառնում են «փոքրիկ լեզվաբաններ», զգում և հասկանում են լեզվաբանական ամենապարզ ձևերը, ճիշտ արտասանում են բառերը, կառուցում նախադասություններ՝ դրանցով արտահայտելով գեղարվեստական ստեղծագործություններ: Այս ամենն անհրաժեշտ է դպրոցում արդյունավետ ուսուցման համար, երեխայի անհատականության համապարփակ զարգացման համար:

Հիմնաբառեր. հնչյուն, տառ, վանկ, բառ, նախադարձական տարիք, մեթոդներ, դաստիարակություն:

ОБУЧЕНИЕ ГРАМОТНОСТИ В ДОШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ

НУНЕ МКРТЧЯН

Основные задачи подготовки к обучению грамоте, которые решаются в подготовительной к школе группе детского сада, состоит в обучении детей составлять предложения из двух – четырех слов, членить предложения такого же состава на слова, членить на слоги двух, трехсложные слова с открытыми слогами и составлять слова из слогов. В практических упражнениях закрепляются представления детей о предложении, слове, слоге, а также о звуке; лингвистические, теоретические, определения не даются.

Ключевые слова: звук, письмо, слог, слово, дошкольный возраст, методы, воспитание.

TEACHING OF LITERACY AT PRE-SCHOOL AGE

NUNE MKRTCHYAN

The aim of teaching literacy at pre-school group of nursery is the way of teaching children how to make sentences in two or four words, to analyse the sentence consisting the proper word-system, to analyse words consisting three syllables in an open syllable, to make sentences with those syllables, to make children understand the phonemic analysis of the word. With the help of practical exercises we enforce our imagination of the sentence, word, syllable, phoneme. There are not given any linguistic characteristics.

Keywords: literacy, letter, phoneme, syllable, word, methods, upbringing, pre-school age.

ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՐԵԳԻՐՔ

2017

ЮСИСАПАЙЛ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ЕЖЕГОДНИК

2017

HYUSISAPAYL

Collected Scientific Articles

YEARBOOK

2017

Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Համակարգչային ձևավորումը՝ Ի. Մարուխյան

Տարեգրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է Հյուսիսային համալսարանի www/northern.am պաշտոնական կայքում:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆

Տպագրություն օֆսեթ՝ 7.6 մամ.

Տպաքանակ՝ 120

Տպագրված է՝ Ա/Ձ «Արսեն Ժամհարյան» տպարանում

Երևան-25, Ալեք Մանուկյան 128